


ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ. Ա.



ԱՆՅՅԱԼԸ ՄԵՁ ՀԵՏ Է.  
ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ,  
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տպագրվում է «Կաճառ» գիտական կենտրոնի գիտխորհրդի  
որոշմամբ

Печатается по решению Ученого совета Научного  
центра «Качар»

Հրատարակվում է Հայոց մեծ եղեռնի 100-րդ և Շուշիի մարտ-  
յան ողբերգության 95-րդ տարեկիցների առթիվ

Издается к 100-летию Геноцида армян и 95-летию  
мартовской трагедии города Шуши

Նվիրվում է Թուրքիայի ու Ադրբեջանի ցեղասպանական քա-  
ղաքականության անմեղ զոհերի հիշատակին

Посвящается памяти невинных жертв  
геноцидальной политики Турции и Азербайджана

АРУТЮНЯН М. А.

**ПРОШЛОЕ С НАМИ:  
ПЕРЕОЦЕНКА,  
РАЗМЫШЛЕНИЯ...**

**ИЗДАТЕЛЬСТВО НАУЧНОГО ЦЕНТРА «КАЧАР»  
ШУШИ 2015**

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ. Ա.

**ԱՆՑՅԱԼԸ ՄԵՉ ՀԵՏ Է.  
ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ,  
ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**«ԿԱԳԱՍ» ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՇՈՒՇԻ 2015**

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(2Հ)

Հ 422

**Հարությունյան Մ. Ա.**

Հ 422 Անցյալը մեզ հետ է. վերագնահատումներ, խորհրդածություններ/  
Մ. Ա. Հարությունյան; Խմբ.՝ Վ. Մ. Ավանեսյան.-

Շուշի: «Կաճառ» գիտական կենտրոն, 2015.- 96 էջ:

Գրքույկը նվիրված է Թուրքիայի կողմից իրականացվող արմենոցիդի քաղաքականության դրսևորումներից թուրքերի (թաթարների) և հայերի միջև ընդհարումների 110-րդ, Հայոց մեծ եղեռնի 100-րդ և Շուշի քաղաքի կործանման 95-րդ տարելիցներին: Շուրջ երկու և կես տասնամյակ ուսումնասիրելով թեման, հեղինակը հանգել է մի շարք կարևոր եզրակացությունների Շուշիի աղետի պատճառների, զինված ինքնապաշտպանության կազմակերպման ու մարտավարության ընտրության, ռազմական գործողությունների վարման, պատմագրության հիմնահարցերի մասին և կատարել մի շարք ճշգրտումներ: Մասնավորապես, ցույց է տրվել, որ թուրքերից ու քրդերից կազմված կանոնավոր զորքերի, նրանց կցագրված ավագակախմբերի նախահարձակմանը հայերը պատասխանել են ինքնապաշտպանությամբ, ինչը Ադրբեջանի քարոզչությունը ներկայացրել է որպես ապստամբություն, հետևանքը պատճառի նենգափոխելու միջոցով միջազգային հանրությանը մոլորեցնելու և երբեմնի ծաղկուն Շուշի քաղաքի ավերումն ու հայ բնակչության կոտորածն արդարացնելու նպատակով: Այս դրույթի գիտական շրջանառության մեջ դնելը պահանջված է հատկապես Հայոց մեծ եղեռնի 100-րդ և Շուշիի աղետի 95-րդ տարելիցներին, որովհետև մեր պատմագրության մեջ դեռ հանդիպելի ու ակամա շրջանավորում են ադրբեջանաթուրքական քարոզչության ու պատմության նենգափոխման արդյունքում ի հայտ եկած կեղծիքները:

Գրքույկը նախատեսված է ընթերցողների լայն հասարակայնության համար: Այն կարող է նաև օգտակար լինել ուսուցիչներին, գաղափարադաստիարակչական աշխատանքներով զբաղվող սպաներին ու կրտսեր հրամանատարներին, ուսանողներին:

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 978-9939-1-0159-0

© Հարությունյան Մ. Ա., 2015

## ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱԲԵՆ

### **Ադրբեջանի պետական ահաբեկչության և էթնիկական գոտումների քաղաքականությունը ենթակա է դատապարտման**

Ադրբեջանի պետական ահաբեկչության ու էթնիկական գոտումների քաղաքականությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան շրջաններում առաջուր միջազգայնորեն չի դատապարտվել, իսկ արյան ու ավերածությունների միջոցով ստեղծված այդ պետությունը պատասխանատվության չի ենթարկվել: Անպատժելիության զգացումը Ադրբեջանի դեկավարության ոճրագործ ձեռքերին ազատություն է տվել նորից նախճիրներ նյութելու բնիկ ժողովուրդների դեմ, բարբարոսաբար ոչնչացնելու նրանց ստեղծած քաղաքակրթային արժեքները: Այսպես կոչված՝ Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության կարճատև գոյությունն անհամեմատելիորեն հարուստ է պատերազմների սանձազերծումով, բռնություններով, ավազակային հարձակումներով ու կողոպուտներով, էթնիկական գոտումներով և բնիկներին պատկանող պատմաճարտարապետական կոթողների զանգվածային ոչնչացումով: Թուրքական սվինների օգնությամբ ստեղծված այդ խամաճիկային պետությունն ինքնահռչակման օրից՝ 1918 թ. մայիսի 27-ից ի վեր Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան շրջաններում իրականացնում է պետական ահաբեկչության քաղաքականություն, դառնալով ցեղասպանության թուրքական քաղաքականության կույր գործիքը: Այդ քաղաքականության սահմոկեցուցիչ դրսևորումները Հարավային Կովկասի ողջ տարածաշրջանի պատմության մոռյլ էջերն են կազմում: Դրանցից հատկանշելի են Բաքվի 1918 թ. և Շուշիի 1920 թ. եղեռնագործությունները: Իր պատմական հայրենիքից հայ ազգաբնակչության բռնի տեղահանության քաղաքականության շուրջ 70-ամյա անպատիժ գործադրումն այսօր հայրենագրկել է կես միլիոնից ավելի ադրբեջանահայերի, մարդկային ու մշակութային վիթխարի և անդառնալի կորուստների պատճառ դարձել: Բայց այդ ամենին քաղաքական գնահատական չտալը, չդատապարտելը և հանցագործ Ադրբեջանին պատասխանատվության չենթարկելը հանգեցրել են նրան, որ այդ պետությունն այսօր դարձել է տարածաշրջանի ամենաազդեցիկ, սպառազինությունների մրցավազրով և նոր պատերազմ սանձազերծելու մոլուցքով տա-

ուսանող մի անկանխատեսելի ու վտանգավոր կազմավորում, պատերազմի մշտական օջախ, որը սպառնում է հարավ-կովկասյան տարածաշրջանի անվտանգությանը, միջազգային կառույցների տնտեսական, քաղաքական և տարածաշրջանային այլ ծրագրերի իրականացմանը: Այդ սպառնալիքը հատկապես ակնհայտ է հայկական կողմի համար, քանզի տասնամյակների փորձը վերջինիս օգնում է ավելի լավ ճանաչելու խարդախ հարևաններին, կանխատեսելու նրանցից եկող վտանգը: Միաժամանակ, դա մեզ իրավունք է տալիս դիմելու զինված ինքնապաշտպանության, ինչպես արդեն դա արել ենք XX դարի 90-ականների սկզբներին Ադրբեջանի նախահարձակմանը դիմագրավելու ժամանակ կամ էլ կանխարգելիչ հակահարված հասցնելու սահմանագծում հակառակորդի դիպուկահարների ու դիվերսիոն-հետախուզական խմբերի շղաղարող սադրանքների ու ոտնձգությունների զսպման նպատակով: Իսկ համաշխարհային ուժային կենտրոնները, կաշկանդված իրենց հակասական շահերից և կուրացած ադրբեջանական քարոզչամեթոդային կեղծիքների խաբուսիկ ցուլից, դեռևս հապաղում են բռնել պանթորքական զառանցանքներով տառապող ոճրագործի ձեռքը, դատապարտել պատերազմի սպառնալիքներով ու հրադադարի ռեժիմը խախտելով, զանազան սադրանքներով իրավիճակը սպակայունացնելու և խաղաղարար գործընթացը տապալելու Ադրբեջանի քաղաքականությունը: Առաջընթացի հասնելու համար հայկական կողմի անելիքները ևս շատ են, մասնավորապես, որ ճշմարտությունը տեղ հասցնելու համար պահանջվում է երկարատև ու անդադար պայքար: Այս տեսակետից կարելի է հատկանշել նաև հասարակության ակտիվության գործոնը: Այդ դաշտում կարելի է առանձնացնել Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը դատապարտելու և միջազգային հանրությանը դրա անհրաժեշտությունը ներկայացնելու «Կաճառ» գլխավոր կենտրոնի նախաձեռնությունները: Արդեն իններորդ տարին է, ինչ Շուշիում Կենտրոնի կողմից կազմակերպվում են զանազան միջոցառումներ՝ նվիրված 1920 թ. մարտյան ողբերգության հերթական տարելիցներին: Յեղասպանություն վերապրած մեր հայրենակիցների սերունդների նպատակը ոչ միայն Ադրբեջանի պետական ահաբեկչության ու էթնիկական զտումների քաղաքականության դատապարտումն է, այլև միջազգային հանրությունից, նախ և առաջ, Ադրբեջան-ԼՂՀ հակամարտության կարգավորման գործընթացում ներգրավված պետություններից նույնն ակնկալելն

ու պահանջելն է:

Այսպես կոչված՝ Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության կողմից ծրագրված ու կազմակերպված Բաքու և Շուշի քաղաքների հայ բնակչության ջարդերը և Արցախի երբեմնի ծաղկուն մայրաքաղաքի հրկիզումը էթնիկական զտման ադրբեջանական քաղաքականության հերթական դրսևորումներն էին, ոչ միայն արմենոցիդի թուրքական քաղաքականության շարունակությունը, այլ նաև ոտնձգություն ամբողջ մարդկության ու ժողովրդավարության դեմ: Կազմակերպված միջոցառումների մասնակիցները դատապարտել են Ադրբեջանի ոճրագործությունները և վստահություն են հայտնել, որ միջազգային հանրության կողմից այդ երկրի պետական ահաբեկչության ու էթնիկական զտումների շարունակվող քաղաքականության դատապարտումը կամ դրան համարժեք քաղաքական, իրավական գնահատական տալը կարող են դառնալ նման հակամարդկային դրսևորումների կանխարգելման ամենաարդյունավետ միջոցը:

Ներկայիս Ադրբեջանը, լինելով Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության իրավահաջորդը, և օգտվելով անպատժելիությունից, որդեգրել է իր նախորդի ոճրագործ քաղաքականությունը: Դրա վկայությունն են հանդիսանում 1987-91 թվականների ադրբեջանահայության ջարդերը և բռնատեղահանությունները, ագրեսիայի նախաձեռնումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ, իսկ ներկայում՝ սահմաններ փակելով, հրադադարի ռեժիմը պարբերաբար խախտելով, խաղաղարար գործընթացին խոչընդոտելով պատերազմի ու սպառնալիքների մրցավազքի մշտական հրահրումը:

Թուրքիայի ու Ադրբեջանի ցեղասպանական քաղաքականությունը վերապրածների սերունդները դատապարտում և անընդունելի են համարում քաղաքական հիմնախնդիրները բիրտ ուժի միջոցով լուծելու՝ այդ երկու կազմավորումների քաղաքական գիծը: Թեև մեր ժողովուրդը միշտ էլ կարծել է, թե միայն քաղաքակիրթ ճանապարհով կարելի է լուծել պետությունների միջև վիճահարույց հիմնախնդիրները, սակայն պատմությունը սովորեցնում է, որ ծառացած խնդիրները պետք է լուծել ապավինելով սեփական ուժերին, մեր ազգի բազկի ու մտքի հավաքական գործությանը: Ուստի, Շուշիի հայերի հանդեպ եղեռնագործության 95-րդ և Արևմտյան Հայաստանի ու Թուրքիայի տարածքում հայ ազգաբնակչության ցեղասպանության 100-րդ տարելիցներին մեր ժողովուրդը միջազգային հանրությունից ընդամենն ակնկալում է դատա-

պարտել Ադրբեջանի՝ տասնամյակներ շարունակվող հակահայկական գործողությունները ու բոլոր հնարավոր միջոցներով այդ երկրի ավտորիտար իշխանություններին հետ պահել Հարավային Կովկասի անվտանգությանը մշտապես սպառնալու անմիտ մարտավարությունից: Կամ՝ զոնե համակողմանիորեն աջակցել Ադրբեջանի ագրեսիվությունը զսպելու կարևոր առաքելությունն արդեն ավելի քան երկու տասնամյակ իրականացնող Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը և նրա փառապանծ Պաշտպանության բանակին...

Անթույլատրելի է այք փակել մաս ամենաբարձր մակարդակով Նախիջևանում իրականացվող հայկական մշակութային արժեքների ոչնչացման վրա: Երբ ծայրահեղական իսլամիստները Միլիայում գազանաբար ոչնչացնում են մշակութային համամարդկային արժեքները, առավել քան զգացվում է Նախիջևանում ադրբեջանցիների կողմից հայկական բացառիկ խաչքարերի ջարդուփշուր անելու նախադեպը և վանդալիզմի այլ գործողությունները դատապարտելու, ինչպես նաև Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը:

Նախիջևանյան թեման շարունակությունն է Ադրբեջանի պետական ահաբեկչության ու էթնիկական զտումների քաղաքականության մերկացման և Արցախի հետ սերտորեն առնչվում է ինչպես Ադրբեջանի հետ հակամարտության համատեքստում, այնպես էլ այն անուժով, որ հենց Նախիջևանի ողբերգական ճակատագիրը մղեց Արցախի հայ ազգաբնակչությանը պարզելու պայքարի դրոշը՝ Ադրբեջանի ոճրագործ քաղաքականությունից ինքնապաշտպանվելու նպատակով: 1920 թ. մարտյան ողբերգությանը զոհ գնացին նաև ժամանակին Ազուլիսից Շուշի տեղափոխված մեր հայրենակիցները, ուստի Արցախի ոստանի ու Նախիջևանի կապը ոչ միայն պատմականորեն է, այլ նաև նույն ոճրագործ քաղաքականությանը ենթարկվելու դժբախտությունն ունենալու տեսանկյունից:

Շուշիի մարտյան ողբերգության 95-րդ տարելիցի առթիվ այս գրքույկի հրատարակումը նպատակ ունի ևս մեկ անգամ բարձրաձայնել Արցախի երբեմնի ոստանում Ադրբեջանի կազմակերպած հայերի կոտորածների մասին, միջազգային հանրության ուշադրությունը սևեռել հիմնահարցի վրա և իրավասու մարմինների ուշադրությանը ներկայացնել սահմանված ընթացակարգով համապատասխան միջազգային ատյաններ դիմելու և Ադրբեջանին իրավական ու քաղաքական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը:

Շուշիում Ադրբեջանի կողմից կազմակերպված ոճրագործությունները հայ ազգաբնակչության նկատմամբ ցեղասպանության տասնամյակներ շարունակվող քաղաքականության հերթական դրսևորումն էին և բացահայտում են Ադրբեջանի ահաբեկչական, ագրեսիվ ու անմարդկային բնույթը: Մեր օրերում, երբ տեղաբնիկների ցեղասպանության միջոցով ձևավորված Ադրբեջանի ղեկավարները բարձր ամբիոններից ճամարտակում են ժողովրդավարական արժեքների մասին, պետականորեն կազմակերպված ու իրագործված ոճրագործությունների համար ցինիկորեն մեղադրում դրանց զոհ գնացած հայերին, ավելի քան հրատապ է, մանավանդ՝ ներկայում լայն թափ ստացած տեղեկատվական պատերազմի պայմաններում, անցյալի ողբերգական իրադարձությունների վերաիմաստավորումը, դրանց համարժեք գնահատական տալը և, դրանով իսկ Ադրբեջանին դիմակազերծ անելը:

## 1905-1906 ԹԹ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թուրք-հայկական արյունահեղ հակամարտությունը, որը, մեր կարծիքով, սկզբնավորվել է Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում այդ քոչվոր-նվաճողների հաստատման ջանքերով, մեր հայրենիքի արևելյան եզրերներում վերստին բորբոքվեց 1905-1906 թվականներին, երբ ռուսական առաջին հեղափոխությունից օգտվելով թուրք-թաթարներն արյունալի բախումներ հրահրեցին հայերի հետ<sup>1</sup>: Թեև այդ ողբերգական դեպքերի մասին շատ է գրվել ու խոսվել, բայց դրանց պատճառների ու դասերի մասին հարցը երբեք չի կորցրել իր արդիականությունը:

Անդրկովկասում 1905 թ. փետրվարից մինչև 1906 թ. օգոստոս տեղի ունեցած թուրք-հայկական ընդհարումները հետևանք էին պատմաքաղաքական, ազգային-էթնիկական, սոցիալ-տնտեսական, կրոնամշակութային և այլ պատճառների: Այն ժամանակվա վերլուծաբաններն ու հետագա ուսումնասիրողները հաճախ ծանրացել են այս կամ այն պատճառի վրա՝ դրանք մեկ ամբողջության մեջ դիտարկելու փոխարեն:

<sup>1</sup> Ա - ԳՈ, Հայ - քարաքանդակ ընդհարումները Կովկասում 1905 - 1906 թթ., Եր., 1907, Ա - ԳՈ, Հայ - քարաքանդակ ընդհարումները Չանգեզուրում (1905-1906 թթ.), Եր., 1996, Ադայան Ճ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Եր., 1976, Արամայիս, Մի քանի գլուխ հայ-քարաքանդակ ընդհարումներից, մաս 1-2, Թիֆլիս, 1907, Բալայան Վ., Արցախի պատմություն, Եր., 2002, Գևորգյան Հ., Նիկոլ Դուման, Եր., 2001, Գևորգյան Հ., Դրո: Դրասարանայր Կանայանի կյանքն ու գործունեությունը, Եր., 2007, Գրիգորյան Հ., Միաբեկությունը որպես ազգային ազատագրական պայքարի ձև (XIX դարի վերջ-XX դարի սկիզբ), Իրա՝ Հայոց ցեղասպանությունը (ուսումնասիրություններ), Եր., 2001, էջ 77-109, Գյուլիանյան Ա., Հայ-քարաքանդակ ընդհարումները, հար 1, Փարիզ, 1933, Գանիկյան Է., Մերոնյան Ա., Հայոց պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Եր., 2008, Գևորգյան Տ., Հայ-քարաքանդակ ընդհարումները 1905-1906 թվականներին, Եր., 2006, Դրո: Կենսագրական: Հուշեր: Վկայություններ, Եր., 1999, Եղյան Ս., Ռուսրոմի դերը Ղարաբաղի ինքնապաշտպանության կազմակերպման գործում (1905-1906թթ.), «Կրթությունը և գիտությունը Արցախում», 2006, ք. 1-2, էջ 93, Թարխանյան Գ., Հայ-քարաքանդակ ընդհարումները Շուշի քաղաքում և զավտում (1905 -1906 թթ.), «Դրոշակ», 2001, ք. 3, էջ 104 - 114, Թարխանյան Գ., Ռուսրոմի նամակները և զեկուցումը 1905-1906-ի հայ-քարաքանդակ ընդհարումների մասին, «Դրոշակ», 2001, ք. 4, էջ 101-104, Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հար. Բ, Փարիզ, 1935, Կարապետյան Բ., Շուշի քերթաքարը, Եր., 2000, Հայ ժողովրդի պատմություն, հար. 6, Եր., ԳԱ հրատ., 1981, Հայրենիք և ծառայություն, Ռուսումնական չեռնարկ, Եր., 2001, Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշարակները, հար. Գ, Գ, Թեհրան, 1982, Սիմոնյան Հր., Թուրք - հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991, Սիմոնյան Հր., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 1, 2, Եր., 2003, Ուլուքբաջյան Բ., Արցախի պատմությունը (սկզբից մինչև մեր օրերը), Եր., 1994:

Մասնավորապես, առանձնացվում էին հայերի և թուրքերի (թաթարների) սոցիալ-տնտեսական, լեզվացեղային յուրահատկությունները, կրոնական անհանդուրժողականությունը, հասարակական-քաղաքական հակոտնյա հայացքների անհամատեղելիությունը և այլն:

Տնտեսական ընդհարումները գլխավոր պատճառ համարող հեղինակները զարգացնում էին երկու տեսակետ. ա) Արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի օրինակով, որտեղ կատարվող կողոպուտների ու սպանությունների պատճառը համարվում էր մարդկանց ապրուստի միջոցներից զրկվելը, այսինքն՝ պրոլետարացումը, անդրկովկասյան դեպքերը ևս որակվում էին քաղաքացրակ թուրք (թաթար) բնակչության պրոլետարացման արդյունք, բ) հատկապես խառը բնակչություն ունեցող երկրներում տնտեսական մրցակցության արդյունքում գերիշխող ազգի նկատմամբ հետ մնացող ազգերը ատելությամբ ու նախանձով են լցվում:

Սակայն, ինչպես իրավացիորեն նկատել է խնդրո առարկա թեման հիմնավորապես ուսումնասիրած ակադեմիկոս Հր. Սիմոնյանը, «տնտեսական տեսությունների անտեղի ու երբեմն անհեթեթ կիրառումներով անգիտակցաբար վարագուրվում է ոճիրը, մի կողմ է թողնվում ոճրագործների հոգեբանությունը, նրանց բարբարոսական բնավորության դրսևորումները, որոնք արդյունք են տվյալ ժողովրդի պատմական զարգացման առանձնահատկությունների<sup>2</sup>»:

Բնավ չժխտելով տնտեսական գործոնի դերը թուրք-հայկական ընդհարումների պատճառների ամբողջության մեջ, նկատի ունենանք մի շարք փաստարկներ, որոնք ակներևաբար չեն տեղավորվում, այսպես կոչված՝ տնտեսագիտական տեսությունների շրջանակներում: Այսպես օրինակ, հայտնի է, որ XX դարի սկզբներին դեռևս մահմեդականները գերիշխող էին կավածատիրության բնագավառում, հետևաբար, մահմեդական գյուղացիությունը տնտեսական հիմքեր չունեի թշնամանալու հավասարապես կեղեքվող հայ գյուղացիների հետ: Մինչդեռ թուրք (թաթար) և մահմեդական այլ քոչվորների ու հայ ազգաբնակչության միջև անվերջանալի վեճեր ու ընդհարումներ էին տեղի ունենում արոտավայրերի և ալպյան մարգագետինների համար, քանի որ քոչվորները ուզում էին տիրանալ, ինչպես ժամանակակիցն է նշում, Մաավի, Քյափազի և

<sup>2</sup> Սիմոնյան Հր., Ազատագրական պայքարի ուղիներում. չորս գրքով, Գիրք 2-րդ, Եր., 2003, էջ 68

մյուս արտավայրերին, իսկ հայերը նրանց քշում էին այդ կողմերից<sup>3</sup>:

Ինչ վերաբերում է հայ նավթարդյունաբերողների կողմից այդ ոլորտում տնտեսական կարևոր լծակների զգալի մասին տիրելու, առևտրարդյունաբերական, բանկային և այլ հաստատություններ հայկական կապիտալի տիրույթների մեջ ներառելու փաստին, ապա սույն Բաքվի օրինակով էր համապատասխանում իրականությանը: Երբ թուրք-թաթարական վայրենությունների ալիքը տարածվեց նաև Անդրկովկասի այլ գավառներում, որտեղ ոչ միայն հայ բուրժուազիա ու կապիտալիզմ չկային, այլև գերիշխում էին թուրք(թաթար) կալվածատերերը կամ աղայական դասակարգը, տնտեսական պատճառը կամ գործոնը կորցրեց իր գլխավոր ու եզակի դերը: Արդեն իսկ այն ժամանակ այլևս կասկածներ չմնացին առ այն, որ թուրք-հայկական ընդհարումների հիմնական պատճառները ոչ այնքան սոցիալ-տնտեսականն էին, որքան ազգային-ցեղային հոգեբանությունը, մահմեդական արմատական գաղափարախոսությունները և, ընդհանրապես՝ քաղաքականը:

Հարկ է նշել, որ տնտեսական հողի վրա հակասությունները միայն թուրքերի հետ չէին, այլ նաև վրացիների (հատկապես՝ Թիֆլիսում) և ռուսների: Այսպես, ցարական իշխանությունները մտավախություն ունենալով, որ հայերը կարող են գերազանցել ռուսներին, վարում էին հայերի տնտեսական առաջադիմությանն ըստ ամենայնի խոչընդոտելու քաղաքականություն:

Ուշագրավն այն է, որ ցեղային, հոգեբանական, մշակութային պատճառների վերլուծությունը նախ ձեռնարկեցին հենց օտարները, մասնավորապես՝ եվրոպացիները: Ինչպես արդեն նկատել են հայ ուսումնասիրողները, «The Times», «Frankfurter Zeitung» և այլ ազդեցիկ թերթեր վեր էին հանում թուրքի՝ իր միջավայրում մի տեսակ անախրոնիզմ (ապաժամություն, այսինքն՝ ժամանակին չհամապատասխանող և հակառակ բան) լինելու ակնհայտ իրողությունը<sup>4</sup>:

Այսպես, Լոնդոնի «The Times» լրագիրը դեռևս 1905 թ. սեպտեմբերի 25-ին ուղղակի գրում էր թաթարների «գիշատիչ բնազդների» (the Predatory instincts of the tatars) մասին, որոնք, նրա կովկասյան թղթակցի օբյեկտիվ կարծիքով, «ռուսական կառավարության ոճրագործ քաղա-

քականության հետ» եղել են «աղետների գլխավոր պատճառները»:

Իսկ ահա թե ինչ էր գրում «Matin» - ի թղթակից Գասթն Լըրուան, ով նույնպես հատուկ առաքելությամբ գնացել էր թուրք-հայկական պատերազմի քատերաբեմը, 1905 թ. սեպտեմբերի 22-ի թվակիր նամակում. «Անդունդ է բաժանում երկու ցեղերը... Հակադիր ազգ[ակց]ություններ, ներհակ բնազդներ և քաղաքակրթության մի իդեալ, որին մեկը հետապնդում է, իսկ մյուսը ետ է մղում...»<sup>5</sup>:

Ռուսաստանի ժողովրդավարական ուղեգիծ ունեցող թերթերը ևս ցարական իշխանությունների մեղսակցության մասին չարչրկված արտահայտություններից, տնտեսական ու քաղաքական պատճառներից դուրս սկսեցին տեսնել նաև մտավոր, հոգեբանական, ցեղային-մշակութային պատճառները: Մասնավորապես ժամանակի պարբերական մամուլը գրում էր, որ ռուս հասարակությունը միամտաբար թուրքերի անցյալն անդարձ էր համարել, բայց հիմա, երբ Կովկասի մի ծայրից մյուսը հեղեղված է սարսափներով, նա զարհուրանքով տեսնում է, որ ողջ ծավալով զարթնել են նրանց անցյալի բնազդները, թևեր առել ավարառության տենչը: Ուշագրավ է, որ ռուսական մամուլը մարդասպանությունը, իբրև թուրք-թաթարների միջավայրում սովորական համարվող երևույթ, դիտարկում էր որպես նրանց ցեղային հոգեբանության և նկարագրի տիպիկ արտահայտություն: Մարքսիստ հեղինակներից մեկը իրավացիորեն նկատել է, որ քաղաքակրթական ցածր աստիճանի վրա գտնվող անդրկովկասյան թաթարը, վրեժխնդրության հողի վրա կատարած սպանությունը ոչ միայն չի համարում ոճրագործություն, այլև դիտում է որպես առաքինություն<sup>6</sup>: Հիրավի, այս հանգամանքն օգտագործվել է մահմեդական հոգևորականների կողմից՝ տգետ զանգվածների մոտ կրոնական մոլեռանդությունը բորբոքելու և ոճրագործության գազանային բնազդները գրգռելու համար:

Կովկասի ոստիկանության պետ, գեներալ Շիրինկինը 1906 թ. Պետերբուրգ՝ ոստիկանական դեպարտամենտի պետին հասցեագրված հույժ գաղտնի մի գրության մեջ նշում էր, որ անդրկովկասյան թաթարների կամ, ավելի ճիշտ, թուրքերի մուսուլմանական ընդհանուր մոլե-

<sup>5</sup> Մեջբերված է՝ Վարանդեան Միր, Հ. Յ. դաշնակցության պարմունքներ. հյր. Բ, հրատ. Բ., էջ 56 (հմմտ.՝ Միմոնյան Հր., նշվ. աշխ., էջ 76):

<sup>6</sup> Филипов, О преступности Закавказского населения. «Тифлисский Листок», no. 121, 1906 г. (մեջբերված է՝ Միմոնյան Հր., նշվ. աշխ., էջ 79):

<sup>3</sup> Шу «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», том 7-ой. Тифлис, 1897, стр. 34.

<sup>4</sup> Шу Միմոնյան Հր., նշվ. աշխ., էջ 76:

ուանդությունն ընդդեմ քրիստոնյաների, ընդհանրապես, բարդանում էր դեպի հայերն ունեցած յուրահատուկ ատելությամբ, մասամբ որպես՝ մուսուլմանական երկրները քրիստոնեական պետությունների կողմից նվաճման, իսլամի ստորացման և իրենց ինքնուրույնության կորստի համար մեղավորների: Անդրկովկասի նվաճման գործում Թուրքիայի դեմ Ռուսաստանի հետագա պատերազմներում հայերի դերը մահմեդականները չեն կարողանում մոռանալ: Ճակատագրական իրադարձությունները (խոսքը 1905-1907 թթ. հեղափոխության ու անիշխանության մասին է - Մ. Հ.) իսլամի ստորացման համար վրեժը ներկայումս հայերից լուծելու ցանկալի պահ էին նախապատրաստել: Նրանց այդ ձգտումը սրբագործվում էր կրոնով: Դուրանի պատվիրանները կատարվում են ապշեցուցիչ ճշտությամբ: Ամենուր թաթարները հարձակվում են «Յա Մուհամմեդ, յա Ալի» ճիչերով, կրոնական դրոշմերով, բացեիքաց հայտարարելով, որ իրենց կողմից հայերին «սրբազան պատերազմ» է հայտարարված:

Դրան հետևում են գեներալի օբյեկտիվ դատողությունները ազգամիջյան կոտորածներում պանիսլամիզմի չարաղետ դերակատարության վերաբերյալ: Նա իր վերադասի ուշադրությունն էր հրավիրում այն փաստին, որ պանիսլամական միտումներն ու քարոզչությունը ամենաբարենպաստ հող են գտել Կովկասի թուրքերի մոտ: Չանգվածների շրջանում անփոփոխ կերպով պահպանվող մուսուլմանական մոլեռանդությունը ամբողջ ուժով բորբոքվում է պանիսլամիստների և պանթուրքիստների կողմից: Յարական պաշտոնյան չէր թաքցնում նաև այն փաստը, որ տեղի վարչակազմը իշխանությունների աչքի առջև թույլ տվեց ամբողջ քրիստոնեական աշխարհի դեմ թշնամաբար տրամադրված, մոլեռանդ թաթարական ամբոխի մոբիլիզացումը, որը, փաստորեն, արդեն տիրապետող է երեք նահանգներում, քանի որ հայ ազգաբնակչության օազիսները իրենցից ներկայացնում են թաթարական տիրապետման սահմաններում պաշարված բնակավայրեր<sup>7</sup>:

Բազմաթիվ փաստերով ապացուցված է ցարական իշխանությունների կողմից մահմեդական մոլեռանդ ամբոխին ցուցաբերված աջակցությունը: Դա կարելի է բացատրել մի շարք հանգամանքներով: Նախ՝ Կովկասի կառավարչության թուրքամետ քաղաքականությունն է հա-

մապատասխան մթնոլորտ ու պայմաններ ստեղծել: Երկրորդ՝ ցարական պաշտոնյաները խաբվելով մահմեդականների հետամնացությամբ, նրանց ավելի վստահելի ու գահին հավատարիմ տարր էին համարում, քան հայերին: Այդ մասին ցավով գրում էր նաև գեներալ Շիրինկինը, նշելով, որ «Կովկասի թուրքերի լկտի արարքները թելադրված էին նաև այն հանգամանքով, որ Կովկասի փոխարքայության նահանգներում մուսուլմանական շարժման մեջ ընդգրկված աստիճանավոր սուլիկանների բացարձակ մեծամասնությունը թաթարներ էին, ինչն արդյունք էր երկրամասի նախկին կառավարողների թուրքամետ քաղաքականության<sup>8</sup>»: Փաստորեն, ռուսական արքունիքի քաղաքականության նպատակն էր հայերին տկարացնել՝ մուսուլման թուրքերին նրանց հակադրելու միջոցով, ինչպես թուրքական սուլթանը արևմտահայերին տկարացնելու նպատակով նրանց դեմ էր հանում քրդերին:

Թուրքերին աջակցելու մյուս բացատրությունն այն է, որ 1903 թ. հունիսի 12-ի օրենքի համաձայն հայ եկեղեցու կալվածքները հարքունիս գրավելու և հայկական դպրոցները փակելու դեմ հայ ժողովրդի պայքարը գրգռել էր իշխանություններին: Այդ մասին ահա թե ինչ էր գրում Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը Նիկոլայ Բ-ին ուղարկված զեկուցագրում. «Պետական գանձարանի օգտին հայ եկեղեցու գույքի ու կապիտալի բռնագրավմանը մասնակցություն ունեցած անձանց դեմ կատարված ահաբեկչական գործողությունները հայ ժողովրդի դեմ գրգռեցին ամբողջ կովկասյան պաշտոնեությանը»: Հայերի նկատմամբ վարչախմբի գործողությունները փոխարքան բնութագրում էր կտրուկ ձևակերպմամբ՝ «թշնամական ու կոլմնակալ»: Այնուհետև Վորոնցով-Դաշկովը կատարում էր ուշագրավ եզրակացություն. «Ինքնին հասկանալի է, որ այդ տրամադրությունները չէին կարող աննկատ մնալ Կովկասի այն ժողովուրդների ներկայացուցիչներից, որոնք երբեք հատուկ համակրանք չեն տածել հայերի հանդեպ, որպես՝ տնտեսապես գերազանցող մի ազգ, որը մշտապես, առօրյա դրացիության մանրուքներում իսկ, զգալ է տալիս իր գերազանցությունը, հատկապես տեղական մուսուլմանների հանդեպ, որոնք չէին կարող այդ դեպքում չիշխել իրենց նախնիների ունեցած պատմական թշնամանքը հայ բնակչության նկատմամբ<sup>9</sup>»:

<sup>7</sup> Российский государственный исторический архив в Санкт-Петербурге /РГИА СПб/, фонд жандармских дел, оп. 2, д. 2 (մեջբերված է՝ Սիմոնյան Հր., նշվ. աշխ., էջ 105-106):

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 100:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 113:

Հիրավի, թուրք-հայկական ընդհարումներում մեծ է պատմական թշնամանքի գործոնը: Մեր կարծիքով, 1905-1906 թթ. թուրք-հայկական ընդհարումները հենց պետք է դիտարկել այդ երկու էթնոսների դարավոր հակամարտության համատեքստում, որի առանցքը կազմում են Հայկական լեռնաշխարհում թուրք զավթիչների վերջնականապես հաստատվելու անիրականանալի քաղաքականությունը և բնիկ հայ ժողովրդի ինքնապաշտպանությունն ու հակազդեցությունը:

Մեր այս կարծիքը հաստատվում է ցարի հանձնարարությամբ Բաքու քաղաքի և Բաքվի նահանգի փետրվարյան դեպքերի քննությանը ձեռնամուխ եղած սենատոր Կուզմինսկու հաշվետվության մեջ ուշագրավ այս դիտարկմամբ. «Յուրաքանչյուրին, ով ծանոթ է Անդրկովկասի երկրամասի մուսուլմանական նահանգների կենցաղային պայմաններին, լավ հայտնի է, որ հայերն ու թաթարները երբեք չեն եղել բարյացակամ հարաբերությունների մեջ իրենց կրոնական և ցեղային զանազանությամբ: Այս երկու ազգությունները համատեղ ապրելով անդրկովկասյան քաղաքներում և գյուղերում և կապված լինելով պատմականորեն դրսևորված հանգամանքներով՝ միայն անհրաժեշտությունից դրդված՝ բացեիքաց չեն արտահայտում թշնամությունը միմյանց նկատմամբ, առաջին հայացքից ապրում են համերաշխ և նույնիսկ կատարում են դրամական և ապրանքային գործարքներ»: Մենատորի համոզմամբ՝ «մուսուլմաններին հատուկ կրոնական Ֆանատիզմը և նրանց մշտական կախավածությունը հայերից առևտրական ու փողային ոլորտներում միշտ արթնացնում են անվստահություն միմյանց նկատմամբ և թաքնված չարություն, որոնց արտահայտման համար հաճախ բավական է ամենաչնչին պատճառը՝ հայերի և թաթարների մեջ լուրջ բախումներ բռնկվելու համար: Այդպես է ցույց տալիս Անդրկովկասի քրեական քրոնիկոնը<sup>10</sup>»:

Շարադրելով իր գլխավորած հանձնաժողովի վերհանած բոլոր հանգամանքները և դատողությունները, դրանց հիման վրա սենատորը եզրակացրել էր. «...փետրվարյան դեպքերն ունեին ազգային-կրոնական և տնտեսական բնույթի դրդապատճառներ. հեղափոխական շարժումը նրանց համար ստեղծեց բավականին բարենպաստ հող, իսկ իշխանության անգործությունը թույլ տվեց նրանց սահմանները հասցնել

<sup>10</sup> Միմոնյան Հր., Ազարագրական պայքարի ուղիներում. յոթ գրքով, Գիրք 1-ին, Եր., 2003, էջ 143

սարսափելի չափերի<sup>11</sup>»:

Թուրք-հայկական ընդհարումների ծավալմանը զուգընթաց, ինչպես իրավացիորեն նկատել է Թ. Վարդանյանը, թաթարների շրջանում հասունանում էին Անդրկովկասում տարածքային միասնության և Ռուսաստանից անջատվելու ձգտումները: «Թաթարների շրջանում ի հայտ էին եկել էթնիկ ինքնության ձևավորման, ազգային ինքնագիտակցության արթնացման ու հայրենիքի փնտրտուքի միտումներ: Թաթար արմատականներն ու ազգայնամուլները առաջ էին քաշում գրեթե ողջ Անդրկովկասի տարածքի վրա ինքնավարություն ստանալու ծրագրեր, որոնք, ի դեպ, համահունչ էին այդ տարածաշրջանը թուրքացնելու և Ռուսաստանից անջատելու Թուրքիայի պանիսլամիստական քաղաքականությանը: Լինելով գործնականում այդ ծրագրի դրսևորումը, թուրք (թաթարա)-հայկական ընդհարումներն առիթ էին թաթարների կողմից էթնիկ զտման և տարածքային կենտրոնացման քաղաքականության իրականացման համար»<sup>12</sup>:

Այսպիսով, 1905-1906 թթ. թուրք-հայկական ընդհարումները հայերի պատմական հայրենիքում հաստատվելու թուրքերի հերթական ձախողված փորձն էր և հայկական քաղաքակրթության ու թուրքական արյունոտ ծավալապաշտության ու ռեակցիայի միջև արդեն քանի դար շարունակվող պայքարի փուլերից մեկը: Այդ ոչ հեռու անցյալի իրադարձությունները հուշում են, որ պետք է ցանկացած պահի պատրաստ լինել զսպելու մեր հարևանների արյունառուշտ բնազդները, որոնք անսքող ու անդադար բորբոքվում են ներկայիս Ադրբեջանում ու Թուրքիայում: Իսկ դրա համար մենք ազգովի պարտավոր ենք լինել երիցս միական ու հզոր բոլոր առումներով... Կարևոր հետևություններից մեկն էլ այն է, որ համատեղ պետության և ուղղաձիգ հարաբերությունների վերաբերյալ վերացական գաղափարները երբեք չեն կարող իրագործվել, որի մասին ահազանգում է պատմությունը...

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 152:

<sup>12</sup> Տես Վարդանյան Թ., Տարածքային կենտրոնացման գործընթացները 1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների լույսի ներքո: «Ռուսը Արարարի» (Համաձայն կազմակերպության պարբերական), րիվ 4, 2005, էջ 10:

**ԱՐՄԵՆՈՑԻԳԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ  
ՀՐԱՄԱՅՆԿԱՆԸ. ՊԱՏԱՌԱՎԱՐՔԱՎԱՆ ԳԱՍԵՐԸ,  
ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱԶՈՂՎԱԾ ՓՈՐՉԸ**

Արդեն հարյուր տարի է, ինչ պահանջատեր հայ ժողովուրդն անդադրում հետամտում է պատմական արդարության վերականգնմանը: Երկարատև ու դժվարին պայքարը տվել է իր առաջին արդյունքը. բազմաթիվ երկրներ ճանաչել ու դատապարտել են քսաներորդ դարի առաջին ցեղասպանությունը, որին միայն 1915-ին զոհ է գնացել մեկ և կես միլիոն հայ: Իսկ 1895-1923 թվականների շարունակական ջարդերի ու էթնիկական գտումների անմեղ զոհերի թիվը մի քանի միլիոն է...

Բազմաթիվ երկրների առաջադեմ հասարակություններն այդ մեծ ոճիրը իրավամբ համարում են ոչ միայն հայ ժողովրդի, այլև համայն մարդկության դեմ գործված հանցագործություն, որը վաղեմության ժամկետ չունի: Մեր ժողովուրդը համոզված է, որ մի օր կգա հատուցման պահը և թուրք ոճրագործների նյութերը կկայանա... Մակայն, դեռ երկար ճանապարհ ունենք անցնելու, ազգովի: Եվ այդ երկար ճանապարհին մեզ անհրաժեշտ է լինելու հիշել անցյալի դասերը: Չէ՞ որ անցյալը սոցիալական կյանքի կուտակած փորձի մարմնացումն է: Մեր ժողովրդի՝ դարերի ընթացքում կուտակած փորձի ընդհանրացումն ու վերախմաստավորումը երիցս անհրաժեշտ են մանավանդ ցեղասպանության 100-րդ տարելիցին<sup>1</sup>: Միայն այդ ճանապարհով կարելի է գտնել արդիականության ամենահրատապ հարցերի պատասխանները: Այս առումով՝ ցեղասպանության պատմությունը ոչ միայն մեր ժողովրդի հիշողությունն է, նրա կենսագրության մռայլ էջը, այլ նաև ներկայի վրա ներազդող և ապագան ուրվանշող հզոր գործոն:

<sup>1</sup> Թեմային մեր կողմից անդադարչներ եղել են նաև նախկինում. տես Մեծ եղեռն-80.- «Մարտիկ», 21-27.04. 1995 թ., հիմ. 16, էջ 1, Ի՞նչ է մեզ հուշում Հայոց մեծ եղեռնը.- «Մարտիկ», 19-24 ապրիլ, 2004 թ., հիմ. 17(571), էջ 4, Արևելոցիոյի քաղաքականության ուղիները և արտաքինության արտապելը (Շուշիի մարտիկների շրջանում 85-րդ տարելիցի առթիվ), «Ազատ Արցախ», 24 մարտի 2005, հիմ. 34(1703), նույնը՝ «Մարտիկ», 19-26 մարտի 2005, թիվ 11(618), էջ 4 և գիտական տարբերակը՝ «Լրարու» (Գիտական հոդվածների ժողովածու), Սյր., 2008, հիմ. 1, էջ 71-78, Отступление от полноты арменоцида и миф о Восстании (К годовщине мартовской трагедии в Шяшу). «Azat Arcax», 26 марта 2005, no. 20(489), стр. 4, Վերաբերել Հայոց մեծ եղեռնի քաղաքական դասերի մասին, Հայաստան-Արցախ պայմանության և արդիականության գույքահեռներում (հոդվածների ժողովածու), գիրք առաջին, Սյր., «Դիզակ պլյուս», 2009, էջ 40-43, Շուշի-1920 թ.՝ պետականորեն կազմակերպված անարդարության ու էթնիկական գրտումների հերթական զոհը, «ԼՂՀ դատական իշխանություն», N 1(5), 2012, էջ 23-30, Մեծ եղեռնի պարմարաբանական մի քանի դասերի մասին, «Հայաստանի Հանրապետություն», 25 ապրիլի 2014 թ., հիմ. 73, էջ 5 և այլն:

Այդ ողբերգական իրադարձության վերախմաստավորումը կարևոր է հատկապես պատմական դասերի վերհանման առումով: Անտեսելով դրանք, մենք կարող ենք դատապարտվել ցեղասպանության ողբերգությունը վերստին ապրելուն: Հենց այս մտահոգությամբ էլ Արցախի հայ ազգաբնակչությունը մայրաքաղաք Ստեփանակերտում և հանրապետության այլ բնակավայրերում հերթական տարելիցի առթիվ իր հարգանքի տուրքն է մատուցում Հայոց մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին և վերստին փաստում ցեղասպանության հետևանքների վերացման ու հանուն պահանջատիրության անդադար պայքարելու իր վճռականությունը:

Ներկա սերունդը գիտակցում է, որ հզոր և բարգավաճ պետականության կերտումը Հայրենատիրության առաջին և կարևոր փուլն է, Հայոց ցեղասպանության հետևանքները հաղթահարելու՝ մեր ժողովրդի բարոյական պարտքի կատարման, Եղեռնի միջազգային ճանաչման ու դատապարտման, ինչպես նաև Թուրքիային պատասխանատվության ենթարկելու երաշխիքը: Այնուհանդերձ է, որ առանց ազգային պետականության հնարավոր չէ կանխել ցեղասպանության վտանգը: Պետականության կորստի աղետալի հետևանքների գիտակցումը մեզ պետք է աչալուրջ պահի, անպայման գերակայի քաղաքական հովերին:

Թվում է, թե հասկանում ենք, որ դարեր շարունակ մեր ժողովրդի ճախողումների հիմնական պատճառը նրա միասնականության, համախմբվածության խաթարումն է եղել: Նաև գիտակցում ենք, որ պատմականորեն հատվածական հոգեբանություն ձեռք բերած մեր ժողովրդի պարագայում բազմակուսակցականությունը և այլախոհությունը, մանավանդ, եթե դրանք խաբսխված են անհանդուրժողականության ու հիվանդագին մրցակցության վրա, աղետալի հետևանքներ կարող են ունենալ: Բայց դեռևս չենք հանգել այն համոզմանը, որ համաժողովրդական համախմբումը պետք է կատարվի ազգային մեկ գաղափարի կամ գաղափարախոսության շուրջ, որի առանցքը կարող է լինել ամուր պետությունը, Հայոց մեծ եղեռնի հետևանքների վերացումը կամ Հայրենատիրությունը: Մեր հայրենիքին վերատիրելու դատապարտվածությունը հրամայաբար պահանջում է լինել մշտական պատրաստակա- նության վիճակում, միահամուռ՝ մեր ազգային նպատակներին հասնելու գործում: Մանավանդ, որ պատմությունն էլ համառորեն ապացուցում է, որ ոչ թե օրհասական պահին պետք է համախմբվել՝ վերահաս ողբերգությանը դիմագրավելու, այլ՝ նախօրոք, այն կանխարգելելու,

նրա իրականացմանը խոչընդոտելու համար<sup>2</sup>: Իսկ որպեսզի դա հաջողությամբ պսակվի, պետք է նաև կանխատեսել կարողանալ, ինչի համար էլ հենց կոչված են քաղաքական գործիչները: Քանիցս պատմությունը մեզ ուսուցանել է, իսկ Հայոց մեծ եղեռնի քաղաքական դասը՝ կրկին հուշել, որ միշտ էլ աղետալի հետևանքներ են ունենում օտար տերությունների ողորմածության վրա հույս դնելը, նրանց միջամտության վրա հաշվարկներ կառուցելը: Դասագրքային ճշմարտություն է այն, որ Հայկական հարցը միջազգային դիվանագիտության համար եղել է Թուրքիայի նկատմամբ ճնշում գործադրելու, արտաքին-քաղաքական հարցեր լուծելու միջոց:

Հայոց մեծ եղեռնի քաղաքական գլխավոր դասերից մեկը, թերևս, այն է, որ մեր պահանջատիրության համար պետք է ստեղծենք իրական հիմքեր, այսինքն՝ այն պետք է արտահայտվի մեր ժողովրդի ու պետության հնարավորությունների չափով, բխի մեր ներուժից և ուղիղ համեմատական լինի մեր պատրաստակամությանը: Ցավոք, հաճախ մեր պահանջատիրությունը ուսույթական է եղել, կառուցված օտարի հնարավոր միջամտության (աջակցության) և սխալ հաշվարկների վրա: Այսօր էլ այն մտայնությունն է, թե միջազգային հանրությունը և տերությունները, եթե ճանաչեն Հայոց ցեղասպանության փաստը, մեր պահանջատիրությունը կստանա նյութական-առարկայական հիմք: Բայց դա, ինչպես վկայում է մեր անցյալը, ինքնախաբեություն է, պատրանք, ցանկալին իրականության տեղ դնելու մոլորություն: Ասվածն ամենևին չպետք է հասկանալ որպես թերահավատություն Հայոց մեծ եղեռնի միջազգային ճանաչման հասնելու համար պայքարի հանդեպ, մանավանդ, որ այդ պայքարը, փաստորեն, Ադրբեջան-ԼՂՀ հակամարտությունում Թուրքիայի կողմնակալ մոտեցումներին հակազդելու միջոցներից մեկն է դարձել: Մակայն, հետամտելով այդ քաղաքականությանը, հարկ է զուգահեռաբար և, իհարկե, նաև հնարավորինս՝ առաջանցիկ կերպով մեծացնել Հայոց պետականության ներուժն ու հնարավորությունները, որպեսզի հարկ եղած դեպքում, մեզնից ազդեցիկ ուժ և վճռորոշ գործոն ներկայացնելով, կարողանանք այլևս թույլ չտալ մեր խնդիրը տերությունների միջև հարաբերություններ պարզելու միջոց (գործիք) դարձնելու արատավոր պրակտիկայի նոր դրսևորումներ:

<sup>2</sup> Հարությունյան Մ. Ա., Միասնության գիրագույն արտահայտությունը՝ ինքնիշխան ու ազգային պետությունն է.- Կիս Հայաստան-Արցախ. պարմության և արդիականության զուգահեռներում (հոլովածների ժողովածու), գիրք առաջին, էջ 45-46:

Անհուսալի ու երիցս արդարացված չէ անվերապահորեն որևէ երկրի ռազմական օժանդակությանն ապավինելը, որովհետև օտարը չի կարող պաշտպանել մեր հայրենիքը այնպես, ինչպես՝ մենք ինքներս: Հետևաբար՝ մենք զօր ու զիշեր պետք է նախապատրաստվենք սեփական ուժերով մեր պետականությունը պաշտպանելուն և միշտ աչքի առաջ ունենանք հենց այդ հեռանկարը:

Կասկած չի հարուցում այն, որ վերահաս ողբերգությանը կարելի է դիմագրավել երկարատև ու համառ պայքարի ոգու, հավատի ու ինքնավստահության միջոցով: Ցավոք, այդ որակներն ազգի մեջ դաստիարակելու գերիսնդիքը լուծել չկարողացան ո՛չ հայ քաղաքական կուսակցություններն ու հոսանքները, ո՛չ հայ եկեղեցին ու ո՛չ էլ ազգային կրթական համակարգը: Դա էր, թերևս, հիմնական պատճառը, որ ժողովրդի դիմադրական շարժումը՝ ինքնապաշտպանությունը, տարերային ու տեղաբնույթ էր, ինչն, անշուշտ, բավական չէր այնպիսի մեծ խնդիրների լուծման համար, ինչպիսին Հայրենիքի պաշտպանությունն էր ու ժողովրդի փրկությունը կոտորածներից:

Դժվար չէ նկատել, որ ազատագրական պայքարի կամ համընդհանուր զինված ինքնապաշտպանության մարտավարությունը, ըստ էության ու հանգամանորեն չմշակվեց, ժողովուրդը դրան հետևողականորեն չնախապատրաստվեց, ինչը հաջողության գրավական կարող էր լինել: Մրանից ելնելով՝ գոնե այսօր մենք պարտավոր ենք հստակեցնել մեր նպատակներն ու պահանջները Թուրքիայից, բարոյական հատուցում ակնկալելու մակարդակից դրանք տեղափոխելով միջազգային-իրավական հարթություն:

Արմենոցիդի հետևողական քաղաքականության իրողությունը մեզ հուշում է, որ չի կարելի եվրոպական միջավայրի քաղաքական գործընթացները կուրորեն ընդօրինակել ու փորձել դրանք կիրառել Ասիայում, մանավանդ՝ նրա ամենահետամնաց ու վայրենի մասում՝ Թուրքիայում: Այսինքն՝ մշտապես պետք է հաշվի առնել այն փաստը, որ Եվրոպան և Թուրքիան տարբեր միջավայրեր են, պատմական, սոցիալ-տնտեսական, ազգային և կրոնական անհամատեղելիությամբ: Ուստի, կարելի է վստահաբար պնդել, որ Թուրքիան չի հետևի Գերմանիայի օրինակին... Միանշանակ սնանկ են այն հույսերը, թե երբևէ Թուրքիան իբր այնքան քաղաքակիրթ կդառնա, որ ինքնակամ կճանաչի Հայոց ցեղասպանությունը (ի դեպ, այն ուրանալը և ժխտելը ևս հանցակցություն է): Չղջումը կարող է լինել սոսկ այն դեպքում, երբ Թուրքիան ծնկի բերվի մեր

ռազմաքաղաքական, գիտատեխնիկական ու տնտեսական հզորության առաջ: Այսօր դա պետք է լինի մեր գերակա, համազգային խնդիրը: Այլ կերպ, քան զավեշտ չենք կարող որակել այն արհեստական վիճակը, երբ միջազգային որոշ կազմակերպություններ և նույնիսկ հայ քաղաքական գործիչներից ոմանք, ապարդյուն ջանում են հավատացնել, թե հնարավոր է բարիդրացիական հարաբերություններ ունենալ Թուրքիայի և Ադրբեջանի հետ, մինչդեռ Հայոց մեծ եղեռնը, դրա շարունակությունը մինչև 1920-ական թվականները, այդ թվում՝ նաև Արևելյան Անդրկովկասում, ընդհուպ մինչև 20-րդ հարյուրամյակի 80-90-ական թվականները, անդադար ահազանգում են ճիշտ հակառակի մասին: Պետք է հիշել, որ Թուրքիան և նրա կողմից ուրիշ ժողովուրդների տարածքներում ստեղծված Ադրբեջանը կմնան հայրենագրված ազգերի ոխերիմ թշնամիները, քանի դեռ չեն ազատել նրանց պատմական հայրենիքը: Անկախ նրանից, թե ինչպիսի վարչակարգ է Թուրքիայում, նրա հետ համագործակցությունը լի է կանխատեսելի և անկանխատեսելի վտանգներով: Հայաստանի ու Թուրքիայի հակամարտության հիմնական պատճառը պանթուրքիզմն է, որը գնալով ավելի սքողված, բայց և ահագնացող վտանգի բնույթ է ստանում:

Վերջին տարիներին հայագիտությունը զգալի ուշադրություն է դարձնում ցեղասպանության պատմության և միջազգային դատապարտման հասնելու հիմնախնդիրներին: Դա բխում է նաև ցեղասպանության մասին խոր գիտելիքներ և ճիշտ պատկերացումներ ունենալու անհրաժեշտությունից, ինչը թույլ կտա հենց վաղ դրսևորումներից ճանաչել այն և կանխել ողբերգությունը: Փաստը, որ 1915-ը շարունակություն ունեցավ ու կրկնվեց նաև Հայկական լեռնաշխարհի այլ մասերում և, անգամ փորձարկվեց 1988-1992 թվականներին, վկայում է մեր անցյալը վատ գիտենալու, և, ժամոք, պատմության դասերն անտեսելու մասին...

Մինչդեռ, հարկ է մշտապես արթուն պահել պատմական հիշողությունը, նպատակային քարոզչությամբ-տեղեկատվությամբ ժողովրդին խանդավառել մայր հայրենիքին վերատիրելու գաղափարով, տոգորել նրան սեփական երկիրը սիրելու, հողին տեր կանգնելու, Հայրենիքի պաշտամունքի զգացմունքներով, արմատախիլ անելով օտարամտությունը, հատկապես՝ դժվար պահերին տաքուկ անկյուններ չվելու հակումը: Անցյալից դասեր քաղելը մշտական բնույթ պետք է կրի, ինչը թույլ կտա հրատապ սրբագրումներ մտցնել հետագա զարգացման

մարտավարության և ռազմավարության մեջ: Պարտավոր ենք մշտապես հիշել, որ, թիկունքից ևս մի հարված հասցնելու համար մեր թուլացմանը սպասող, թշնամի հարևաններ ունենք:

Տարածված մտայնություն է Հայոց ցեղասպանությունը հրեական ողջակիզման հետ համեմատելը: Եթե երևույթի նմանության մասին կասկած լինել չի կարող, ապա ցեղասպանությունից դասեր առնելու առումով, զգալիորեն զիջում ենք հրեաներին: Այսօր Իսրայելը հզոր երկիր է բազմամիլիոնանոց արաբական աշխարհի կենտրոնում, տիրապետում է ազգային անվտանգության ապահովման գլխավոր միջոցի՝ միջուկային զենքի, և ոչ երկրորդական ազդեցություն ունի համաշխարհային գործընթացների վրա: Դա արդեն ցեղասպանության հետևանքները վերացնելու լուրջ հայտ է: Անկասկած՝ հրեաների նպատակալաց գործելու օրինակը պետք է հրապուրի մեզ՝ որպես ազգ ու պետություն հզոր լինելու մեր ձգտումներում: Մնում է հուսալ, որ Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակի ոգեկոչումը, անցյալի դասերի սերտումը ազգային համախմբման, հավատի ու վստահության խթան կդառնան, հզոր ու բարգավաճ պետություն կերտելու ճանապարհով մեր ազգային անվտանգությունն ու արժանապատվությունը մեր իսկ ոգեղեն կամքի և բազկի միջոցով ապահովելու պատգամ կլինեն:

Ադրբեջանի նախահարձակմանը դիմագրավելու համար հայ ժողովուրդը 1988-1994 թվականներին մղեց իր հայրենական պատերազմը և ոչ միայն պաշտպանեց իր հայրենիքում ապրելու անկապտելի իրավունքը, այլ նաև ազատագրեց թուրք-ադրբեջանական զավթիչների կողմից 1918-1923 թվականների ընթացքում, էթնիկական գտումների, ցեղասպանության ու պետական ահաբեկչության միջոցով բռնազավթված բուն հայկական մի շարք տարածքներ, որոնք կազմում էին պատմական Հայաստանի մասը... Ներկա և գալիք սերունդներն ուղղակի դատապարտված են վաղ թե ուշ հետ բերելու կամ ազատագրելու մեր պատմական հայրենիքի բոլոր եզերքները... Սա է արմենոցիդի քաղաքականության հետևանքների վերացման միակ ուղին՝ նպատակաուղղված Հայրենատիրության գերնպատակի հետևողական իրականացմանը...

Թուրքական սվինների միջոցով ստեղծված Ադրբեջանը, որը 1918 թվականից սկսած Արևելյան Հայաստանում իրականացնում է հայ ազգաբնակչության էթնիկական գտումներ, ցեղասպանություն և հայրենագրելու, որպես՝ Թուրքիայի որդեգրած արմենոցիդի քաղաքականու-

թյան շարունակություն, նախահարձակման անցնելով և ներխուժելով պատմական Արցախի տարածքները, սկսեց թուրքերին յուրահատուկ դաժանությամբ, բռնատեղահանել ու կոտորել բնիկ հայ ազգաբնակչությանը: Պաշտպանական ու ազատագրական բազմաթիվ մարտերով Արցախի հայ ազգաբնակչությունը, համայն հայության աջակցությամբ, խափանեց Ադրբեջանի գավթողական նկրտումները, տապալեց զենքի ուժով Արցախյան հիմնահարցը լուծելու Բաքվի պլանները, պաշտպանեց հող հայրենին և վերընձյուղված Հայոց պետականությունը, այնուհետև, ռազմական ծանր պարտությունների մատնելով նախահարձակ հակառակորդի զինված ուժերին, անվտանգության հուսալի գոտի ստեղծեց ԼՂՀ-ի շուրջ, լռեցրեց ազգաբնակչության համար մահացու վտանգ ներկայացնող բազմաթիվ թշնամական կրակակետեր, ազատագրեց պատմական հայրենիքի որոշ տարածքներ: Մարտնչող ժողովուրդը հարկադրեց Ադրբեջանին, որը Թուրքիայի հրահրմամբ շարունակ համառում ու խուսափում էր ռազմական գործողությունների անհասպող դադարեցումից, ի վերջո, վարել բանակցություններ և համաձայնության գալ հրադադարի շուրջ: Հիմնականում այդ հաղթանակների, պատերազմի ընթացքում գծված ու ժամանակի քննությանը դիմացած բնական սահմանների և ԼՂՀ պաշտպանության բանակի մարտունակության շնորհիվ, տարածաշրջանում հաստատված հրադադարը պահպանվում է ավելի քան երկու տասնամյակ, ինչը, նախ և առաջ, ուժերի հավասարակշռության արդյունք է: Պաշտպանական ու ազատագրական մարտերի շնորհիվ արցախցին վերահաստատեց իր բնօրրանում ապրելու, ազատ ու անկախ գոյավիճակի իր իրավունքը, ստանձնեց նախնյաց սխալների ու բացթողումների սրբազրման առաքելությունը, վերստին իրական նախադրյալներ ստեղծելով ու հույսեր առաջացնելով Միացյալ Հայաստանի վերականգնման համար...

Հավատացած ենք, որ դա վաղ թե ուշ լինելու է, իսկ մինչ այդ մեզ անհրաժեշտ է, նախ և առաջ, ամրապնդել ու պաշտպանել բոլոր ձեռքբերումները, զարգացնել ու հզորացնել Հայոց պետականությունը, ունենալ մարտունակ ու զորեղ բանակ, հայրենասեր, համակողմանիորեն պատրաստակամ միլիոնավոր սերունդներ, մրցունակ ու առաջանցիկ տնտեսություն, ինչպես նաև վերաբնակեցնել ու հայրենիք դարձնել ազատագրված բոլոր տարածքները...

## ՇՈՒՇԻԻ ՄԱՐՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԸ

Թեև Լեռնային Ղարաբաղի 1918-1920 թթ. պատմությունը համակողմանիորեն ուսումնասիրված է, բայց հատկապես Շուշիի ողբերգությանը պատմագրության տված գնահատականները միանշանակ ու համոզիչ չեն: Ավելին, այն դեռևս առանձին գիտական ուսումնասիրության նյութ չի դարձել, ողբերգության ծնած պատճառների բացահայտման ուղղությամբ ձեռնարկված փորձերը, մեր կարծիքով, դեռևս, ամբողջացման ու ավարտուն տեսքի բերելու կարիք ունեն: Կարծում ենք, որ հիմնախնդրի պատմագրության տեսության ներկայացումը հնարավորություն կընձեռի պատկերացում կազմել ինչպես հիմնախնդրի լուսաբանման նախորդ փորձերի, այնպես էլ տողերիս հեղինակի տեղը դրա գիտական մշակման ասպարեզում:

Մինչև Արցախյան շարժումը և, հատկապես, այդ համաժողովրդական պայքարի տարիներին հակամարտության ակունքների հանդեպ առաջացած հետաքրքրության աճին զուգընթաց, մեծածավալ գրականություն է ստեղծվել, որի հարյուրավոր էջերում արծարծվել են 1918-1921 թթ. տեղ գտած իրադարձությունների ամնատարբեր կողմերն ու տեսանկյունները: Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խիկար Բարսեղյանը տակավին քառորդ դար առաջ նշել է Շուշիի ողբերգությունն ուսումնասիրելու անհրաժեշտության մասին, գրելով, որ այն «իհարկե, սպասում է իր գիտակ հետազոտողին»<sup>2</sup>: Թեև հետագա տարիներին ևս անդրադարձներ եղել են Շուշիի ողբերգությանը և դրա

<sup>1</sup> Հովհաննիսյան Գ. Ա., Սովիետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Սր., 1971, Ռուբեն, Հայ յիդափոխականի մը յիշարակները, հար. Բ, հար. Է, Թեհրան, 1982, Հարությունյան Ա. Թուրքական ինդիվիդուալիզմի Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կոիվները, Սր., 1984, Բաղդասարյան Մ., Առանց մեկնաբանության, «Արցախ» հանդես, Սրեխանակիր, 1989, հի. 1, էջ 84-89, Մարգարյան Ա., Լեռնային Ղարաբաղի պարմությունից (1918-1921թթ.), «Բաները Հայաստանի արիվներին», 1989, ք. 3, էջ 63-104, Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920թթ., «Խորհրդային Ղարաբաղ» 1989, հի. 252, 253, 255, 256, 257, Կրպարյան Ա., Բալիկյան Օ., Լեռնային Ղարաբաղի քաղաքական կարգավիճակի որոշման պարմությունից, «Բաները Հայաստանի արիվներին», 1989, հի. 2, էջ 68-78, Սևյան Վ., Շուշի, Սր., 1991, Արթուրյան Հ., Արցախյան գոյամարտ, Սր., 1991, Վրազյան Ա., Հայաստանի Հանրապետություն, Սր., 1993, Назорный Карабах (Историческая справка), Ер., 1988, Хуршудян Л., Истина-единственный кратерий исторической науки, Ер., 1989, Назорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов, Ер., 1992 և այլն:

<sup>2</sup> Բարսեղյան Խիկար, Պարմությունն անհնար է կեղծել... (Գրախոսության փոխարեն: Փաստեր, մտքումներ), «Սովիետական Հայաստան», 9 ապրիլի 1989 թ., էջ 3:

պատճառներին, սակայն, մնալով 1918-1921 թթ. իրադարձությունների ետնախորքում, առանձին ուշադրության չեն արժանացել<sup>3</sup>:

Պարբերական մամուլում հրապարակումներ են եղել, որոնք ակամաստների հավաստի վկայություններով որոշակի լույս են սփռում 1920 թ. մարտյան դեպքերի վրա<sup>4</sup>:

Շուշիի ողբերգության թեման առանձին ուսումնասիրության նյութ է դարձել նաև տողերիս հեղինակի համար<sup>5</sup>: Այնուհետև խնդրո առարկա թեմայի տարբեր տեսանկյուններին անդրադարձներ են եղել պարբերական մամուլում<sup>6</sup>: Թեման և, հատկապես, ապստամբության «առասպելի» խնդիրը քննվել ու արդյունքները հրապարակվել են նաև գիտական հրատարակություններում<sup>7</sup>: Իհարկե, մինչ այդ էլ հրապար-

ակումներ եղել են, սակայն, դրանցում կոնկրետ հարցադրումների պատասխանները, ակներևաբար, դժվար է գտնել<sup>8</sup>:

Թեմատիկ առումով ավելի արժեքավոր հրատարակություններից հատկանշելի է Հայաստանի Ազգային արխիվի կողմից լույս ընծայված փաստաթղթերի ժողովածուն<sup>9</sup>: Թեմային առնչվող հետաքրքիր փաստաթղթեր ու նյութեր կան Արցախի թեմին նվիրված «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության» մասենաշարի իններորդ գրքում<sup>10</sup>: Առանձին փաստաթղթեր հրապարակվել են տարբեր պարբերականներում<sup>11</sup>:

Ջգալի փաստական նյութ են պարունակում ժամանակակիցների ու դեպքերի մասնակիցների օրագրությունների ու հուշագրությունների հիման վրա կազմված հրապարակումները պարբերական մամուլում և վերջին տասնամյակների ընթացքում լույս ընծայված գրքերը<sup>12</sup>:

Չանազան հարցերի պատասխաններ կարելի է գտնել 1918-1921 թթ. իրադարձությունների մասին պատմող տարաբնույթ հրապարա-

<sup>3</sup> Աբրահամյան Հ., Արցախահայրենյան ազատագրական պայքարը 1917-1923 թթ., Եր., 2003, նույնի՝ Մարտինոզ Արցախը 1917-2000, գիրք Ա, 1917-1923, Եր., 2003, Գարոյան Գ., Հայաստանը և մեծ րեթորությունները 1917-1923 թթ., Եր., 1999, Ջոհրաբյան Է., Նախիջևանյան հիմնաստիճանը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտեմբեր-1920 թ. ապրիլ), Եր., 2002, Կարապետյան Բ., Շուշի քերականությունը, Եր., 2000, Հակոբյան Ա., Արցախյան ինքիզրը Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանում 1918-1920 թթ., «Լրագրեր հաս.գիտ.», 1999, հոկ. 1, էջ 93-97, Հայոց պարմություն. հիմնաստիճան, Եր., 2000, Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Եր., 1996, Միրախյան Վ., Հայաստանի Հանրապետությունը և Արցախյան հարցը 1918-1920 թվականներին, «Լրագրեր հաս.գիտ.», 1998, հոկ. 1, էջ 3-8, Միտոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Եր., 1996, Ուլուբաբյան Բ., Արցախի պարմություն (սկզբից մինչև մեր օրերը), Եր., 1994, նույնի՝ Արցախյան գոյապայքարը, Եր., 1994, Միտոնյան Ա. Հ., Չանգեզուրի գոյապայքարը 1919-1921 թթ., Եր., 2000, Арутюнян В., Предстория национально-освободительного движения карабахских армян, Эчмиадзин, 2000

<sup>4</sup> Հովհաննիսյան Բագրատ, Շուշվա կորուսածը ակամաստի աչքերով, «Ավանգարդ», 1990 թ., հոկ. 45, Տեր-Սարգսյան Միրզա (Միրաթ), Լեռնային Ղարաբաղ, «Ավանգարդ», 1991 թ., հոկ. 34-35: Ավելի ամբողջական տես Ղազիսյան Ալվարդ, 1920 թ. Շուշվա մարտյան ողբերգության ակամաստի «Հուշագրությունից», «ՊՌՀ», հոկ. 1, 2005, էջ 275-283, Խաչատրյան Ավերիք, Շուշվա կորուսածը (1920 թ. 22 մարտի), «Բաղարական գրույթակից», 1991, հոկ. 3:

<sup>5</sup> Տես Հարությունյան Մհեր, Շուշիի մեծ ողբերգությունը (1920 թ. մարտ), Դիպլոմային աշխատանք, Սրեփանակերտ, 1994 (այժմ պահվում է «Կամառ» գիտական կենտրոնի արխիվում): Նույն աշխատանքը գիտական ռեֆերատի տեսքով 1995 թվականին ներկայացվել է ԵՊՀ պարմության ամբիոնի վարիչ, պ. գ. դ. Էկեղորոշ Խորշոռյանին և արժանացել նրա հավանությունը:

<sup>6</sup> Հարությունյան Մհեր, Խորհրդածություն Շուշիի մեծ ողբերգության շուրջ, «Ազատ Արցախ», p. 33, 23 մարտի 1999 թ., էջ 4,7, նույնի՝ ...Թե ով է հանրապի մեղադրանքի հեղինակ, «Ազատ Արցախ», p. 99, 24 օգոստոսի 1999 թ., էջ 3, նույնի՝ Շուշիի ողբերգության մի քանի պարմանների մասին, «Մարտիկ», 2000 թ., նույնի՝ Արևմտցողի քաղաքականության ուղիղտունը և պարմանության անասպելը (Շուշիի մարտյան ողբերգության 85-րդ տարեկիցի առթիվ), «Ազատ Արցախ», 24 մարտի 2005, հոկ. 34(1703), նույնի՝ «Մարտիկ», 19 - 26 մարտի 2005, թիվ 11(618), էջ 4, Отступление от политики арменацизма и миф о восстании (К годовщине мартовской трагедии в Шуши), «Азот Арцах», 26 марта 2005 г., № 20 (489), стр. 4. 7 Հարությունյան Մ. Ա., Արևմտցողի քաղաքականության ուղիղտունը և պարմանության անասպելը, «Լրագրու» (Գիտական հոդվածների ժողովածու): Մր., 2008, հոկ. 1, էջ 71-78, նույնի՝ Հայաստան-Արցախ պարմության և արդիականության գույապայքարում, հոդվածների ժողովածու, գիրք առաջին, Սր., Դիզակ պլյուս», 2009, էջ 135-146, 215-220, նույնի՝ Շուշիի մարտյան ողբերգության պարմագրության հիմնաստիճանը.- «Արցախյան պարմանական ահաբեկությունը և Էրևնիական գրումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ», 2010 թ. մարտի 21-24-ը Սրեփանակերտում և Շուշիում կայացած միջազգային գիտադրման վրա կոնֆերանսի գեկուգրումներ: Խոթ. Մ. Ա. Հարությունյանի: «Կամառ» տարեգիրք, գիրք 4, Շուշի, «Կամառ» գիտական կենտրոնի հրատ., 2010, էջ 45-60:

<sup>8</sup> Աբրահամյան Հ., Հայոց Շուշիի հրե քոցերի մեջ, «ԼՂ Հանրապետություն», 1995 թ., հոկ. 4(35), էջ 3, հոկ. 7(39), էջ 3, նույնի՝ «ԼՂ Հանրապետություն», 1997 թ., հոկ. 11, էջ 4, նույնի՝ Ինչու՞ Շուշիի հանցնվեց քոցը գավթիներին, «ԼՂ Հանրապետություն», 1996 թ., հոկ. 159, էջ 5,8, նույնի՝ Թե ինչու Չորավար Անդրանիկը չմտավ Ղարաբաղ, «ԼՂ Հանրապետություն», 10 սեպտեմբերի 1996 թ., Ավագյան Ա., Ղարաբաղ. փաստերի փրամաքստությունը (պարբերական մամուլի կորուստ), «Նրեկոյան Նրեան», 4.12.1989 թ., էջ 3, Բաղդասարյան Մ., Գազանաբար խորանցված քաղաքին (Շուշիի 1920 թ. մարտյան հեղեղի 75-ամյակի առթիվ), «ԼՂ Հանրապետություն», 1 ապրիլ 1995 թ.:

<sup>9</sup> Հայերի կորուստները Բարվի և Ելիզավիտյուրի նահանգներում. 1918-1920 թթ.: Պարա. Խոթ.՝ Վիրաբյան Ա., Կազմ.՝ Միրզոյան Ա., Ղազիսյան Ա., Եր., ՀՀ պարմութ. արխիվ, 2003:

<sup>10</sup> Վաերագրեր հայ եկեղեցու պարմութեան. գիրք Թ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը(1813-1933), Կազմ. և առասպանը գրեց՝ Սանդրո Բեկրոյանը, Եր., 2001:

<sup>11</sup> Արցախի և Չանգեզուրի պաշտպանությունը 1920 թ., «Նրեկոյ», 7 հոկտեմբերի 1994 թ., Газиян Алвард, "... Но в Карабахе войн не станет меньше" - свидетелствуют письмо убуиц и мародеро после Шушинской резни 1920 г., "Голос Армении", № 32, 30 марта 2004 г., с. 1-2.

<sup>12</sup> Միրախյան Արսեն, Ղարաբաղի վերջին դեպքերը, «Հայրենիք», Բուարոն, 1923, հոկ. 7, էջ 156-167, հոկ. 8, էջ 110-122, հոկ. 9, էջ 115-121, հոկ. 11, էջ 110-119, հոկ. 12, էջ 118-127 (այն արտապայվել է Վաերագրեր հայ եկեղեցու պարմութեան գիրք Թ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը(1813-1933), Կազմ. և առասպանը գրեց՝ Սանդրո Բեկրոյանը, Եր., 2001, էջ 778-827), Սրեփանյան Յովակ, Արցախյան կամ առասպանը գրեց՝ Սանդրո Բեկրոյանը, Եր., 2001, էջ 778-827), Սրեփանյան Յովակ, Արցախյան կամ Շուշույ գնդի պարմութիւնը, «Հայրենիք», Բուարոն, 1935, հոկ. 3-7, Մարտ (Քիր Մարտ), Ղարաբաղի կցումը Արցախին, «Հայրենիք», Բուարոն, 1929, Յունիս, հոկ. 8, արտապայված է՝ «Դրոշակ», 1990, Մարտ, էջ 78-96, նույնի՝ Ղարաբաղի կռիվների շուրջ, «Հայրենիք», Բուարոն, 1934, հոկ. 5, Լեռ, Անգրայից, Թիֆլիս, 1925, Мелук-Шахназаров Заре, Записки карабахского солдата: Воспоминания участника событий 1918-1920 гг. в Назором Карабахе, Москва-Ереван, 1995, Melik - Shahnazarov Zareh, Sketches of Karabakh soldier. Moskov, 1996, Արամյախ (Միաթ Տեր-Դանիելյան), Ղարաբաղի փրագնապը(պարմության համար) օրագրություն(26 ապրիլ-26 հուլիսի 1919 թ.), Եր., 1993, Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղ. 1917-1920, Եր., 1999, Թոնյան Հարություն, Դեպքեր Լեռնային Ղարաբաղում. 1917-1920 թթ., պարմական ակամարի, Եր., 2008, Կիսիբեկյան Աբրահամ, Հուշեր, գիրք Ա և Բ, Եր., 2011:

կումներում, երկերում ու գրքերում<sup>13</sup>:

Պատմագրության մեջ այս կամ այն կերպ արծարծված, բայց դեռևս միասնական կարծիքի չարժանացած հիմնահարցերից կարելի է հատկանշել ռուսական նահանջող գործառնների հանդեպ վերաբերմունքը, զեմքի և զինամթերքի, կովոդ ուժի պակասը, Շուշիի գնդի տեղափոխումը, Բերդաձորի անկումը, Բաքվի կորուստը, Անդրանիկի արշավանքի ընդհատումը, թույլ տրված սխալները, հատկապես՝ ինքնապաշտպանության սխալ ռազմավարությունը, նախահարձակ մահմեդականների հետ գոյակցության անհնարինությունը, տնտեսական ու քաղաքական մի շարք գործոններ: Սակայն, մեր կարծիքով, ամենահրատապ խնդիրը այսպես կոչված «ապստամբության» առասպելի բացահայտումն է:

Ողբերգական իրադարձություններին հաջորդած առաջին մի քանի

<sup>13</sup> Ալեքսիսյան Հ. Ա., 1918թ. մայիսյան հերոսամարտերը. «ՊԲՀ», 1988, հմ. 2, էջ 20-33, նույնի՝ Հայկական հարցը 1918 թվականին, Եր., 1997, նույնի՝ Հայոց ազգային միասնության հարցանակը, Եր., 1998, Գարսյան Գ., Պարսկության քառուղիներում, Եր., 1982, Գեղամանց Եղիշե Ա. քահ., Տաճիկները Կովկասում և Բարվի անկումը, Բ., 1919, Գեորգյան Հ., Դրո, Եր., 1999, Գրիգորյան Ռ., Թուրք մուսավարական զորքերի ոճրագործությունները Անդրկովկասի հայաբնակ շրջաններում 1918-1920 թթ., «ԲՀԱ», 1996, հմ. 1, էջ 88-111, Խարխայան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, Կարապետյան Բ., Հարյուր տարվա երկխոսություն, Եր., 1990, Հովհաննիսյան Ա. Գ., Հուշեր անցյալից (Հ. Գյուլիբիկյանի ծննդյան 80-ամյակի առթիվ), «ԼՀԳ», 1966, հմ. 3, էջ 60-75, Հովհաննիսյան Գ., Մանուկի ձակարանարյուն (1918թ.), «Բանբեր Երևանի համալս. հաս. գիր.», 1968, հմ. 3, էջ 150-153, Մելիք-Շահինազարյան Չարհի, Թուրքական ագրեսիան Ղարաբաղում Բարվի կոմունայի անակոսից հերոս, «Արցախ» հանդես, Սյունիականները, 1990, հմ. հմ. 5-6, էջ 25-29, Միրզոյան Ա., Սարգսյան Կ., Անցյալ չկորուսյալ (Արցախի՝ փրկության ելքը. 1918-1920), «Գարուն», 1991, հմ. 2, Պողոսյան Հ. Մ., Անդրանիկ գործարարի մի նախնի գեներալ Բաղրատյուն, «Մանկավարժ», 1990, հմ. 8, էջ 58-62, Սարգսյան Ա., Լեռնային Ղարաբաղի պարտությունից (1918-1921 թթ.), «ԲՀԱ», 1989, հմ. 3, էջ 63-104, Սարգսյան Ե. Ղ., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918 թթ., Եր., 1964, Միմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պարունությունից, Եր., 1991, Սողոմոնյան Մ. Ս., Սովետական իշխանության հասարակարգը Լեռնային Ղարաբաղում, «ԲՀԱ», 1968, հմ. 1, էջ 113-128, նույնի՝ Լեռնային Ղարաբաղում բուրժուական ինտերվենցիայի հարցի շուրջը (1918 թ.), «ԲՀԱ», 1972, հմ. 1, էջ 185-196, Վիրաբյան Վ., Հայաստանը անդրկովկասյան հանրապետությունների 1920թ. ապրիլի վեհաժողովում և ազգամիջյան փոփոխարևերությունները, Երևան, 1998, Տեր-Գապարյան Ռ. Հ., Շուշի քաղաքը, Եր., 1993, Քաջագունի Հովհ., ՀՀ դաշնակցություն անկիր յունի այլև, Թիֆլիս, 1924, Микаелян В. А., Хуршудян Л., Некоторые вопросы истории Нагорного Карабаха. "ВОИ", 1988, № 4, с. 43-56, Мкртчян Ш., Дагтян Ш., Шуши. город трагической судьбы. Ер., 1997, (նույնը հայերեն և անգլերեն լրագրվել է 2008-ին, Երևանում), Нагорный Карабах (Историческая справка). Ер., Изд. АН Арм. ССР, 1988, Эвоян В. С., Баликян О. С., Из истории Нагорного Карабаха (1918-1921 гг.). "БАА", 1989, № 1, с. 86-130, Баликян О. С., К политике Азербайджанской республики в феврале 1920г. "БАА", 1990, № 2, с. 256-258. Hovannissian Richard, The Republic of Armenia. v. 1. The first year, 1918 - 1919. University of California press, Berkeley, Los Angeles, London, 1972, Hovannissian Richard, The Republic of Armenia. v. 3. From London to Sevres, February-August, 1920. University of California press, Berkeley, Los Angeles, London, 1996, Карабахский вопрос: история и сущность в документах и фактах. Ст., 1989, Правда о Нагорном Карабахе. Материалы и документы. Ер., 1989, Правда о Нагорном Карабахе. Сост. В. А. Товмасян, Ю. Б. Нерсисян. Ст., 1989

տարիներին, կապված «նոր կարգերի» հաստատման, դրանց «առավելության» առասպելի հաստատման և նախկին իշխանությունների վարկաբեկման որդեգրված ուղեգծի հետ, ասվել են միայն փոխադարձ մեղադրանքների ու անեծքի խոսքեր: Տակավին ողբերգական իրադարձություններին զուգընթաց այսպես կոչված Աղբերգանի դեմոկրատական հանրապետությունը (այսուհետև՝ ԱԳ-Հ) շրջանառության մեջ դրեց հայերի ապստամբության մասին ստահող վարկածը, իր կազմակերպած ոճրագործությունը փորձելով ներկայացնել որպես հայերի հուսահատ ընդվզման հետևանք: Այնինչ, մենք գործ ունենք Թուրքիայի կողմից ծրագրված և ԱԳ-Հ-ի կողմից պետականորեն կազմակերպված ու իրագործված ցեղասպանության քաղաքականության հետ:

Շուշիում կատարված ոճրագործությունների վերաբերյալ դեռևս 1920 թ. մարտի 30-ին «մուսավաթի» խորհրդի ընդհանուր ժողովի, իսկ ապրիլի 1-ին Աղբերգանի պառլամենտի ընդունած բանաձևերում լկտիարար մեղադրվել են հայերն ու Հայաստանի կառավարությունը: Փորձելով քավության նոխազ դարձնել մի խումբ ապստամբների, ԱԳ-Հ-ն չի մոռացել նաև սպառնալու, որ «**հետագայում ավելին կարվի, եթե Ղարաբաղի հայությունը խոհեմ ու հնազանդ չպահի իրեն**»<sup>14</sup> (ընդգծումը մերն է. - Մ. Հ.):

Արսեն Միքայելյանը, թվարկելով հակառակորդի ագրեսիվ գործողությունները և ներկայացնելով վճռական բախման անխուսափելիությունը, ջանում էր ապացուցել, որ բավարար ուժեր կային բնակչության ինքնապաշտպանության ու անվտանգության ապահովման համար, սակայն առկա հնարավորությունները չօգտագործվեցին: Ահա թե ինչ է գրել նա այդ առթիվ. «Քաղաքի Ինքնապաշտպանության Մարմնի և նախօրոք եղած առաջարկների հիման վրայ, դեպքերի ժամանակ, Ղարաբաղի Ինքն. Կեդր. Մարմինը կատարում է իր վրայ դրուած պարտականությունները, քաղաք ուղարկելով Վարանդայի երկու շրջանի ոստիկանապետներին՝ իրենց զինուած ոստիկաններով (90 հոգի), 160 զինուած զիւղացիներ՝ Ն. Ա.-ի և Գ.-ի ղեկավարությամբ: Իսկ քաղաքը, այդ կոիւների ժամանակ, իր տրամադրութեան տակ ունէր մօտ 400 զինուած կոտողներ, որոնց օգտագործումը կախուած էր քաղաքի Ինքնապաշտպանական Մարմնից եւ ոստիկանապետ Ա. Տ. Ս.-ի հրահանգներից»<sup>15</sup>:

<sup>14</sup> "Азербайджан", № 67, 2 апреля, 1920 г.

<sup>15</sup> Միրայելիան Արսեն, 'Ղարաբաղի վերջին դեպքերը.- «Հայրենիք» ամսագիր, Բուսրոն, 1923, հմ. 11, էջ 118, հմ. 12, էջ 121:

Իսկ թե ինչու չհաջողվեց կանխել աղետը, նա փորձում է բացատրել հետևյալ կերպ. «Քաղաքը սակայն չի կարողանում օգտագործել այդ ուժերը: Ինքնապաշտպանական Մարմինը անգիտակ է իրերի կացութեան, իսկ Ա. Տ. Ս.-ն՝ անտարբեր: Ներս մտնող օգնական ուժերը գործում են ինքնագլուխ, իսկ քաղաքի ազգաբնակչութեան մէկ մասը, գլխատրապետ Ադրբեջանի կողմնակիցները, գլխավորութեամբ յայտնի ռուսամոլ եւ թրքամոլ Գիզի աղայի, սկսում են խանգարել՝ կարեւոր դիրքերը գրաւելու եւ յայտարարում են, թէ իրենք համաձայնել են Սուլթանովի հետ, որ հայկական կոտորած չպիտի լինի»:

«Այդ վտանգի բուպէին քաղաքի ինտելիգենցիայի երկպառակութիւնը, շարունակել է Ա. Միքայելյանը, կոռուղ ոյժերի անդէկ դրութիւնը, Ինքնապաշտպ. Մարմնի խելակորույս վիճակը մէկ կողմից եւ այն, որ Սուլթանովի՝ առաջուց զանազան հայ տներում տեղեւորած սպաներն ու զինուորները սկսում են հրդեհել իրենց բնակած վայրերը, առաջ են բերում խուճապ, եւ ազգաբնակչութիւնը սկսում է փախչել դէպի գաւառ՝ Քարին Տակի խճուղիով՝ մատախուղի միջով, որ մեծապէս նպաստում է շատ շատերի փրկութեան»<sup>16</sup>:

Մեր հայրենակից Լեոն, անշուշտ, տուրք տալով բոլշևիկյան նոր հաստատված իշխանության գովերգման մտայնությամբ, ինչպէս նաև նրա առաջ քաշած հավասարեցման կեղծ առանցքազաղափարին առ այն, որ Շուշիի ողբերգության մեղավորներ են թե մուսավաթականները և թե դաշնակցականները, Հայաստանի վերաբերյալ գրեթէ կրկնում է մուսավաթականների, իսկ սրանցից էլ ժառանգած՝ բոլշևիկների անհիմն մեղադրանքները: «Խրախուսվելով Չանգեգուրցիների տարած հաղթությամբ, Դաշնակցությունը որոշել էր խլել Ադրբեջանի ձեռքից (՝Մ.Հ.) նաեւ Ղարաբաղը զուտ ֆիդայական եղանակով, այսինքն տեղական ապստամբության միջոցով, առանց պատերազմ հայտարարելու»: Հետագա իրադարձությունները ևս Լեոն ներկայացրել է ակնհայտ միտումնավորությամբ. «Շուշու հայությունը զգում էր, որ իրեն պիտի կոտորեն եւ ամեն կերպ աշխատում էր շահել բուրդ բժշկի [Սուլթանովի] սիրտը: Բայց հենց այն միջոցին ֆիդայականությունը դուրս էր սողում իր բույնից՝ մի անգամ էլ հայ ժողովրդի գլխին երկմքի պատուհաս դառնալու իր հիմար ու զգվելի տղայամտությամբ: ... Իսկ Շուշու դահիճ

հանդիսանում է դաշնակցական սեւանուն Արսեն Միքայելյանը: Ոճրագործի հանդգնությամբ լցված այս մարդը վաթսուն հոգով մտնում է Շուշի նովրուզի (պարսկական նոր տարվա) օրը՝ մարտի 30-ին (՝Մ.Հ.), երբ թուրքերը իրենց տոնով էին զբաղված: Գիշերը մի ինչ որ տան արբեցողությամբ անցկացնելով, առավոտը զնում են զուրանցը վերցնելու եւ կրակ են բաց անում նրա դեմ: Թուրք զինվորները դուրս են վազում, կռիվ է սկսվում եւ մեր քաջերը կծիկս են զնում իրենց անպետք գլուխներն ազատում, թողնելով ժողովուրդը մուսավաթական ասկերներին, թուրք խուժանի եւ նրանց առաջնորդ երկու բժիշկների՝ Սուլթանովի եւ Մեհմանդարովի ձեռքին: Այդ երկու բժիշկները, տանջվող մարդկության ծառայելու ակադեմիական ուխտ արած, հրամայում են խուժանին՝ կոտորեցեք, այրեցեք, կողոպտեցեք...»<sup>17</sup>: Անշուշտ, իմաստ չունի անդրադառնալ բոլոր կարծիքներին, մանավանդ, որ այս երկուսը, թերևս, տիպական են շրջանավոր երկու հիմնական տեսակետների համար: Ի դեպ, «ապստամբության» մասին խոսող ժամանակակից հայ հեղինակները, որպէս կանոն, մարտի 23-ին Շուշի քաղաքից հեռու են եղել (Հարություն Թումյանը՝ Ասկերանում էր, Աբրահամ Կիսիբեկյանը՝ Դիզակում, Եղիշե Իշխանյանը՝ Հայաստանի Հանրապետությունում, Լեոն՝ Թիֆլիսում և այսպէս շարունակ):

Հարկ է նշել, որ տարաբնույթ ու զանազան ծագում ունեցող փաստաթղթերում հանդիպող տեսակետները, իրար հակասող տեղեկությունները իսկական խառնաշփոթ են ստեղծել և գրեթէ անհնար դարձրել միանշանակորեն որևէ վարկած պնդելը, մանավանդ՝ ապացուցելու հաջողությունը: Այս խառնիճադանջությունը, ցավոք, նկատելի է նաև հետագա ուսումնասիրողների աշխատություններում: Այն տպավորություն է ստեղծվում, որ արխիվային փաստաթղթերը հաճախ օգտագործվել են ոչ քննադատաբար, առանց դրանցում առկա տեղեկություններն ստուգելու և ծագման բնույթը (ասենք՝ միտումնավոր կամ վարկաբեկիչ, քաղաքական պատվեր, ոչ կոմպետենտ կամ աչառու հեղինակի արտադրանք լինելը) հաշվի առնելու:

Մենք կարծում ենք, որ ուսումնասիրելով այդ շրջանին վերաբերող բազմաթիվ փաստաթղթեր ու վավերագրեր, որոնց մեծ մասը հրապարակվել է առանձին ժողովածուներում, գիտական հանդեսներում ու աշ-

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, 437-438

խատությունների հավելվածներում, կարելի է գալ այն եզրահանգման, որ դրանցում ապակողմնորոշող ու գիտականության պահանջները չբավարարող, ինչու չէ՝ նաև անարժանահավատ տեղեկություններ շատ կան, որոնց սարդոստայնում չխճճվելու համար հարկ է քննախույզ մոտեցում ցուցաբերել և դրանք օգտագործել զգուշորեն, կիրառելով պատմահամեմատական մեթոդը և, որ կարևոր է՝ իրադարձությունների զարգացման տրամաբանությանը համապատասխան: Անշուշտ, դրանով չենք ուզում ասել, թե նախորդ ուսումնասիրողներն այս ամենը չեն նկատել և, առավել ևս՝ մտադիր չենք նշույլ անգամ նսեմացնել կամ սովեր գցել նրանց կատարած շնորհակալ ու տքնաջան աշխատանքի վրա: Բայց նաև չենք կարող չարտահայտել նրանց երկերից մեր սուսացած տպավորությունը, որոնց ընդհանուր թերությունը, մեր կարծիքով, քաղաքագիտական մտքի ու գնահատականների պակասն է: Մա հատկապես ակնհայտ է, այսպես կոչված՝ «ապստամբության» առասպելի տարվողման ու անհարկի ուռճացման պարագայում, մինչդեռ չենք կարծում, թե ամեն ինչ եղել է այնպես, ինչպես ներկայացվում է, մանավանդ, որ դրանից հակառակորդի ասպարեզ հանած հերթական քաղաքական սադրանքի կամ խայծի հոտ է փչում: Պատահական չէ, որ ուսումնասիրողներից ոմանք (Բ. Ուլուբաբյան, Հ. Հարությունյան և ուրիշներ) փորձել են խուսանավել երկու տեսակետների միջև (այսինքն՝ ապստամբություն<sup>6</sup>, թե՞ զինված ինքնապաշտպանություն նախահարձակ եղած աղբյուրական գործերից): Թեմային անդրադարձած հեղինակների տեսակետների ընդհանուր մտայնությունն այն է, որ էլեկտրականացված (լարված) մթնոլորտում Սուլթանովը և մյուս դահիճները առիթի էին սպասում վաղուց ծրագրված հայերի բնաջնջումն իրականացնելու համար: Մա ևս կարելի է ընդունել: Մակայն, ոչ համոզիչ ու անտրամաբանական է այդ «առիթը հայերի կողմից տալու» մասին թյուր վարկածը: Ակնհայտ է, որ թուրք-աղբյուրականներից ու քրդերից կազմված ավագակախմբերի ու կանոնավոր զորքերի հարձակմանը հայերը պատասխանել են ինքնապաշտպանությամբ, ինչը Աղբյուրականի քարոզչությունը ներկայացրել է որպես ապստամբություն, հետևանքը պատճառի նենգափոխելու միջոցով միջազգային հանրությանը մոլորեցնելու և երբեմնի ծաղկուն Շուշի քաղաքի ավերումն ու հայ բնակչության ոչնչացումն արդարացնելու նպատակով:

Ավելի վաղ հրատարակած մեր հոդվածներում կարծիք էինք հայտնել, որ սրանում համոզվելու համար բավական է վերհիշել նա-

խընթաց և հաջորդած իրադարձությունները և դրանց վերլուծության հիման վրա կառուցված թուրք-թաթարական (աղբյուրական) քաղաքական մտածողության ու «տրամաբանության» պատկերը, որն, ի դեպ, յուրահատուկ է, եթե չասենք՝ բացառապես բնորոշ է մեկն խորթ ու օտար քաղաքակիրթ շրջապատում և բարեբեր երկրում հայտնված, բայց դեռևս զարգացման անհամեմատ ցածր մակարդակում գտնվող և տակավին քոչվորական կացութաձև ունեցող ցեղերին: Այս միտքը զարգացնելիս կարող ենք հենվել ենք 1915 թ. Հայոց մեծ եղեռնին, 1918 թ. Բաքվի սեպտեմբերյան ոճրագործություններին, 1919 թ. ամռանը Շուշիի մերձակա բնակավայրերի հայ բնակչության բնաջնջմանը, 1920 թ. նախկին Ելիզավետպոլի մահանգի հայության էթնիկական գտնմանը, 1988 թ. սումգայիթյան, 1990 թ. Բաքվի, 1992 թ. ապրիլի 10-ի Մարաղայի բարբարոսություններին, և, ընդհանրապես, Աղբյուրական-ԼՂՀ հակամարտությանը թուրք-աղբյուրական ցինիկ գնահատականների ու «հակավիաստարկների» համադրման ու վերլուծության արդյունքների վրա, այդ երկար շրթայի մի օղակը դիտելով նաև Շուշիի 1920 թ. մարտյան ողբերգությունը...

Մենք քանիցս հատկանշել ենք, որ «Ապստամբության» առասպելը և իբր «դրան ի պատասխան հայերի բնաջնջման» սցենարը թուրքերը գործադրում են հնուց ի վեր: Անգամ Հայոց մեծ եղեռնը, որին զոհ է գնացել ավելի քան 1,5 միլիոն մարդ, նրանք ցինիկաբար փորձում են ներկայացնել որպես հայերի ըմբոստության ու ապստամբության պատասխան: Մինչդեռ, ապստամբությունները, եթե եղել են, և, ընդհանրապես, հայ ժողովրդի ազատագրական պայքարը ուղղված են եղել թուրքերի հայահալած, ազգային, կրոնական, մշակութային, տնտեսական ճնշումների ու բռնությունների դեմ, երբ ծայրահեղ ու օրհասական վիճակի հասցված մարդկանց այլ բան չէր մնում, քան վերջին հուսահատ փորձը ձեռնարկել դանդաղ մահվանից փրկվելու համար: Հենց այդ հրահրված, սադրված, ինչու չէ՝ պարտադրված ընդվզումն էլ թուրք ոճրագործներն առիթ էին դարձնում վաղուց ծրագրված ցեղասպանության քաղաքականությունը կենսագործելու՝ հայերին բնաջնջելու համար:

*Ուսումնասիրելով անցյալը, բազմաթիվ վավերագրերն ու վկայությունները, գալիս ենք այն համոզման, որ հայ ազգաբնակչության նկարմամբ Թուրքիայի, սպա և Աղբյուրականի իրականացրած մշրտական բռնանշումների ու սհարեկչության քաղաքականությունը, բնա-*

կանաքար, հանդիպել է Կոմիտասի կողմի հակազդեցությանն ու դիմադրությանը, որոնք, դժբախտաբար, կազմակերպված ու արդյունավետ չէին այն աստիճան, որ ի վիճակի լինեին կանխելու հայերի դանդաղ ոչնչացումը կամ ուժացումը: Հերևաքար, թուրքերը և աղբրեջանցիները օգտվում էին հայերի անկազմակերպվածությունից ու անզեն ու անպաշտպան վիճակից, անպարիժ կերպով իրականացնում էին ծրագրված ցեղասպանական քաղաքականությունը և ցինիկաբար մեղադրում իրենց զոհերին, նենգախոխելով իրականությունը:

Թուրքերի նմանատիպ նենգախոխման օրինակ ենք համարել Նուրի փաշայի աղվեսային արտահայտությունը. «...տաճկահայոց կործանման համար հանցավոր են և հայերը, որ խաղաղիք դարձան այս տերություններին (Անգլիային և Ռուսաստանին.- Մ.Հ.), սկսեցին ապստամբական շարժումները և իրենց դեմ առաջ բերին զսպիչ ձեռնարկություններ և անբաղդացան<sup>18</sup>»: Մինչդեռ, հայերի բնաջնջման հրեշավոր գործողությունները ծրագրվում ու նախապատրաստվում էին վաղորդ, ինչքան էլ տարօրինակ թվա, առանց քողարկման, հակահայկական հիստերիայի ու կույր ատելության ներարկման արշավի ընթացքում:

Մենք ժամանակին ուսումնասիրողների ուշադրություն ենք հրավիրել այն փաստին, որ արդեն 1920 թ. սկզբներին Ադրբեջանում գլուխ էին բարձրացրել իթթիհատականները և ագրեսիվ քաղաքականություն ու տրամադրություններ էին տարածում և՛ կառավարության, և՛ ողջ մահմեդական բնակչության շրջանում: Այդ մասին յուր ժամանակին իրագրել է Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանը՝ Ուորդոուայի հետ ունեցած գրույցի մասին զեկույցում. «Ես նրան (Ուորդոուային. - Մ. Հ.) պարզաբան]եցի, որ տարաբախտաբար Ադրբեջանի կառավարության շրջաններում խաղաղարար ու բարեմիտ գործիչների դրությունը բավական խախտու է այժմ, իտտիհատ կուսակցության պրոպագանդայի եւ գործունեության հետեւանքով: Մասնավորապես Ուսուբեկովի դիրքը բավականաչափ խախտվել է ներկայումս եւ խնդրեցի Ուորդոուային յուր ազդեցությունը գործ դնել իտտիհատականների ազդեցությունը թուլացնելու եւ նոցա վարած ագրեսիվ քաղաքականությունը չեզոքացնելու<sup>19</sup>»: Մա հաստատում է ցեղասպանությունը,

այդ թվում՝ Շուշիի կործանումը նախապես ծրագրելու և պետականորեն իրագործելու մասին մեր տեսակետը:

Իրադարձությունները, մեր կարծիքով, զարգացել են այսպես. Սուլթանովը հրամայել է զորքին՝ հարվածել հայության զխավոր կենտրոնին՝ Շուշիին: Միաժամանակ, Ադդամում կենտրոնացված զորքը եւ սպառազինված ամբոխը, ինչպես և կանխատեսված էր, սկսել են արշավանքը Ասկերան-Խոջալու-Խանքենդ-Շուշի գծով՝ նպատակ ունենալով համալրել ու ըստ ամենայնի աջակցել Շուշիի հայությանը հնազանդեցնող (իրականում՝ բնաջնջող) ոճրագործներին: Որ հենց ԱԳՀ-ն էր բացահայտ պատերազմ սկսել արցախահայության դեմ, վկայում է նաև այն փաստը, որ Գանձակի, Շամքորի և այլ ուղղություններով ադրբեջանական զորքերը՝ ուժեղացված զինավառ ավազակներով, լայնածավալ հարձակման էին անցել հայերի բռնի տեղահանության ու էթնիկական զտման նպատակով:

Մեր կարծիքով, արցախահայությանն ահաբեկելու, սարսափազդու կոտորածներով ընկճելու՝ ԱԳՀ-ի պետական քաղաքականության իրականացումը Սուլթանովի կողմից Շուշիից սկսելը պատահական չէր, քանի որ Արցախի մայրաքաղաքի բնակչությունն առնվազը 1919 թվականից պատանդի կարգավիճակի էր մատնվել (Լեռ) և, ինչպես վավերագրերն են հաստատում, հակառակորդի կողմից դիտվում էր Արցախը նվաճելու կարևոր գործոն: Այդ մասին է վկայում նաև հետևյալ վավերագիրը. «Հուսով եմ,- Ադրբեջանի նախարարների խորհրդի նախագահին հասցեագրված զեկույցում գրել է տխրահռչակ Սուլթանովը,- որ Շուշի քաղաքում Կենտրոնի և հայկական շարժման պաշտոնապես ենթարկեցումով, Ղարաբաղում հայերի ենթարկեցման հարցը արագ կընդունի բարեհաջող ավարտ»<sup>20</sup>:

Ինչպես արդեն ցույց ենք տվել, համաձայն նախապես ծրագրված մարտավարության (կամ ռազմական տերմինաբանությամբ՝ պաշտպանության մտահղացման), ինքնապաշտպանության ուժերը 1920 թ. մարտի 23-ին դուրս շարտեցին ադրբեջանցի զավթիչներին և ազատագրեցին ռազմատրատեգիական նշանակություն ունեցող Ասկերանը՝ ինչպես Ադդամից ադրբեջանական զորքերի հետագա առաջխաղացումը:

<sup>18</sup> Տես Հայերի կոտորածները Բարվի և Ելիզավետպոլի նահանգներում. 1918-1920թթ.: Պարսա. իսթ.՝ Վիրաբյան Լ., կազմ.: Միրզոյան Ս., Ղազիյան Լ., Եր., ՀՀ պարմութ. արխիվ, 2003, փաստ. 39, էջ 45, էջ 49:

<sup>19</sup> Նույն տեղում, փաստ. 362 (թիվ 132 առ 30 հունվարի 1920 թ., Բարք), էջ 434:

<sup>20</sup> Տես Назорный Карабаз в 1918-1923 гг. Сборник документов и материалов. Отв. ред. В. А. Микаелян, сост. Аюпян В. А., Балякин О. С., Вирабян А. С., Микаелян В. А., Эвоян В. С. Ереван, Изд. АН Армении, 1992, док. 153, с.238:

մը կասեցնելու, այնպես էլ կենաց մահու պայքարում Շուշիի ու Խանքենդի պաշտպանների թիկունքն ապահովելու համար: Այս առումով, Խանքենդի աղբրեջանական գործերի շրջապատումն էլ իր հերթին Ասկերանի և Շուշիի թիկունքն ապահովելու խնդիրն էր հետապնդում: Հենց ինքնապաշտպանությունից բխող այս քայլերն են աղբրեջանցիները նենգափոխել «ապստամբություն» հասկացությամբ, մի կողմից իրենց ոճրագործությունները «արդարացնելու», իսկ մյուս կողմից՝ ցեղասպանությունը ուրանալու, ապա և՛ ժխտելու նպատակով:

Որոշ հեղինակների մոտ կարելի է հանդիպել այն սխալ մտայնությունը, թե Շուշիի կորուստը դեռ Արցախի կորուստ չէր (ոմանք շատ հետո գնալով ակնարկում են Շուշին հանուն Արցախի «գոհարերելու» վարկածի մասին), մինչդեռ Շուշիի կորուստը, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, զգալի նահանջ էր իրական անկախության բարձունքից:

Այսպիսով, անդրադառնալով Շուշիի ողբերգության պատմագրության, մեր կարծիքով՝ ավելի հրատապ, հիմնահարցերին, հանգեցինք այն եզրակացությանը, որ դրանց մի մասը, և հատկապես «ապստամբության» առասպելը հայ պատմագրությունը շրջանառում է, ակամա հետևելով ցեղասպանության քաղաքականությունն ուրացող մեր հակառակորդների նենգափոխումներին: Դա հատկապես ակնհայտ է պատմությունը որպես քաղաքական զենք մեր դեմ օգտագործող մեր հարևանների վարած տեղեկատվական պատերազմի համատեքստում<sup>21</sup>: Բարեբախտաբար, հայրենական պատմագրության մեջ գնալով շատանում են այն ուսումնասիրողները, ովքեր դա լավ հասկանում են և, ըստ այդմ, վերանայում են նախորդ սխալ մոտեցումները:

<sup>21</sup> Арутюнян М. А., *Искажение истории как инструмент политики.- «Общероссийская и национальная идентичность». Материалы международной научно-практической конференции, 19-20 апреля 2012 г. / Ответственный редактор В. З. Акопян. - Пятигорск: Пятигорский государственный лингвистический университет, 2012, с. 353-362.*

## ՇՈՒՇԻԻ 1920 Թ. ՄԱՐՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՊԱՏՆԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպես հայտնի է՝ Արևմտյան Հայաստանից և այլ շրջաններից հայ ազգաբնակչության մեծամասնության բնաջնջումից կամ բռնատեղահանությունից հետո, անդրենաժին ժողովրդի ցեղասպանության դիվալին քաղաքականությունը Թուրքիան շարունակեց անպատիժ իրագործել նաև Արևելյան Հայաստանում ու Անդրկովկասի հայաբնակ այլ վայրերում: Դեռևս XVI- XVII դարերում, տարածաշրջանում հաստատվելու համար Իրանի և Թուրքիայի միջև ծավալված պայքարից, անզիջում մրցակցությունից ու երկարատև պատերազմներից տուժած հայ ազգաբնակչությունը ոչ միայն գոյատևում էր, այլ նաև ուժ էր գտնում իր մեջ արժանի հակահարված հասցնելու թուրք զավթիչներին: Հակաթուրքական պայքարի փայլուն էջեր գրվեցին XVIII դարի առաջին երեսնամյակում, երբ, ինչպես վկայում են վավերագրերը, միայն Արցախի լեռներում էին շարունակվել ինքնապաշտպանական մարտերը, մինչև վերջ մնալով անառիկ ու աներեր: Ազատագրական պայքարը չմարեց նաև Պարսկական արքունիքի և Թուրքիայի աջակցությամբ հակառուսական խանությունների ռազմական ներուժի մեծացման քաղաքականության արդյունքում նաև Ղարաբաղում՝ նման վարչական միավորի ստեղծումից հետո: Հայության դիրքերի հետագա թուլացմանն էր միտված նաև թուրք(թաթար) և հայ հանրությունների զինված ընդհարումների հրահրումը ողջ Անդրկովկասի տարածքում: 1918 թվականին թուրքական բանակի մի գորամաս, Ադրամից ճեղքելով հայ գյուղացիների պաշտպանական գիծը, ուղղվեց Շուշի: Այդ և հետագա երկու տարիներին, նախահարձակման ընթացքում թուրքերի մոզոնած ոճրագործությունները շարունակեցին աղբրեջանցիները՝ մուսավաթական ժամիշխանների գլխավորությամբ...

Թուրք և աղբրեջանցի վանդալներն ու մուսավաթական կառավարության զինված ուժերը Կովկասի Փարիզը և Անդրկովկասի մարզարիտը համարվող Շուշի քաղաքը 1920 թ. մարտի 23-ին վերածել էին կրոնական մոլեռանդության, զազանային բնազդների դրսևորման ասպարեզի: Ընդամենը մի քանի օրում հրո ճարակ դարձան ավելի քան մեկ դարի ընթացքում արարված համամարդկային արժեքները, հայ ժողովրդի մշակութային ժառանգության բացառիկ գոհարները, ճարտա-

րապետական կոթողներ, գազանաբար հոշոտվեցին շուրջ ութ հազար<sup>1</sup> խաղաղ բնակիչներ, առևանգվեցին և հետագայում մահմեդականացվեցին հարյուրավոր աղջիկներ ու երեխաներ, զնդաններ նետվեցին հազարավոր անմեղ մարդիկ:

Ադրբեջանի դեմոկրատական հորջորջված հանրապետությունը, իր խղճուկ ու կարճատև գոյության վախճանին, իրականացրեց Թուրքիայի ցեղասպանական քաղաքականությունը Գանձակի շրջանից մինչև Արաքս: Մինչ հայ ազգաբնակչությունը մի վերջին ճիգով փորձում էր հակահարված հասցնել անագորյուն թշնամուն, սրընթաց փոխվեց քաղաքական իրադրությունը: Ադրբեջանի հանցագործ վարչակարգի ոճրագործություններն այդպես էլ մնացին անպատիժ, որովհետև 11-րդ կարմիր բանակի ներխուժումն Անդրկովկաս և սվինների վրա նոր կարգերի ներմուծումը կտրուկ փոխեցին ուժերի դասավորությունը, ինչը վերստին համապատասխանում էր ակնթարթորեն կերպարանափոխված մուսավաթական պարագլուխների գիշատիչ շահերին, բարենպաստ պայմաններ ստեղծելով հայաբնակ մարզերի ու հենց Հայաստանի հանրապետության հանդեպ տարածքային պահանջներ ներկայացնելու և իրենց զավթողական քաղաքականությունը շարունակելու համար:

Ռուսական կայսրության տրոհումից հետո, Արցախի նկատմամբ կովկասյան թաթարների (որոնք հետագայում հորջորջվեցին ադրբեջանցիներ) հավակնությունների առանցքում առանձնահատուկ տեղ էր հատկացվում Շուշիին: Նոր հնչողություն էր ստացել «Շուշիին տիրողը տերն է ամբողջ Արցախի» հին իմաստնությունը: Մասամբ դրանով է բացատրվում այն, որ տաճկական զորքերը, ապա անգլիացիները, նրանց հետևից մուսավաթականները և, սրանց հետքերով, կարմիր բանակը ձգտում ու մղվում էին դեպի Արցախի հիմնավորց ուստանը: Ահա թե ինչու, Շուշիի մարտի 23-ի ողբերգությունը բացասաբար անդրադարձավ Ադրբեջանի զավթողական նկրտումներին դիմագրավելու, Արցախը Հայաստանի կազմում պահելու համաժողովրդական իղձերի իրականացման վրա: Ընդամին, վեր հանելով այդ ողբերգության պատճառները, հնարավոր կլինի լույս սփռել նաև այն մուծ ու խճողված հարցի վրա, թե երկարատև պայքարով իր ինքնուրույնությունը պահպանած Արցախի հայ ազգաբնակչությունը ինչպես հանկարծ հանիրավի

հայտնվեց Հայաստանից դուրս ու մեկուսացվեց նրանից:

Հարկ է առանձնացնել Շուշիի մարտյան ողբերգության թե ներքին և թե արտաքին պատճառները: Ներքին պատճառների մասին խոսելիս պետք է նկատի ունենալ այն ժամանակվա ղեկավար մարմինների, քաղաքական գործիչների՝ որոշ դեպքերում թույլ տրված վրիպումներն ու սխալները, թերացումներն ու ավելորդ զուշավորությունից եկող անվճռականությունը: 1999-ին հրատարակված մի ուշագրավ գրքում, որը ժամանակի ղեկավար գործիչներից մեկի՝ Եղիշե Իշխանյանի արժեքավոր հուշագրությունն է, խոսում փաստեր կան Արցախում և ամբողջ Հայաստանում քաղաքական առանձին կազմակերպությունների ու գործիչների, ինքնապաշտպանության որոշ ղեկավարների թույլ տված սխալների մասին, որոնք ծանր կորուստների պատճառ են դարձել, ունեցել անողղելի հետևանքներ: Հյրավի, պատմական դասեր են պարունակում կադրերի սխալ ընտրության, քաղաքական առումով միատարր կառավարության պատճառած վնասները: Ոչ պակաս վնասակար եղան բնակչության զանգվածային վերաբնակեցման մասին անիրական մտքերը, որ ունեին Հայաստանի ղեկավար մի քանի գործիչներ, ինչը խանգարում էր ինքնապաշտպանության ու երկրի կառավարման արդյունավետ կազմակերպմանը<sup>2</sup>: Ընդամին, այդ ամենը հաճախ դուրացրել է հակառակորդի չար դիտավորությունների իրագործումը, խոչընդոտել ճիշտ ու նպատակասլաց վճիռների կայացմանը: Այս առումով, իրեն չարդարացրեց Արցախի կառավարության խաղաղասիրական, հաշտվողական քաղաքականությունը: Հարևան ադրբեջանցիները չարաշահեցին հայ ղեկավարների բարյացակամությունը և հանդուրժողականությունը, ինչպես նաև օգտվեցին հայերի կողմից որդեգրված ինքնապաշտպանության պասսիվ ռազմավարությունից և ռազմական նախաձեռնությունը վերցրին իրենց ձեռքը: Թերացումների ու անվճռականության արտահայտություններ էին նաև ռուսական սահմանապահ 6-րդ զնդի հետ ընկած ստորաբաժանումների չզինաթափումը<sup>3</sup>, Բերդաձորի պաշտպաններին օգնություն չհասցնելն ու Թիֆլիսում կազմավորված Շուշիի (կամ Արցախյան) զնդի նշանակման վայր տեղափոխումը ժամանակին չկազմակերպելը, Չորավար Անդրանիկի ար-

<sup>1</sup> Շուշիում հայ բնակչության ցեղասպանության զոհերի թիվը տարբեր հեղինակների մոտ տարբեր է: Մրադիր ենք առաջիկայում առանչին ուսումնասիրության նյութ դարձնել այդ ոչ հասարակ խնդիրը:

<sup>2</sup> Իշխանյան Եղիշե, Լեռնային Ղարաբաղ, 1917-1920, Եր., 1999, էջ VIII: Հավելյալ մանրամասներով այդ տեղեկությունները լրացրել է Արրահամ Կիսիբեկյանը(տես նրա՝ Հուշեր, Գիրք Ա, գիրք Բ, Եր., 2011)

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 92-93

շավանքին չնպաստելը, դրածո գեներալ-նահանգապետին և Խանքենդում ու Շուշիում հիմնավորվող ադրբեջանական զինված կազմավորումներին լրջորեն ու ժամանակին չընդդիմանալը, 1919 թ. հունիսի սկզբներին Շուշիում Սուլթանովի արյունոտ սադրանքները, մոտակա Ղաչաբախչեն, Կրկժան, Փահլուլ (Վարդուք), Գաշուշեն գյուղերի ավերումներն ու բնակիչների կոտորածներն անպատիժ թողնելը, զինված պայքարին անբավարար նախապատրաստվելը և այլն: Ինչ խոսք, այդ ամենի մասին առանձին-առանձին կարելի է խոսել ավելի երկար, մանրամասները դիտարկելով օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքների ամբողջության մեջ, սակայն, նպատակահարմար ենք գտնում ծանրանալ, մեր կարծիքով, առավել կարևոր արտաքին գործոնների ու աշխարհաքաղաքական անբարենպաստ զարգացումների վրա:

Շուշիի ողբերգության և, ընդհանրապես, Արցախյան խնդրի չլուծման պատճառներից, թերևս, ամենագլխավորը, տաճկական գործոնն է: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, մանավանդ՝ ռուսական հեղափոխությունից հետո, տաճկական գործակալներ էին վխտում հավատակիցներով խիտ բնակեցված շրջաններում, հետամուտ լինելով Անդրկովկասում հենարան ունենալու և ռուսական կովկասյան բանակի թիկունքին սպառնալիք ստեղծելու, իսկ բարեպատեհ առիթով՝ նաև իրենց զավթողական ծրագրերը դյուրությամբ իրագործելու հեռագնա նպատակներին: Տաճկական գործերի բացահայտ ազդեցիկի հետևանքով 1918 թ. սեպտեմբերին ընկավ Բաքվի կոմունան և սրի քաշվեց հայ բնակչության մի մասը, ինչը ևս ծանր նստեց ու բացասաբար անդրադարձավ արցախյան իրադարձությունների վրա: Արցախի հայ ազգաբնակչության ուշքն ու միտքը Բաքվի իր հայրենակիցների գոյապայքարի վրա էր, հույս փայփայելով, թե նրանց ինքնապաշտպանության ուժերից տաճկական զավթիչները ջարդ ու փշուր կլինեն: Սակայն Բաքուն պաշտպանող օտարերկրյա ուժերը մերկացրին ճակատը, հայ կամավորներին թողնելով մենակ թշնամու մեծաքանակ ուժերի դեմ հանդիման: Իսկ թուրքերը ձգտում էին օր առաջ գրավել Բաքուն, որովհետև, ինչպես ժամանակակիցն է իր համար պարզել հետագայում, Եռյակ (Քառյակ) Ջինակցությունը նավթի ու բենզինի սուր կարիքի մեջ էր<sup>4</sup>: Փաստորեն թուրքերը կարողացան Գաշինքի շահերը ծառայեցնել իրենց կայսերապաշտական շահերին և լուծել պանթուրքա-

կան խնդիրներ: Անկասկած, մեծ էր Բաքվի ռազմավարական նշանակությունը: Կորցնելով Բաքուն, հայերը, ցավոք, ձեռքից բաց թողեցին այնպիսի մի հզոր տնտեսական ու քաղաքական գործոն, ինչպիսին նավթն էր, ինչի բացասական հետևանքներն աղետալի էին: Միաված չենք լինի, եթե ասենք, որ Բաքվի անկումը հանգեցրեց նաև Շուշիի անկմանը... Այս տեսակետից, թերևս, ճիշտ կլիներ Արցախից մարտական գործողությունների սկսման նշաններ ցույց տալ, շեղել տաճկաթաթարական ուժերի ուշադրությունը և, հնարավորինս, թեթևացնել Բաքվի պաշտպանների, դրանով իսկ՝ Արցախի ինքնապաշտպանության գործը: Սակայն, դժբախտաբար, ոչ Արցախից, ոչ էլ Գանձակից նման շարժումներ կամ խուսանավումներ չձեռնարկվեցին: Բաքվի պաշտպանները մեկուսի կռվեցին ու պարտվեցին: Հենց դրանից հետո տաճկական զորքերը հնարավորություն ստացան ներխուժել Արցախ և առանց լուրջ դիմադրության հանդիպելու, մտան Շուշի: Ինչքան էլ ջանանք արդարացնել կամ հիմնավորել ժամանակի քաղաքական գործիչների՝ Շուշիի հանձնման որոշումը, փաստելով պատերազմում Թուրքիայի վերահաս պարտության ակներևությունն ու ակնկալությունները, ինչպես նաև բնակչության զինաթափման և բանտարկության միջոցով ազատագրական շարժման ակտիվիստների մեկուսացման հետևանքների պայմանական թեթևությունն ու տանելիությունը, միևնույնն է, տաճկական զորքերի մուտքը ծանր հարված էր Շուշիի ինքնապաշտպանությանը, ինչը բարոյահոգեբանական ճնշող ներգործություն ունեցավ ու երկարատև նստվածք թողեց մարդկանց գիտակցության մեջ, իսկ դրան հակառակ, բարձրացրեց մահմեդական բնակչության մարտական ոգին ու ընդլայնեց հավակնությունների շրջանակը...

Առաջին աշխարհամարտի ավարտից ու Մուղրոսի հաշտության պայմանագրի ստորագրումից (1918 թ. հոկտեմբերի 30) հետո, երբ տաճկական զորքերը հարկադրված էին հեռանալ Անդրկովկասից, բազմաթիվ տաճիկ սպաներ, անգամ երիտթուրքական պարագլուխներ ու ռազմական հրահանգիչներ<sup>5</sup> մնացին մահմեդականներով բնակեցված շրջաններում և շարունակեցին իրենց սև գործը, բորբոքելով հավատակիցների մոլեռանդությունը, դավազրգռելով նրանց այլազգիների ու այլադավանների դեմ: Սակայն, մինչև հեռանալը տաճիկները

<sup>4</sup> Այդ մասին են վկայում արխիվային փաստաթղթերը: Տես, օրինակ, «Արցախ» հանդես, Սյրիփանակերտ, 1989, հ. 1, էջ 89:

<sup>4</sup> Նոյն տեղում, էջ 162:

հասցրել էին լուծել մի շարք ռազմավարական խնդիրներ, մասնավորապես, մուսավաթականների հետ համագործակցությամբ, ծանր հարվածներ էին հասցվել հայկական դիմադրական կարևոր կենտրոններին՝ Բաքվին, Շուշիին, հող նախապատրաստելով նորաթուխ Ադրբեջանի կայացման, այսինքն՝ Կովկասում տաճկական առաջնադիրքի (ֆորպոստի) հաստատման համար: Հետագա, մանավանդ՝ հայ-թուրքական պատերազմին և Մոսկվայի ու Կարսի չարադետ պայմանագրերին հաջորդած իրադարձություններն անառարկելիորեն ապացուցում են ոչ միայն Թուրքիա-Ադրբեջան հանցավոր կապերը, այլև բացահայտում տաճկական ռազմամոլների հեռագնա նպատակները Ադրբեջանի ստեղծմամբ Կովկասում իր մշտական աջակիցն ու հենարանն ունենալու, Իրանի նկատմամբ իր հավակնություններին հագուրդ տալու և, վերջանական արդյունքում, պանթուրանական ծավալապաշտ զառանցանքները կենսագործելու համար: Արցախյան պատերազմի տարիներին ժամանակակից Թուրքիայի բռնած բացահայտ հակահայկական դիրքը, իսկ վերջին շրջանում, Ադրբեջանում ու հատկապես՝ Նախիջևանում իր ռազմաքաղաքական ազդեցության մեծացումը, գալիս են մեկ անգամ ևս փաստելու աշխարհաքաղաքական զարգացումներում, ազդեցության գոտիների համար պայքարում ու շահերի բախման կիզակետում Ադրբեջան-Թուրքիա ագրեսիվ համագործակցության ակունքներն ու հարածուն վտանգը:

Վճռորոշ էր նաև անգլիական գործոնը: Տաճիկներին փոխարինած անգլիացիները հակված էին Արցախն ու Չանգեզուրը տեսնել Ադրբեջանի, իսկ Նախիջևանն ու Կարսի մարզը՝ Հայաստանի կազմում: Հայերը չկարողացան օգտվել թուրքական գործերի դեմ մարտնչելու, դրանով իսկ դաշնակից երկրների հաղթանակին նպաստելու հանգամանքից, ուստի անգլիացիներին սիրաշահելու և իրենց կողմը գրավելու հնարավորությունից: Ընդհակառակը, Բաքվում հաստատված անգլիական առաքելությունը, մշտապես գտնվելով մուսավաթականների քարոզների ու շողոքոթությունների ազդեցության տակ, ադրբեջանամետ քաղաքականություն էր վարում, մանավանդ, որ Անգլիան ու նրա դաշնակիցները, ինչպես իրենց ախոյան Չինակցությունը, նավթամթերքների կարիք էին զգում և զուտ շահադիտական նպատակով հակված էին զուհացնել ադրբեջանցիների, թեկուզ և ապօրինի ու հավակնոտ պահանջները: Կռահել կարելի է, թե ինչ միջոցներով էին ադրբեջանցիների պարագլուխները հայերին «սևացնում անգլիացիների աչքին», մեղադ-

րելով հայերին բոլշևիկյան գաղափարների տարածման, ռուսափրության մեջ: Ադրբեջանական կողմը ներշնչում էր անգլիացիներին, թե իբր Հայաստանի կառավարության ներկայացուցիչները հակաանգլիական միտումներ են մտցնում ժողովրդի մեջ<sup>6</sup>: Պակաս ազդեցություն չունեցավ նաև Բաքվի կոմունայում հայերի գլխավոր դերի ու դիրքի հանգամանքը, ինչը ևս վարպետորեն շահարկվեց մուսավաթականների կողմից: Այս ամենին զուգընթաց, անշուշտ, չպետք է անտեսել նաև անգլիացիների ֆինանսատնտեսական և այլ շահերի հետևանքները<sup>7</sup>:

Կարելի է առանձնացնել այսպես կոչված թուրք-ադրբեջանական գործոնի ևս մի քանի դրսևորումներ: Անգլիացիների օժանդակությամբ ու պաշտպանությամբ գեներալ-նահանգապետության հաստատումն Արցախում հող նախապատրաստեց Ադրբեջանի զավթողական նկրտումների իրականացման և բռնապետության հաստատման համար: Այդ ճանապարհին Ադրբեջանը չէր կանգնում ոչնչի առաջ, սկսած տնտեսական բոյկոտից ու շրջափակումից, վերջացրած բնակավայրերի ու խաղաղ բնակչության բնաջնջմամբ: Ի դեպ, XX հարյուրամյակի վերջերին Խորհրդային Ադրբեջանի իշխանություններն այս նույն մեթոդներն էին կիրառում, նպատակ ունենալով ճնշել Արցախի հայ ազգաբնակչության օրինական, ժողովրդավարական շարժումը:

Դեմոկրատական հորջորջված Ադրբեջանը պատերազմ սկսեց ու բացահայտ ագրեսիա ձեռնարկեց Արցախի դեմ: Պաշարված փոքրիկ լեռնաշխարհի շուրջ ու ներսում ծավալված ծանր մարտերը, մանավանդ՝ Շուշիում, Վարաթակնում, ապա և՛ Ասկերանում, հիմնականում անհաջող էին ընթանում հայերի համար, որովհետև զգացվում էր գեներալի ու զինամթերքի պակաս, մյուս կողմից էլ Ադրբեջանը Արցախի դեմ էր հանել իր գրեթե ամբողջ զինուժն ու զինանոցը, ինչի հետևանքով էլ, թերևս, ապրիլի 28-ին 11-րդ կարմիր բանակը, առանց լուրջ դիմադրության, գրավեց Բաքուն:

Արտաքին ու ներքին գործոնների միջակայքում կարելի է առանձնացնել Հայաստանի հանրապետության կրավորական դիրքը և գործնական օգնության ուշացումը: Դրաստամատ Կանայանի ու Գարեգին

<sup>6</sup> *Իշխանեան Եղիշե, Լեռնային Ղարաբաղ. 1917-1920, էջ 84:*

<sup>7</sup> *Այդ մասին, բրիտանական արխիվների նյութերի հիման վրա, արժեքավոր փոհեկություններ է հաղորդում Ռիչարդ Հովհաննիսյանը: Shu Hovannisian Richard, The Republik of Armenia. v. 1. The first year, 1918 - 1919. University of California press, Berkeley.Los Angeles.London, 1972, pp. 156-161.*

Նժդեհի գործառնաբանի ուշացած միջամտությունը եղավ այն ժամանակ, երբ այլևս Շուշին ավերված էր և Ադրբեջանն արդեն պատերազմական գործողություններ էր վարում Արցախի մյուս շրջաններում: Սակայն, այդ ուշացված օգնությունն էլ ունեցավ որոշակի նշանակություն, թեև ներքին անհամերաշխությունը և հայ բոլշևիկների առճակատումը, ինչպես նաև կարմիր բանակի նախահարձակումը և այլ գործոնների առկայությունը, ի չիք դարձրին սպասվող դրական տեղաշարժերը ու նախանշվող հաջողությունները:

Կարծիքներ կան, թե Ադրբեջանի մուսավաթական կառավարության մայրամուտին հայերի ընդվզումը սխալ էր և ժամանակ շահելու դեպքում հնարավոր էր խուսափել Շուշիի ավերումից ու բնակչության սրածուրմից: Սակայն, բազմաթիվ փաստեր գալիս են հաստատելու, որ Մուլթանովը և Ադրբեջանի ղեկավարները ակտիվորեն նախապատրաստվում էին զենքի ուժով Արցախը նվաճելուն, իսկ այդ նպատակի համար գլխավոր թիրախ էր ընտրված հենց Շուշի քաղաքը: Ավելորդ չենք համարում մեկ անգամ ևս մեջ բերելու վավերագրի ուշագրավ հատվածը. «Հուսով եմ, - Ադրբեջանի նախարարների խորհրդի նախագահին հասցեագրված զեկույցում գրել է տխրահոշակ Մուլթանովը, - որ Շուշի քաղաքում Կենտրոնի և հայկական շարժման պաշտոնական ենթարկեցման հետ, Ղարաբաղում հայերի ենթարկեցման հարցը արագ կընդունի բարեհաջող ավարտ»<sup>8</sup>: Մեկ այլ ժամանակակցի վկայությամբ՝ «Կամենայով մեկընդմիջում վերջ տալ Արցախի ինքնուրույնությանը, մուսավաթականները, 1920 թ. մարտի սկզբներին իրենց գրեթե ամբողջ կանոնավոր գործերը և բազմաթիվ զինված ավազակախմբերը, նետեցին նրա սահմանների ուղղությամբ, իսկ մարտի 20-ին հայ ազգաբնակչությանը զինաթափվելու վերջնագիր ներկայացրին»<sup>9</sup>: Այլ վկայություններ ևս կան: «Մարտ ամսվա սկզբներին, նոր համալրումներով կրկին ուժեղացվեցին Շուշիի, Խանքենդու և Ադղամի կայազորները: Շուշիում երևացին թուրք սպաներ, զեներալ Խալիլ փաշայի գլխավորությամբ»<sup>10</sup>: Մինչ այդ, Շուշի էին ժամանել Նուրի փաշան և Նովրուզովը: Ադրբեջա-

նի կառավարությունը նրանց պարտավորեցրել էր գործել «լայն մասշտաբով և ենթարկել տալ Ղարաբաղ-Ջանգեզուրը»<sup>11</sup>: Այս ամենը վկայում է, որ Շուշիի աղետն առանց առիթի էլ, վաղ թե ուշ, լինելու էր, քանի որ դեմոկրատական հորջորջված Ադրբեջանն իր վերջին շնչում իսկ կատարելու էր Թուրքիայի կողմից նախանշված սև գործը՝ հայ բնակչության էթնիկ մաքրումն ավարտին հասցնելու համար Արցախի մայրաքաղաք Շուշին կործանելու դիվալին «առաքելությունը»...

Շուշիի ողբերգության պատճառների շարքին կարելի է դասել տնտեսական գործոնը: Շուշիի տնտեսական անկումը<sup>12</sup>, ինչն, անկասկած, ազդում էր նաև բնակչության կարողությունների ու դիմադրական ոգու վրա, պարարտ հող նախապատրաստեց այն հեշտությամբ կործանելու հրեշավոր ծրագրի իրականացման համար: Օբյեկտիվ պատճառներից էին նաև հաղորդակցության ճանապարհների արյույնավետ օգտագործման հնարավորության, կապի միջոցների բացակայությունը, տնտեսապես կախված լինելը երբեմնի ռուսական կայսրության այլ շրջաններից և այլն:

Մուրյեկտիվ պատճառներից զուտ ռազմական գործի կազմակերպման թերացումներից պետք է առանձնացնել հայկական կանոնավոր ստորաբաժանումների ու ինքնապաշտպանության համակարգի ու ղեկավարող կառույցների չկատարելագործումը, հետախուզության ու հակահետախուզության բացակայությունը, թշնամու վարձած լրտեսների առկայությունը, գաղտնիության կանոնների անտեսումը, ծաղկող բերանբացությունը, թշնամու նկատմամբ վերահսկողության բացակայությունը, նրա ծրագրերի ու գործողությունների չիմացությունը, իրավիճակին չտիրապետելը, դանդաղկոտությունը և այլն:

Շուշիի հայոց մասի կործանումը, որ հարցականի տակ դրեց ողջ Արցախի գոյությունը, լայն արձագանք գտավ ու զայրույթի պոռթկում առաջացրեց հայ և այլազգի հասարակայնության շրջանում, որոնց բողոքներն ու ցասումի խոսքերը մնացին որպես «ձայն բարբառո յանպատի»:

Իհարկե, խոսքերով չէ, որ պետք է հետ բերելին Շուշին, այլ զենքի միջոցով ու արյան զնով, ինչը հաջողվեց 1992 թ. մայիսի 8-9-ին, մեր ազգի լավագույն զավակների շնորհիվ:

<sup>11</sup> *Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов, док. 250, с.373, док. 262, с.386*

<sup>12</sup> *Տիր-Պապարյան Ռ. Հ., Շուշի քաղաքը, Եր., 1993, էջ 60-63:*

<sup>8</sup> *Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов. Отв. ред. В. А. Микаелян, сост. Аюпян В. А., Балакян О. С., Вирабян А. С., Микаелян В. А., Эвоян В. С. Ереван, Изд. АН Армении, 1992, док. 153, с. 238.*

<sup>9</sup> *Правда о Нагорном Карабахе. Сост. В. А. Товмасын, Ю. Б. Нерсисян. Степанакерт, 1989, с. 27.*

<sup>10</sup> *Հովհաննիսյան Գ. Ա., Սովետական իշխանության հասարակումը Լեռնային Ղարաբաղում, Եր., 1971, էջ 142:*

## ԱՐՄԵՆՈՑԻԳԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՐԱՅՈՒՄԸ ԵՎ ԱՊՍԱՍՐՔՈՒԹՅԱՆ ԱՌԱՍՊԵԼԸ

Իննուկես տասնամյակ առաջ հրի մատնվեց ու հիմնահատակ ավերվեց Շուշի քաղաքը: Մուսավաթական բանակի սպաների վարձակալած տները նրանց իսկ կողմից հրի մատնելուց հետո, մի քանի օր մոլեգնող հրդեհը մոխրակույտերի վերածեց դարերի ընթացքում ստեղծված և համամարդկային նշանակություն ունեցող արժեքները, իսկ այդ ամենն արարած մարդիկ դաժան հաշվեհարդարի զոհ դարձան: Փաստերը ցույց են տալիս, որ այդ ողբերգական դեպքերը շարունակությունն էին արևմտահայության զգալի մասի բնաջնջումից կամ իր բնօրրանից՝ Արևմտյան Հայաստանից նրա դեպորտացիայից ու հայրենազրկումից հետո նաև Արևելյան Հայաստանում և Անդրկովկասի հայաբնակ այլ վայրերում հայ ժողովրդի ցեղասպանության՝ Թուրքիայի քաղաքականության:

Շուշիի ողբերգության պատմաքաղաքական վերլուծության և դասերի վերահանման բնագավառում հայ պատմագրությունը դեռևս անելիքներ ունի: Շրջանառվող գնահատականները հակասական ու կողմնակալ են: Թեման առանձին ուսումնասիրության նյութ դարձնելու, աղետը ծնած պատճառների բացահայտման մեր ջանքերը շարունակվում են:

Բազմաթիվ անդրադարձների ու տեսակետների մեջ հատկապես վրդովվեցուցիչ են ոճրագործությունը ծրագրած ու իրականացրած մուսավաթական ժամիշխանների ու նրանց գաղափարախոսների ցինիկ մեղադրանքները: Հենց ոճրագործության նախապատրաստական փուլում և անմիջապես արյունահեղություններին զուգընթաց, նրանք շրջանառության մեջ դրեցին հայերի ապստամբության մասին ստահող վարկածը, կազմակերպված ոճրագործությունը փորձելով ներկայացնել որպես հայերի հուսահատ ընդվզման հետևանք: Այնինչ, բոլոր փաստերը վկայում են, որ Շուշիի մարտյան եղեռնագործությունը Թուրքիայի կողմից ծրագրված և ԱՂՀ-ի կողմից պետականորեն կազմակերպված ու իրագործված ցեղասպանության քաղաքականության հերթական դրսևորումն էր, որն ուրանալու համար հանցագործները լկտիաբար նենգափոխում են իրական փաստերը: Կարծում ենք, որ այդ նույն ժխտողականության մեկ այլ դրսևորում են Խոջալուի վերաբերյալ աղբբեջանթուրքական քարոզչամեթոդային ապատեղեկատվության տարա-

ծումը կամ աղբբեջանցիների ցեղասպանության օր մոգոնելը<sup>1</sup>:

Մենք արդեն ներկայացրել ենք, թե ինչպես էին Շուշիում կատարված ոճրագործությունների վերաբերյալ 1920 թ. մարտի 30-ին «Մուսավաթի» խորհրդի ընդհանուր ժողովի, իսկ ապրիլի 1-ին Աղբբեջանի պառլամենտի ընդունած բանաձևերում մեղադրվել են հայերին ու Հայաստանի կառավարությանը, փորձելով քավության նոխազ դարձնել մի խումբ «ապստամբների»: Միաժամանակ աղբբեջանական կողմը սպառնալիքներ էր կարդում Ղարաբաղի հայության գլխին:

Ինչպես արդեն նշել ենք, մեր հայրենակից Լեոն, ակներևաբար, տուրք տալով բոլշևիկյան նոր հաստատված իշխանության գովերգման մտայնությանը, ինչպես նաև նրա առաջ քաշած հավասարեցման կեղծ առանցքագաղափարին, ըստ որի, Շուշիի ողբերգության մեղավորներ են թե մուսավաթականները և թե դաշնակցականները, գրեթե կրկնել է մուսավաթականների, իսկ սրանցից էլ ժառանգած՝ բոլշևիկների անհիմն մեղադրանքները<sup>2</sup>:

Լեոյի մեղադրանքների թիրախ դարձած Արսեն Միքայելյանը, թվարկելով հակառակորդի ագրեսիվ գործողությունները և ներկայացնելով վճռական բախման անխուսափելիությունը, ջանում էր ապացուցել, որ բավարար ուժեր կային բնակչության ինքնապաշտպանության ու անվտանգության ապահովման համար, սակայն առկա հնարավորությունները չօգտագործվեցին<sup>3</sup>: Անշուշտ, տեղի սղությունը հնարավորություն չի տալիս անդրադառնալ բոլոր կարծիքներին, բայցևայնպես, այս երկուսը, թերևս, տիպական են ու բավական խոսուր, ուստի խնդրոստարկա թեմայի լուսաբանման համար կարևոր են: Հարկ է նշել, որ տարաբնույթ ու զանազան ծագում ունեցող փաստաթղթերում հանդիպող տեսակետները, իրար հակասող տեղեկությունները իսկական խառնաշփոթ են ստեղծել և գրեթե անհնար դարձրել միանշանակորեն որևէ վարկած պնդելը, մանավանդ՝ ապացուցելու հաջողությունը: Այս խառնիճադանջությունը, ցավոք, նկատելի է նաև հետագա ուսումնասիրողների աշխատություններում: Այն տպավորությունն է ստեղծվում, որ արխիվային փաստաթղթերը հաճախ օգտագործվել են ոչ քննադա-

<sup>1</sup> Арутюнян М. А., Искажение истории региона - политическая цель Азербайджанской республики. - «Вестник» Университета Месроп Маштоц (сборник научных статей), 2012, 1 (12), с. 72-80.

<sup>2</sup> Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, 437-438 (տես. սույնգրքույկը, էջ 31)

<sup>3</sup> Միքայելյան Արսեն, Ղարաբաղի վերջին դեպքերը, «Հայրենիք» ամսագիր, Բուսրոն, 1923, հոկ. 11, էջ 118, հոկ. 12, էջ 121 (տես. սույնգրքույկը, էջ 30):

տաքար, առանց դրանցում առկա տեղեկությունների ստուգման և ծագման բնույթի հաշվառման (օրինակ, կապված նախկին քաղաքական ուժերին վարկաբեկելու խորհրդային իշխանությունների որդեգրած ուղեգծի հետ, շատ են միտումնավոր կամ վարկաբեկիչ նյութերը և ակնհայտ քաղաքական պատվեր կատարող, ոչ իրավասու կամ աչառու հեղինակները):

Ուսումնասիրելով այդ շրջանին վերաբերող բազմաթիվ փաստաթղթեր ու վավերագրեր, որոնց մեծ մասը հրապարակվել է առանձին ժողովածուներում, գիտական հանդեսներում ու աշխատությունների հավելվածներում, կարելի է գալ այն եզրահանգման, որ դրանցում ապակողմնորոշող ու գիտականության պահանջները չբավարարող, ինչու չէ՞ նաև անարժանահավատ տեղեկություններ շատ կան, որոնց սարդոստայնում չխճճվելու համար հարկ է քննախույզ մոտեցում ցուցաբերել և դրանք օգտագործել զգուշորեն, կիրառելով պատմահամեմատական մեթոդը և, որ կարևոր է՝ իրադարձությունների զարգացման տրամաբանությանը համապատասխան: Անշուշտ, դրանով չենք ուզում ասել, թե նախորդ ուսումնասիրողներն այս ամենը չեն նկատել և, առավել ևս՝ մտադիր չենք նշույլ անգամ նսեմացնել կամ ստվեր գցել նրանց կատարած շնորհակալ ու տքնաջան աշխատանքի վրա: Բայց նաև չենք կարող չարտահայտել նրանց երկերից մեր ստացած տպավորությունը, որոնց ընդհանուր թերությունը, մեր կարծիքով, քաղաքագիտական մտքի ու գնահատականների պակասն է: Սա հատկապես ակնհայտ է, այսպես կոչված՝ «ապստամբության» առասպելի տարփողման ու անհարկի ուռճացման պարագայում, մինչդեռ չենք կարծում, թե ամեն ինչ եղել է այնպես, ինչպես ներկայացվում է, մանավանդ, որ դրանից հակառակորդի ասպարեզ հանած հերթական քաղաքական սաղրանքի կամ խայծի հոտ է փչում: Պատահական չէ, որ ուսումնասիրողներից ոմանք (Բ. Ուլուբաբյան, Հ. Հարությունյան և ուրիշներ) փորձել են խուսանավել երկու տեսակետների միջև (այսինքն՝ ապստամբություն<sup>6</sup>, թե՞ զինված ինքնապաշտպանություն նախահարձակ եղած աղբբեջանական զորքերից): Ինչպես արդեն նշել ենք, հեղինակների պնդումների ընդհանուր մտայնությունն այն է, որ էլեկտրականացված (լարված) մթնոլորտում Սուլթանովը և մյուս դահիճները առիթի էին սպասում վաղուց ծրագրված հայերի բնաջնջումն իրականացնելու համար: Սա ևս կարելի է ընդունել: Սակայն, ոչ համոզիչ ու անտրամաբանական է այդ «առիթը հայերի կողմից տալու» մասին թյուր վարկածը: Փաստը մնում է փաստ, որ թուրք-աղբբեջանցիներից ու քրդերից կազմված ավազա-

կախմբերի ու կանոնավոր զորքերի հարձակմանը հայերը պատասխանել են ինքնապաշտպանությամբ, ինչը Աղբբեջանի քարոզչությունը ներկայացրել է որպես ապստամբություն, հետևանքը պատճառի նենգափոխելու միջոցով միջազգային հանրությանը մոլորեցնելու և երբեմնի ծաղկուն Շուշի քաղաքի ավերումն ու հայ բնակչության ոչնչացումն արդարացնելու նպատակով:

Մյուսնում համոզվելու համար բավական է վերհիշել նախընթաց ու հաջորդած իրադարձությունները և դրանց վերլուծության հիման վրա կառուցված թուրք-թաթարական (աղբբեջանական) քաղաքական մտածողության ու «տրամաբանության» պատկերը, որն, ի դեպ, յուրահատուկ է, եթե չասենք՝ բացառապես բնորոշ է մեկնել խորթ ու օտար քաղաքակիրթ շրջապատում և բարեբեր երկրում հայտնված, բայց դեռևս զարգացման անհամեմատ ցածր մակարդակում գտնվող և տակավին քոչվորական կացութաձև ունեցող ցեղերին: Այս միտքը զարգացնելիս մենք հենվել ենք 1905-1906 թթ. թուրք (թաթար) - հայկական ընդհարումներին, 1915 թ. Հայոց մեծ եղեռնին, 1918 թ. Բաքվի սեպտեմբերյան ոճրագործություններին, 1919 թ. ամռանը Շուշիի մերձակա բնակավայրերի հայ բնակչության բնաջնջմանը, 1920 թ. նախկին Ելիզավետպոլի նահանգի հայության էթնիկական գտմանը, 1988 թ. սումգայիթյան, 1990 թ. Բաքվի, 1992 թ. ապրիլի 10-ի Մարաղայի բարբարոսություններին, և, ընդհանրապես, ԼՂՀ-Աղբբեջան հակամարտությանը թուրք-աղբբեջանական ցինիկ գնահատականների ու «հակափաստարկների» համադրման ու վերլուծության արդյունքների վրա, այդ երկար շրթայի մի օղակը դիտելով նաև Շուշիի 1920 թ. մարտյան ողբերգությունը...

Անառարկելի է, որ «Ապստամբության» առասպելը և իբր «դրան ի պատասխան հայերի բնաջնջման» սցենարը թուրքերը գործադրում են հնուց ի վեր: Անգամ Հայոց մեծ եղեռնը, որին զոհ է գնացել ավելի քան 1,5 միլիոն մարդ, նրանք ցինիկաբար փորձում են ներկայացնել որպես հայերի ըմբոստության ու ապստամբության պատասխան: Մինչդեռ, ապստամբությունները, եթե եղել են, և, ընդհանրապես, հայ ժողովրդի ազատագրական պայքարը ուղղված են եղել թուրքերի հայահալած, ազգային, կրոնական, մշակութային, տնտեսական ճնշումների ու բռնությունների դեմ, երբ ծայրահեղ ու օրհասական վիճակի հասցված մարդկանց այլ բան չէր մնում, քան վերջին հուսահատ փորձը ձեռնարկել դանդաղ մահվանից փրկվելու համար: Հենց այդ հրահրված, սաղրված, ինչու չէ՞ պարտադրված ընդվզումն էլ թուրք ոճրագործները առիթ էին դարձնում վաղուց ծրագրված ցեղասպանության քաղաքականու-

թյունը կենսագործելու՝ հայերին բնաջնջելու համար:

Ուսումնասիրելով անցյալի մասին բազմաթիվ վավերագրերն ու վկայությունները, գալիս ենք այն համոզման, որ իրենց այրուրտ տիրապետության հաստատման հենց սկզբից թուրք ռճրագործները ոչ մահմեդական ժողովուրդներին և, հատկապես, հայ ազգաբնակչությանը, որպես՝ Հայկական լեռնաշխարհի տեր, դատապարտել էին դանդաղ ոչնչացման կամ ուժացման: Հետևաբար, պանթուրպական քաղաքականությանը կուլ չգնալու և իր հայրենիքում ապրելու իրավունքը պաշտպանելու համար հայությունը հակազդում էր բոլոր հնարավոր միջոցներով: Բնականաբար, զինված ինքնապաշտպանությունն այլընտրանք չուներ, սակայն պատմական հայրենիքում հայ ժողովրդի ֆիզիկապես գոյատևելու խնդիրը ամբողջովին չուժեց, ինչի ողջ պատասխանատվությունն ընկած է դեկավարությունն ստանձնած ժամանակի քաղաքական ուժերի վրա...

Իսկ թուրքերը հայերին մեղադրում են իրականությունից հեռու պնդումներով, նենգափոխելով փաստերը: Այդպիսի մի օրինակ է Նուրի փաշայի աղվեսային արտահայտությունը. «...տաճկահայոց կործանման համար հանցավոր են եւ հայերը, որ խաղալիք դարձան այս տերություններին (Անգլիային եւ Ռուսաստանին.- Մ.Հ.), սկսեցին ապստամբական շարժումները եւ իրենց դեմ առաջ բերին զայլ ձեռնարկություններ եւ անբաղդացան»<sup>4</sup>:

Մինչդեռ, հայերի բնաջնջման հրեշավոր գործողությունները ծրագրվում ու նախապատրաստվում էին վաղորոք, ինչքան էլ տարօրինակ թվա, առանց քողարկման, հակահայկական հիատերիայի ու կույր ատելության ներարկման քարոզարշավի ընթացքում:

Փաստ է, որ արդեն 1920 թ. սկզբներին Ադրբեջանում գլուխ էին բարձրացրել իթթիհատականները և ագրեսիվ քարոզչություն ու տրամադրություններ էին տարածում և՛ կառավարության, և՛ ողջ մահմեդական բնակչության շրջանում: Այդ մասին յուր ժամանակին իրազեկել է Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանը՝ Ուորդոուպի հետ ունեցած գրույցի մասին զեկույցում<sup>5</sup>: Փաստերը բազմաթիվ են, որոնք հաստատում են ցեղասպանու-

<sup>4</sup> Տես Հայերի կոտորածները Բարվի և Ելիզավետպոլի նահանգներում, 1918-1920թթ.: Պարսա. իսթ.՝ «Իրաքրան Ա., կազմ.՝ Միրզոյան Ա., Ղազիյան Ա., Երեսան, ՀՀ պարտուր. արխիվ, 2003, փաստ. 39, էջ 45, էջ 49:

<sup>5</sup> Նույն տեղում, փաստ. 362 (թիվ 132 առ 30 հունվարի 1920թ. Բարոյ), էջ 434:

թյան, այդ թվում՝ Շուշիի կործանման վաղորոք ծրագրված ու կազմակերպված լինելու մասին մեր տեսակետը:

Իրադարձությունները, մեր կարծիքով, զարգացել են այսպես: Տեղեկություններ ունենալով, որ հաշված օրեր են մնացել Ադրբեջանի գոյությանը և մերժում ստանալով հայերի զինաթափության վերաբերյալ իր վերջնագրին, Մուլթանովը հրամայել է զորքին հարված հասցնել հայության գլխավոր կենտրոնին՝ Շուշիին: Միաժամանակ, Ադղամում կենտրոնացված զորքը և սպառազինված ամբոխը, ինչպես և կանխատեսված էր, սկսել են արշավանքը Ասկերան-Խոջալու-Խանքենդ-Շուշի գծով՝ նպատակ ունենալով համարել ու ըստ ամենայնի աջակցել Շուշիի հայությանը հնազանդեցնող (իրականում՝ բնաջնջող) ռճրագործներին: Որ հենց ԱԳՀ-ն էր բացահայտ պատերազմ սկսել Արցախի հայ ազգաբնակչության դեմ, վկայում է նաև այն փաստը, որ Գանձակի, Շամքորի և այլ ուղղություններով ադրբեջանական զորքերը՝ ուժեղացված զինավառ ավազակներով, լայնածավալ հարձակման էին անցել հայերի բռնի տեղահանության ու էթնիկական զտման նպատակով:

Արցախահայությանն ահաբեկելու, սարսափազդու կոտորածներով ընկճելու՝ ԱԳՀ-ի պետական քաղաքականության իրականացումը Մուլթանովի կողմից Շուշիից սկսելը պատահական չէր, քանի որ Արցախի մայրաքաղաքի բնակչությունն առնվազը 1919-ից պատանդի կարգավիճակի էր մատնվել (Լեռ) և, ինչպես վավերագրերն են հաստատում, հակառակորդի կողմից դիտվում էր Արցախը նվաճելու կարևոր գործոն:

Համաձայն նախապես ծրագրված մարտավարության (կամ ռազմական տերմինաբանությամբ՝ պաշտպանության մտահղացման), ինքնապաշտպանության ուժերը 1920 թ. մարտի 23-ին դուրս շարտեցին նախահարձակման անցած ադրբեջանցի զավթիչներին և ազատագրեցին Ասկերանը, որը ռազմաստրատեգիական նշանակություն ուներ ինչպես Ադղամից ադրբեջանական զորքերի հետագա առաջխաղացումը կասեցնելու, այնպես էլ կենաց մահու պայքարում Շուշիի ու Խանքենդի պաշտպանների թիկունքն ապահովելու համար: Այս առումով, Խանքենդի ադրբեջանական զորքերի շրջապատումն ու զինաթափման փորձն էլ իրենց հերթին Ասկերանի և Շուշիի թիկունքն ապահովելու խնդիրն էին հետապնդում: Հենց ինքնապաշտպանությունից բխող այս քայլերն են ադրբեջանցիները նենգափոխել «ապստամբություն» հասկացությամբ, մի կողմից իրենց ռճրագործությունները «արդարացնելու», իսկ մյուս կողմից՝ ցեղասպանությունը ուրանալու, ապա և՛ ժխտելու նպատակով:

## ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԳԻԼԵՏԱՆՏՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՀԱՆԳՈՒՐԺՈՒՄ

Պատմագիտությունը որքան մատչելի է թվում, այնքան (եթե ոչ ավելի) բարդ է իրականում: Այն նման է ծովի, որ գալթակդում, կլանում և իր անհուններում խորտակում է բոլոր վատ «նավարկուներին»: Խոսքը ոչ մասնագետների մասին է, որոնք պատեհ-անպատեհ առիթներով հրապարակ են իջնում պատմության լուրջ հիմնահարցերի վերաբերյալ մտավարժանքներով:

Այս անգամ պատմաբանի պատմուճան է հագել Վ. Ղազարյանը և «Մի հանիրավի մեղադրանքի առթիվ» հրապարակմամբ<sup>1</sup> փորձել վիճարկել Շուշիի 1920 թ. մարտի 23-ի ողբերգության դրդապատճառների մասին մեր եզրահանգումները: Լուրջ հիմնավորումների ու հավաստի փաստարկների բացակայությունը, փաստական անճշտությունների և իրադարձությունների կամայական մեկնաբանությունների առատությունը, սխալ ճշմարտության փոխարեն, և ընդհակառակը, մատուցելու, սեփական կարծիքը ուրիշի վզին փաթաթելու գրելաոճը վկայում են հրապարակման հեղինակի սիրողական մակարդակը, պատմության խնդիրների ու սկզբունքների չիմացության, թեմային մակերեսորեն ծանոթ լինելու մասին: Դեռ ավելին, մատենագիտական խղճուկ պաշարով նա ջանում է հերքել շուրջ երեսուն անուն գրականության, հուշագրությունների և փաստաթղթերի ժողովածուների ուսումնասիրությամբ արված եզրահանգումները: Ի դեպ, «Խորհրդածություն Շուշիի մեծ ողբերգության շուրջ» հոդվածը<sup>2</sup>, որ բնավ գիտական չէ, այլ ավելի շատ քարոզչական բնույթ է կրում, ընդամենը հատվածներ է (որոնք, դժբախտաբար, մենք չենք ընտրել) ավելի ծավալուն գիտական աշխատությունից, որը տպագրության կտանք առաջիկայում...

Նկատենք, որ մի քանի անգամ նույն հեղինակի (կամ սկզբնաղբյուրի) վկայակոչումը բնավ չի նշանակում բացառապես հիմնվել նրա տեղեկությունների վրա: Այլապես, նույն մոտեցմամբ պետք է մեղադրվի Վ. Ղազարյանը՝ մեծամասամբ Ջ. Մելիք-Շահնազարովի հուշերից օգտվելու համար: Ի դեպ, նա ընկել է մի այլ ծայրահեղության մեջ և Ջ. Մելիք-Շահնազարովի սխալները կրկնում ու իրար հետևից մատուցում

է ընթերցողին, մոռանալով, որ յուրաքանչյուր աղբյուր և վկայություն պետք է քննադատաբար օգտագործել, այն էլ միայն այլ աղբյուրների հետ համեմատելուց հետո: Ջ. Մելիք-Շահնազարովը, որն այն ժամանակ ընդամենը 16-17 տարեկան մի պատանի էր, շարքային զինվոր, որ լոկ գրագրություն էր անում, բավարար իրազեկվածություն ու իրադարձությունների իմաստավորված ընկալում չէր կարող ունենալ, ինչը և հաստատվում է նրա հուշագրության բովանդակությամբ: Վ. Ղազարյանին խորհուրդ կտայինք ծանոթանալ մյուս նշանավոր ժամանակակիցների՝ Եղիշե Իշխանյանի, Հարություն Թումյանի, Միրզա Տեր-Սարգսյանի (Մխոսարի), Մխաթ Տեր-Գանիելյանի (Արամայիսի), Հովակ Ստեփանյանի, Քիրո Սարտի (Սարուրի), Աբրահամ Կիսիբեկյանի և այլոց հուշագրություններին ու անձամբ համոզվել ասվածի ճշմարտացիության մեջ:

Մերկապարանոց հայտարարելով ինչ-որ «անմխիթար եզրահանգումների» մասին, հեղինակը նույն քննադատությամբ ընթերցողին է պարտադրում իր սխալ տպավորությունները:

Վիճարկելով վաղուց արդեն հանուրի կողմից ընդունված փաստերը, հենվելով կամայական մեկնաբանությունների վրա, Վ. Ղազարյանը հաճախ մատուցում է ոչ թե տեղի ունեցածի դրդապատճառը, այլ դրա հետևանքները միայն: Ձորօրինակ, խոսելով Լեռնային Ղարաբաղի շուրջ տաճկական և թաթարական զորամասերի կուտակման մասին, նա խորհրդավոր լուրջությամբ է պահպանում դրա սկզբնապատճառի՝ Բաթումի խայտառակ պայմանագրի մասին, որով ոչ միայն կայացվեց Շուշիի, և ընդհանրապես, Ղարաբաղի դատավճիռը, այլև բացվեց տաճկական զորքերի ճանապարհը դեպի Բաքու, ինչի հետևանքով ջախջախվեց Կոմունան և Բաքվի հայությունը, որից հետո միայն հնարավոր եղան թշնամական ուժերի զանգվածային կուտակումները Ղարաբաղի շուրջ...

Ոչնչով չի արդարացվում ռուսներին բռնությամբ զինաթափելու՝ հայրենասերների մտադրությունների խափանումը Ղարաբաղի ժամանակավոր կառավարության և ռազմական խորհրդի անդամների կողմից: Եթե վերջիններս չսխալվեին և զինաթափումն իրագործվեր, սպա մի առ ժամանակ գոնե կլուծվեր շուշեցիների զինվածության հարցը, թշնամին կզրկվեր 532-րդ Սիմֆիրոպոլսկյան զորամասի պատկառելի զինապաշարին տիրանալու հնարավորությունից, Ղարաղջաղը չէր լքվի փամփուշտների պակասի պատճառով և այլն: Պատկերացրեք մեր վիճակը, եթե ժամանակին չզինաթափվեին Արցախից հեռացող նախկին ԽՍՀՄ ՆԳՆ Ներքին զորքերի և 366-րդ ՄՀ գնդերը: Իսկ հեռացող ռուսական զորաջոկատը Շուշիում չզի-

<sup>1</sup> «Ազատ Արցախ», p. 66, 1999 p.:

<sup>2</sup> «Ազատ Արցախ», p. 33, 1999 p.:

նաթափվեց, որովհետև «շուշեցի հայերը պահպանում էին ռուսական կողմնորոշումը»<sup>3</sup>: Ավելացնենք, որ ռուսներին հավատարիմ մնալու հենց այս մտլորությունը գրգռեց անգլիացիներին և խաղաքարտ դարձավ խորամանկ Սուլթանովի ձեռքին...

Ընդդիմախոսը մեջբերել է Չ. Մելիք-Շահնազարովի՝ Անդրանիկի բերանով արված միտումնավոր բացատրությունը Շուշիի գնդի արշավանքի ձախողման մասին, շրջանցելով (կամ, թերևս, չիմանալով) այն փաստը, որ հենց նույն ինքը՝ Չորավարն է գնդի հրամանատար Մելիք-Շահնազարյանից պահանջել Շուշիա ու Գանձակի զենքն ու ռազմամթերքը, չթաքցնելով անգամ այդ ամենը բռնությամբ վերցնելու իր մտադրությունը<sup>4</sup>: Ղազարյանը վերստին աչքաթող է անում կարևորը. իսկ ինչո՞ւ 9 (այլ աղբյուրներում՝ 5-6) օրվա ընթացքում Շուշիից և Գորիսից չկարողացան օգնության հասնել Ղարաղլաղի պաշտպաններին, փոխհամագործակցելով պատռել պաշարման շղթան և լուծել Հայաստանի հետ կապի, թշնամու ռազմական ուժերի ջախջախման, Շուշի քաղաքի պաշտպանունակության բարձրացման և բազում այլ խնդիրներ: Կամ ինչո՞ւ Ղարաղլաղի պաշտպանների՝ օգնություն հասցնելու բազմաթիվ խնդրանքները անպատասխան են մնացել Շուշիի ղեկավարների կողմից: Հենց մեջբերված փաստաթղթի շարունակությունը կարող է հուշել պատասխանը: Շուշիի ղեկավարները, չգիտակցելով Ղարաղլաղի անկման ծանր հետևանքները, իրենց «ժամանակն անց են կացրել թաթարների ղեկավարների հետ խնջույքներում»<sup>5</sup>:

Արձանագրելով Ղարաղլաղի անկումից հետո ստեղծված օրհասական վիճակը և Բաքվից հեռացող թուրքական զորքերի մնացորդների կուտակումը Լեռնային Ղարաբաղի շուրջ, մեր ընդդիմախոսը շրջանցում է Ղարաբաղի կառավարության և ռազմական գործիչների անբավարար աշխատանքի փաստը, որ անթույլատրելի էր մանավանդ աճող վտանգի պայմաններում: Ե. Իշխանյանի և քարտուղար Ս. Տեր-Միքայելյանի ստորագրությամբ փաստաթղթում նրանք խոստովանում են, որ «մենք եղել ենք (թաթարների ռազմական նախապատրաստություններ-

րի.-Մ.Հ.) սոսկ լուռ վկաները»<sup>6</sup>: Չձեռնարկելով ոչ մի քայլ, քանի դեռ տաճիկներն ու մուսավաթականները զբաղված էին Բաքվի առումով, նրանք ուշացել-հապաղել են այնքան, մինչև մի ամբողջ դիվիզիա կենտրոնացվի Ղարաբաղի դեմ, որ հետո արդարանա՞ն, թե չենք կարող կռվել այդքան մեծաքանակ ուժերի դեմ: Ամեն անգամ հիշվում է զենքի ու զինամթերքի պակասը, սակայն դա ևս արդարացում չէ, քանզի բաց էին թողնվել զենք հայթայթելու բազմաթիվ աղիթները, իսկ առանձին հայրենասերների ձեռնարկումները թշնամուց զենք խլելու ուղղությամբ, անմիջապես խափանվում էին Ղարաբաղի այն ժամանակվա կարճատես ղեկավարների կողմից<sup>7</sup>:

Թուուցիկ ներկայացնելով, ավելի ճիշտ՝ փորձելով մտայլ գույներ հաղորդել Ղարաբաղի կացությանը, Վ. Ղազարյանը «հռետորական» հարց է տալիս. ուրիշ էլ ի՞նչ ընտրություն էր մնում անելու արցախահայությանը, եթե ոչ անձնատուր լինել: Որտեղի՞ց հեղինակին այն համոզմունքը, թե կռիվը թվական ու զինական գերակշռություն ունեցող թուրք-թաթարական զորքերի դեմ՝ «կանխավ պարտվողական վախճան» կունենա, երբ հայտնի են տաճիկներին ջախջախելու բազմաթիվ օրինակներ: Վ. Ղազարյանը վտանգավոր մի հայեցակետ է հրամցնում, որը դատափետելի է մանավանդ աղբյուրազանա-ղարաբաղյան պատերազմում տոնած հաղթությունների լույսի ներքո...

Վ. Ղազարյանը համառորեն փորձում է զարգացնել Շուշիի հանձնման անխուսափելիության վարկածը, ջանալով, ասես, ապացուցել, թե մայրաքաղաքի հանձնման հետևանքները, իբր, այնքան էլ սոսկալի չէին, թե դա տակավին Ղարաբաղի անկում չէր: Իհարկե, նա տուրք է մատուցել Ազգային խորհրդի որոշ անդամների այն սխալ մտայնությանը, թե Շուշիի ենթարկումը չի նշանակում Ղարաբաղի ենթարկում (ինքնահանգստացման ու ինքնախաբեության արտահայտություն.- Մ.Հ.)<sup>8</sup>: Սակայն մեր թշնամին, հանձին Սուլթանովի «Շուշիի գրավումը, Կենտրոնի և Հայոց շարժման ենթարկումն իրեն՝ դիտում էր որպես ամբողջ արցախահայության ենթարկման հարցի լուծում»<sup>9</sup>: Իսկ ժամանակի մեր դե-

<sup>3</sup> Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов, док. N 2, с. 4.

<sup>4</sup> Միսնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Եր., 1996, էջ 375, Հմնր.՝ Հովակ Սրիփանյան, Արցախյան կամ Շուշույ գնդի պարունդները, «Հայրենիք» ամսագիր, Բուրնոն, 1935, քր. 3-7):

<sup>5</sup> Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов, док. N 24, с. 34.

<sup>6</sup> Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов., док. N 44, с. 68.

<sup>7</sup> Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов., док. N 180, с. 272.

<sup>8</sup> Հմնր.՝ Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов., док. N 180, с. 273.

<sup>9</sup> Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов., док. N 153, с. 238.

կավար այրերը անտես արեցին, որ թուրքերն իրենց տրոյական ձին են մտցնում Ղարաբաղի միջնաբերդը: Վ. Ղազարյանը դեմ չէ Շուշին հանուն Ղարաբաղի «գոհաբերելու» մտայնությանը, անտեսելով այն իրողությունը, որ այդ քայլով Ղարաբաղի կառավարիչները նահանջեցին իրական անկախության բարձունքից:

Շուշիի ստավորականության անգործության մասին անվանի պատմաբան Բ. Ուլուբաբյանը գրել է. «Թուրքերը Շուշի մտան Նուրի փաշայի վերջնագրից 14 օր անց: Իսկ դա բավական ժամանակ էր գավառների պաշտպանությունը բազմակողմանիորեն կազմակերպելու, ինչպես նաև Շուշիում գործերը կարգավորելու համար»<sup>10</sup>:

Փաստենք նաև, որ Շուշիի բնակչությունը կոտորածի արժանացավ, որովհետև նա համակերպվել էր այդ մտքի հետ, կոտորածի սարսափազդու խրտվիլակն էր մշտապես նրա աչքի առաջ: Այդ մասին ուշագրավ վկայություններ ունի Միսաք Տեր-Դանիելյանը, երբ ներկայացնում է 1919թ. հուլիսի 2-ի դեպքերը<sup>11</sup>: Հպատակվելու միտում կար նաև ղեկավար շրջաններում, ոմանք գերադասում էին համակերպվել անհանդուրժելի կացության հետ<sup>12</sup>: Հետևաբար, չարվածի, թույլ տված ճակատագրական սխալների քողարկման, ինքնարդարացման փորձ է հանդիսանում Ազգային խորհրդի՝ ինչպես Հայաստանի կառավարությանը, այնպես էլ Ջանգեզուրի գեներալ-կոմիսարին ուղարկված գրությունները, որոնք բնավ ղարաբաղի բոլոր հայերի տեսակետը չէին կարող ներկայացնել, ինչպես մոլորությամբ (թեկուզ և՛ պայամանականորեն) համարում է Վ. Ղազարյանը:

Մեր հոդվածում Անդրանիկի արշավանքի ձախողման մեջ «շուշեցիների մեղքի», Ջորավարի՝ մտավորականներին ենթակա լինել-չլինելու մասին խոսք չկա, դրանք վերստին Վ. Ղազարյանի հորինվածքներն են: Անդրանիկի արշավանքի ձախողման փաստը մեջբերվել է ի հաստատումն Շուշիի հաշտարար տրամադրությունների վերաբերյալ մեր տեսակետի, այն առումով, որ Շուշիի քաղաքագլուխն է անտարբեր մնացել, իսկ Վարանդայի ԻՊՈԻ հրամանատար Սուկրատ բեկ Մելիք-Շահնազարյանը խնդրել է 10 օրով հետաձգել արշավանքը: Իսկ ինչ վերա-

բերում է վերջինի դադարեցման բուն պատճառին, ավելի դիպուկ սահմանել է ակնաստեղը՝ Հովակ Ստեփանյանը. «Բայց Անդրանիկը չլսեց մեզ, մնաց անդրդուելի, որովհետև պատմական սխալի երկընտրանք ստեղծեց իր համար: Հեռագիր-նամակի մեջ ասում էր. «Եթե դուք չլսեք ես առաջ շարժուէք, ձեր այդ քայլը վատ կանդրադառնայ հայկական հարցի վրայ, որով այժմ զբաղում եմ Փարիզի կոնգրեսը»...

«Ղարաբաղ, թե՞ հայկական հարց,- շարունակում է Հ. Ստեփանյանը,- այսպիսի կոպիտ երկընտրանքի առջև կանգնեց հերոսը եւ կատարեց օրհասական սխալը, որ հետագայում ունեցաւ իր այնքան մեծ եւ անուղղելի բացասական հետեւանքները...»<sup>13</sup>: Կարծես Արցախը Հայոց հարցի մի մասնիկը չէր: Դեռ լավ է, որ արդի սերունդը ուղղեց այդ սխալը...

Վ. Ղազարյանը մի այլ կեղծարարության է դիմում: Անդրանիկի արշավանքը եղել է 1918թ. նոյեմբերին, իսկ նա վկայակոչում է 1919 թ. մարտի 19-ի մի փաստաթուղթ, որ Անդրանիկի ներկայության անհրաժեշտության մասին Ղարաբաղի ազգային խորհրդի ժամանակավրեպ կարծիքն է: Իհարկե, եթե Ազգային խորհրդի «ետե խելքը» ժամանակին առկայժեր, թերևս այս և մյուս դեպքերն այլ ընթացք կունենային:

Որ Սուկրատ բեկ Մելիք-Շահնազարյանի նամակը ճակատագրական դեր է խաղացել, փաստում են նաև այլ աղբյուրներ<sup>14</sup>: Ի դեպ, արշավանքի նախօրեին Անդրանիկը ստացել էր Գեղեճն Տեր-Մինասյանի և զանգեզուրյան մի խումբ գործիչների նամակը՝ ընդդեմ ղարաբաղյան արշավանքի: Կարդալով այն, Ջորավարը դուրս էր եկել ամփոփ, բռունցք թափ տալով կողքին կանգնած Արշակ Շիրինյանի վրա, գոռացել. «Աս ալ ձեր դավաճան ինտելիգենցիան, աս եք դուք՝ բոլոր վարժապետներդ»<sup>15</sup>:

Չափազանցված է 1920 թ. փետրվարյան խորհրդակցության դերը, այն մի սովորական սպայական հավաք էր, և դատելով հենց իր՝ Ջարեհի նկարագրած մթնոլորտից, այնքան էլ «հատուկ» չի եղել<sup>16</sup>: Կասկածելի է մանավանդ Ջ. Մելիք-Շահնազարովի այն վկայությունը, թե

<sup>13</sup> «Հայրենիք» ամսագիր, Բուսրոն, 1935, քիւ 7 (151), էջ 128:

<sup>14</sup> Մինոնյան Հ., նշվ. գիրքը, էջ 444-445, Պողոսյան Հ. Մ., Անդրանիկ գորավարի մի նամակը գեներալ Բագրարունուն, «Մանկավարժ», 1990, հ.8, էջ 58-62, Սարուր, Ղարաբաղի կցումը Ադրբեջանին, «Հայրենիք» ամսագիր, Բուսրոն, 1929, ք.8, էջ 128, նույնը՝ «Դրօշակ», 1990, մարտ, էջ 78:

<sup>15</sup> Մինոնյան Հ., նշվ. գիրքը, էջ 447:

<sup>16</sup> Мелик-Шахназаров Зарэ, Записки Карабахского солдата (Воспоминания участника событий 1918-1920 гг. в Нагорном Карабахе). М.-Е., 1995, с. 46-47.

<sup>10</sup> Ուլուբաբյան Բագրապ, Արցախյան գոյապայքարը, Եր., 1994, էջ 33:

<sup>11</sup> Տես Արամայիս (Միսաք Տեր-Դանիելյան), Ղարաբաղի փազնապը, Եր., 1993, էջ 52-53:

<sup>12</sup> Նույն փոհում, էջ 58, Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов., док N 153, с. 238., док N 161, с. 248.

սպայական խորհրդակցությունում Արարատյան հանրապետության լիազոր ներկայացուցիչ ընկ. Արսենը ասում էր, թե Շուշիի վրա անգամ հարձակվելու կարիք չի լինի, որովհետև թուրքերն այնտեղ իրենք իրենց կհանձնվեն: Խնդրում ենք ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ Շուշիի մասին խոսվում է որպես մի հեռավոր բնակավայրի, և հազիվ թե որևէ մեկի մտքով անցնի, որ խորհրդակցությունը կայացել է հենց Շուշիում, Ջարեհի հայրական տանը<sup>17</sup>: Ակնհայտորեն հետագա լրացման ու խմբագրման են ենթարկվել Միքայել Բաղալբյուրյանի խոսքերը, արդյունքում դրանց հաղորդելով մարգարեականության, պայծառատեսության երանգ. «(թուրքերը) քաղաքը կռվով գրավելու կարիք չեն ունենա, այլ բավական կլինի միայն այն հրի մատոնելը, կհիշե՞ք իմ ասածները»<sup>18</sup>: Անհավանական է, որ Ա. Միքայելյանը դեմ լիներ Շուշիի վրա հարձակվելուն, բայց և ընդամենը մեկ ամիս անց գլխավորեր Շուշիում ծավալված մարտական գործողությունները: Մանավանդ, որ ժամանակակցի՝ Հարություն Թումյանի վկայությամբ, նա նույնիսկ «նախապատրաստած է եղել զորանոցի գրոհը և արհամարհելով ղեկավար այրերի հորդորները՝ չխառնվել քաղաքի գործերին, գլխավորել է ռազմագործողությունը»<sup>19</sup>:

Դրոն և Նժդեհը Արցախ եկան ոչ թե մարտի վերջերին, ինչպես ներկայացնում է Վ. Ղազարյանը, այլ ապրիլի կեսերին<sup>20</sup>: Ընդամիս, Դրոն հիմնավորվեց Վարանդայում՝ կենտրոն ընտրելով Ղարաբուլաղ գյուղը, իսկ Նժդեհը՝ Դիզակում...

Ըստ երևութին Վ. Ղազարյանը «մտավորականներ» արտահայտությունը հասկացել է ուղղակի իմաստով, չկռահելով, որ հուշագրություններում ղեկավար շրջանների ներկայացուցիչներին տրված այդ անվանումն ենք օգտագործել՝ ձգտելով պահպանել ժամանակի շունչը: Իսկ ընդդիմախոսն ինքն իր համար «հեծանիվ է հայտնագործում» ու գրում. «Մտավորականներից շատերը կառավարության, Հայոց ազգային խորհրդի անդամներ էին, գլխավորում էին շրջանների պաշտպանությունը»:

<sup>17</sup> Там же, с. 47.

<sup>18</sup> Там же.

<sup>19</sup> Թումյան Հարություն, նշվ. գիրքը, էջ Ուլուքարյան Բ., նշվ. գիրքը, էջ 274:

<sup>20</sup> Վրացեան Ա., Հայաստանի Հանրապետության Թեփրան, 1982, էջ 373, «Հայրենիք» ամսագիր, Բնարուն, 1923, ր.12, էջ 123, Ուլուքարյան Բ., նշվ. գիրքը, էջ 88, Գևորգյան Համլետ, Դրո, Եր., 1999, էջ 364 և այլն:

Էլ չենք խոսում «անգլիացիների դավաճանության», Ադրբեջանի կողմից իբր Սուլթանովին չճանաչելու («չնայած Թոմսոնի բազմաթիվ սպառնալիքներին»), տարաբախտ 20 վաճառականների, գյուղական անպատասխանատու մտավորականության և այլ հարցերի շուրջ Վ. Ղազարյանի միամիտ դատողությունների մասին: Ուշադրության արժանի չեն նրա հետագա մտավարժանքները ինչ-որ ցուցակների հրապարակման, հայ բոլշևիկների չքմեղության, առ Աստված հավատի, 1990-1992 թթ. հետ զուգահեռների, ժողովրդի խելացիության և այլնի մասին, քանզի դրանք ընդհանրապես դուրս են թեմայի շրջանակներից, անհեթեթ են և էժան հեղինակության հասնելու միջոց...

Նման մակարդակով ու դատողությամբ, չորը թացից չզանազանելու պարագայում, կեղծումներով ու աղավաղումներով, փաստաթղթերի սելեկցիայի միջոցով երբեք չեն վիճարկում ակնհայտ ճշմարտությունները, այլապես անխուսափելի կլինի այն աննախանձելի վիճակը, որում հայտնվել է Վ. Ղազարյանը՝ իր առաջին գրական թե գիտական փորձերով: Ասես նա հանդես է եկել ոչ թե մի «հանիրավի մեղադրանքի» առթիվ, այլ պարզապես Սուլթանովի հեռագիրը «առաջին անգամ հրապարակելով» գլուխ գովալու համար...

## ՀԱՎԵԼՎԱԾ

### ՇՈՒՇԻԻ ՄԱՐՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ 90-ՐԳ ՏԱՐԵԼԻՅԸ

#### ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԶՈՀԸ

*Ով չի հիշում իր անցյալը, նա դատապարտված է  
այն նորից վերապրելու...*

*Չորջ Մանրայան*

Արևմտյան Հայաստանում Թուրքիայի վարած պետական տեռորի ու էթնիկական գտումների քաղաքականությունը, որի բարձրակետը հանդիսացավ բնիկ ժողովուրդների՝ հայերի, հույների, ասորիների ցեղասպանությունը, 1918 թվականին արտահանվեց Արևելյան Անդրկովկաս, որտեղ թուրքական սվինների վրա ստեղծվեց խամաճիկային Ադրբեջանի հանրապետությունը՝ գողացված անունով ու տարածքային աներևակայելի հավակնություններով: Ադրբեջանի հագիվ երկու տարվա գոյությունը բնութագրվում է արյունալի նախճիրներով, պետական ահաբեկչության ու էթնիկական գտումների անպատիժ քաղաքականությամբ: Դրան գոհ գնաց Արևելյան Անդրկովկասի հայ ազգաբնակչության զգալի մասը, հրկիզվեցին ու ավերվեցին հարյուրավոր ծաղկուն բնակավայրեր, անխնա ոչնչացվեցին, կողոպտվեցին կամ յուրացվեցին հայ ժողովրդի բազմադարյան մշակութային արժեքները:

Հատկապես ծանր էր Արցախի երբեմնի մայրաքաղաք Շուշիի կորուստը, որին ժամանակակիցները «Կովկասի Փարիզ» էին անվանում: Իննսուն տարի առաջ հրի մատնվեց ու հիմնահատակ ավերվեց Անդրկովկասի ծաղկուն քաղաքներից մեկը: Անգութորեն մոխրակույտերի վերածվեցին դարերի ընթացքում ստեղծված և համամարդկային նշանակություն ունեցող արժեքները, իսկ այդ ամենն արարած մարդիկ դաժան հաշվեհարդարի գոհ դարձան:

Այդ ամենի մասին գրել է ժամանակի մամուլը, մանրամասներ են հաղորդել ժամանակակիցներն ու ականատեսներն իրենց հուշագրություններում: Ծանր կորստի թեման զբաղեցրել է առաջադեմ մտավորականների, գրողների ու բանաստեղծների միտքը, որոնք իրենց խոհերն ու մտածումները, սրտի ցավն ու ափսոսանքը գեղարվեստորեն արտահայտել են գրավոր և բանավոր խոսքով: Նրանցից հատկանշելի են բանաստեղծներ Օսիպ Մանդելշտամը, Գրիգոր Ներսիսյանը, Արտեմ Հա-

րությունյանը, մանկավարժ Գրիգոր Դանիելյանը և ուրիշներ:

Դեռևս 1918 թ. սկզբներին Շուշիում էր ստեղծվել Անդրկովկասի առաջին ժողովրդավարական կառավարությունը, որը դարձել էր ոչ միայն հայ ազգաբնակչության, այլ նաև մահմեդական փոքրամասնության քաղաքացիական իրավունքների արտահայտիչն ու երաշխավորը: Սակայն, հրահրվելով թուրք գործակալների ու մուսավաթական լրտեսների կողմից, մահմեդական բնակչությունը երախտամոռ գտնվեց և բորբոքված կրոնական մոլեռանդությամբ շարունակաբար սպակալունացնում էր առանց այն էլ լարված իրադրությունը: Այս առումով իրեն չարդարացրեց Արցախի կառավարության խաղաղասիրական, հաշտվողական քաղաքականությունը: Ներկայիս ադրբեջանցիների նախնիները չարաշահեցին հայ ղեկավարների բարյացակամությունը և հանդուրժողականությունը, ինչպես նաև օգտվեցին հայերի կողմից որդեգրված ինքնապաշտպանության պասիվ ռազմավարությունից և ռազմական նախաձեռնությունը վերցրին իրենց ձեռքը:

Սպառազինության խնդիրը լուծելու համար կարելի էր զինաթափել ռուսական սահմանապահ 6-րդ գնդի հետ ընկած ստորաբաժանումները (դա հայերի փոխարեն արեցին մահմեդականները), ժամանակին օգնություն չհասցվեց Բերդաձորի պաշտպաններին, հավուր պատշաճի չկազմակերպվեց Թիֆլիսում կազմավորված Շուշիի գնդի տեղափոխումը նշանակման վայր: Թերացումների ու անվճռականության օրինակներ էին Չորավար Անդրանիկի արշավանքին չմպաստելը, դրածո գեներալ-մահանգապետի նշանակմանը և ներկայիս Ստեփանակերտում՝ Վարարակնում ու Շուշիում հիմնավորվող թշնամական զորքերին լրջորեն ու ժամանակին չընդդիմանալը, 1919 թ. հունիսին Շուշիում և մոտակա գյուղերում Մուլթանովի արյունոտ սադրանքներն անպատիժ թողնելը, զինված պայքարին անբավարար նախապատրաստվելը և այլն:

Շուշիի ողբերգության գաղափարական նախապատրաստումը, ծրագրումն ու իրականացումը արմենոցիդի թուրքական քաղաքականության հերթական դրսևորումներն էին: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, մանավանդ՝ ռուսական հեղափոխությունից հետո, թուրքական գործակալներ էին վխտում Անդրկովկասում և ոտքի հանում իրենց հավատակիցներին ընդդեմ քրիստոնյաների ու սպառնալիք ստեղծում ռուսական կովկասյան բանակի թիկունքին, որպեսզի այդ արգելքն ավելի դյուրությամբ հաղթահարվի Թուրքիայի զավթողա-

կան հեռագնա ծրագրերն իրագործելիս:

Թուրքական գորքերի բացահայտ ագրեսիայի հետևանքով 1918 թ. սեպտեմբերին ընկավ Բաքվի կոմունան և սրի քաշվեց հայ բնակչության մի մասը, ինչը ևս ծանր նստեց ու բացասաբար անդրադարձավ Արցախի ինքնապաշտպանության վրա: Ընդունելի է այն տեսակետը, որ Թուրքական ինտերվենցիայի արդյունքում Ադրբեջան պետության ստեղծումը դարձել է ուրիշների տարածքներում բնիկ ժողովուրդների բնաջնջմամբ թուրքական պետություններ ստեղծելու նախակիպրոսյան փորձը:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո, երբ թուրքական գորքերը հարկադրված էին հեռանալ Անդրկովկասից, բազմաթիվ թուրք սպաներ, անգամ երիտթուրքական պարագլուխներ ու ռազմական հրահանգիչներ մնացին մահմեդականներով բնակեցված շրջաններում և շարունակեցին իրենց սև գործը, բորբոքելով հավատակիցների մոլեռանդությունը, դավազրգոելով նրանց այլազգիների ու այլադավանների դեմ:

Մինչև հեռանալը թուրքերը լուծեցին մի շարք ռազմավարական խնդիրներ. մուսավաթականների հետ համագործակցությամբ, ծանր հարվածներ էին հասցրել հայերի դիմադրական կարևոր կենտրոններին՝ Բաքվին, Շուշիին, հող նախապատրաստելով հանձին նորաթուխ Ադրբեջանի՝ Կովկասում Թուրքիայի առաջնադիրքի հաստատման համար: Թուրք-հայկական պատերազմը և Մոսկվայի ու Կարսի չարաղետ պայմանագրերը անառարկելիորեն ասպացուցում են ոչ միայն Թուրքիա-Ադրբեջան հանցավոր կապերը, այլև բացահայտում թուրքական ռազմամուլների հեռագնա նպատակները՝ Ադրբեջանի ստեղծմամբ Կովկասում իր մշտական աջակիցն ու հենարանն ունենալու, Իրանի հանդեպ իր հավակնություններն իրագործելու և, վերջնական արդյունքում, պանթուրանական ծավալապաշտ գառանցանքները կենսագործելու համար:

Յավոք բավական բացասական դեր խաղացին անգլիացիները: Թուրքերին փոխարինած անգլիացիները, անտեսելով տարածքների իրավական, պատմական ու էթնիկական պատկանելիության ակներև բաղադրիչները, հակված էին Արցախն ու Ջանգեզուրը տեսնելու Ադրբեջանի, իսկ Նախիջևանն ու Կարսի մարզը՝ Հայաստանի կազմում: Բաքվում հաստատված անգլիական առաքելությունը, մշտապես գունվելով մուսավաթականների քարոզների ու շողոքորթությունների ազդե-

ցության տակ, ադրբեջանամետ քաղաքականություն էր վարում, մանավանդ, որ Անգլիան ու նրա դաշնակիցները նավթանթերքների կարիք էին զգում և զուտ շահադիտական նպատակով հակված էին գոհացնել ադրբեջանցիների, թեկուզ և ապօրինի ու հավակնոտ պահանջները: Կռահել կարելի է, թե ինչ միջոցներով էին ադրբեջանցիների պարագլուխները սիրաշահում անգլիացիներին, հայերին մեղադրելով բոլշևիկյան գաղափարների տարածման, ռուսասիրության մեջ:

Անգլիացիները մուսավաթական պարագլուխների կողմից ներշնչվում էին, թե իբր Հայաստանի կառավարության ներկայացուցիչները հակաանգլիական տրամադրություններ են մտցնում ժողովրդի մեջ: Պակաս ազդեցություն չունեցավ նաև Բաքվի կոմունայում հայերի զերակա դիրքը, ինչը ևս վարպետորեն շահարկվեց մուսավաթականների կողմից:

Անգլիացիների օժանդակությամբ ու պաշտպանությամբ գեներալ-նահանգապետի ողջ գործունեությունը նպատակաուղղված էր Ադրբեջանի զավթողական նկրտումների իրականացմանը և բռնապետության հաստատմանը: Այդ ճանապարհին Ադրբեջանը չէր կանգնում ոչնչի առաջ, սկսած տնտեսական բոյկոտից ու շրջափակումից, վերջացրած բնակավայրերի ու խաղաղ բնակչության բնաջնջմամբ: Ի դեպ, նկատենք, որ XX դարասկզբի այս մեթոդներն էին կիրառվում նաև յոթ տասնամյակ անց, Արցախի հայ ազգաբնակչության օրինական շարժումը ճնշելու նպատակով:

Արտաքին ու ներքին գործոնների միջակայքում կարելի է առանձնացնել Հայաստանի առաջին Հանրապետության կրավորական դիրքը և գործնական օգնության ուշացումը: Դրաստամատ Կանայանի ու Գարեգին Նժդեհի զորամասերի ուշացած միջամտությունը եղավ այն ժամանակ, երբ արդեն Շուշին ավերված էր և Ադրբեջանն արդեն պատերազմական գործողություններ էր վարում Արցախի նյուս շրջաններում:

Հայաստանի Հանրապետության դրությունը բավական ծանր էր: Եղեռնից մազապուրծ և Արևմտյան Հայաստանից բռնատեղահանված հազարավոր անօթևան հայրենակիցների, համաճարակների տարածման դեմ պայքարի հիմնախնդիրներին ավելացել էին մահմեդական բնակչության զինված ապստամբությունները, որոնք հրահրված էին Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից: Սրանք էին հապաղման հիմնական պատճառները: Այդուամենայնիվ, ուշացված օգնությունն էլ ունեցավ

որոշակի նշանակություն, թեև ներքին անհամերաշխությունը և հայ բոլշևիկների առճակատումը, ինչպես նաև կարմիր բանակի անպատեհ միջամտությունը և այլ գործոններ, ի չիք դարձրին սպասվող դրական տեղաշարժերը ու նախանշվող հաջողությունները:

Օբյեկտիվ պատճառներից էին նաև հաղորդակցության ճանապարհների արդյունավետ օգտագործման հնարավորության, կապի միջոցների բացակայությունը, տնտեսապես կախված լինելը երբեմնի ռուսական կայսրության մյուս շրջաններից և այլն:

Հատկապես անմխիթար էր ինքնապաշտպանության գործը: Չուտ ռազմական գործի կազմակերպման թերացումներից պետք է առանձնացնել հայկական կանոնավոր ստորաբաժանումների ու ինքնապաշտպանության համակարգի և ղեկավարող կառույցների չկատարելագործումը, հետախուզության ու հակահետախուզության բացակայությունը, թշնամու վարձած լրտեսների անարգել գործունեությունը, գաղտնիության կանոնների անտեսումը, ծաղկող բերանբացությունը, թշնամու նկատմամբ վերահսկողության բացակայությունը, նրա ծրագրերի ու գործողությունների չիմացությունը, իրավիճակին չտիրապետելը, որոշում կայացնելու և այն իրագործելու դանդաղ կոտորությունը և այլն:

Ի վերջո, իրադարձությունների զարգացումը հասցրեց նրան, որ Ադրբեջանը պատերազմ սկսեց ու բացահայտ ագրեսիա ձեռնարկեց Արցախի դեմ: Ծավալված ծանր մարտերը Շուշիում, Վարարակնում, ապա և՛ Ասկերանում հիմնականում անհաջող էին ընթանում հայերի համար, որովհետև զգացվում էր զենքի ու զինամթերքի պակաս, մյուս կողմից էլ Ադրբեջանը Արցախի դեմ էր հանել իր գրեթե ամբողջ զինուժն ու զինանոցը, ինչի հետևանքով էլ, թերևս, ապրիլի 28-ին 11-րդ կարմիր բանակը, առանց լուրջ դիմադրության, գրավեց Բաքուն:

Ծրագրելով ու անողոքաբար իրականացնելով հայ ազգաբնակչության կոտորածը, Ադրբեջանի կառավարությունը հետևանքը պատճառի նենգափոխելու հնարքով շրջանառության մեջ դրեց հայերի ապստամբության առասպելը, փորձելով քողարկել սահմուկեցուցիչ ոճրագործությունը և խուսափել պատասխանատվությունից:

Փաստը մնում է փաստ, որ թուրք-ադրբեջանցիներից ու քրդերից կազմված կանոնավոր զորքերի, նրանց միացած ավազակախմբերի հարձակմանը հայերը պատասխանել են ինքնապաշտպանությամբ, ինչը Ադրբեջանի քարոզությունը ներկայացրել է որպես ապստամբու-

թյուն, հետևանքը պատճառի նենգափոխելու միջոցով միջազգային հանրությանը մոլորեցնելու և երբեմնի ծաղկուն Շուշի քաղաքի ավերումն ու հայ բնակչության հանդեպ ֆիզիկական հաշվեհարդարն արդարացնելու նպատակով:

Ասվածը հաստատում են նաև նախընթաց և հաջորդած իրադարձությունները: Դրանց վերլուծությունը ցույց է տալիս, որ թուրք-ադրբեջանական քաղաքական մտածողությունը նույն «տրամաբանությամբ» նենգափոխել է տասնամյակներ շարունակվող ահաբեկչության, էթնիկ զտումների, բարբարոսական ավերածությունների, կրոնական մոլեռանդության, ծայրահեղականության ու անհանդուրժողականության բազմաթիվ փաստերը: «Ապստամբության» առասպելը և իբր «դրան ի պատասխան հայերի բնաջնջման» բեմագիրը թուրքերը գործադրում են հնուց ի վեր: Անգամ Հայոց մեծ եղեռնը, որին զոհ է գնացել ավելի քան 1,5 միլիոն մարդ, նրանք ցինիկաբար փորձում են ներկայացնել որպես պատասխան՝ հայերի ըմբոստությանն ու ապստամբությանը: Մինչդեռ, ապստամբությունները, եթե եղել են, և, ընդհանրապես, հայ ժողովրդի ազատագրական պայքարը ուղղված են եղել թուրքերի հայաահալած, ազգային, կրոնական, մշակութային, տնտեսական ճնշումների ու բռնությունների դեմ, երբ ծայրահեղ ու օրհասական վիճակի հասցված մարդկանց այլ բան չէր մնում, քան վերջին հուսահատ փորձը ձեռնարկել դանդաղ մահվանից փրկվելու համար: Հենց այդ հրահրված, սադրված ընդվզումն էլ թուրք ոճրագործներն առիթ էին դարձնում վաղուց ծրագրված ցեղասպանության քաղաքականությունը կենսագործելու՝ հայերին բնաջնջելու համար:

1920 թ. գարնանը Արցախում ծավալված իրադարձությունները, մեր կարծիքով, զարգացել են այսպես. Սուլթանովը հրամայել է իր երերուն իշխանության հենարան դարձած կանոնավոր զորքերին՝ հարվածել Արցախի ամենամարդաշատ ու ստվար հայ ազգաբնակչություն ունեցող միակ քաղաքին՝ Շուշիին: Միաժամանակ, Ադրբեջանում կենտրոնացված զորքը և սպառազինված ամբոխը, ինչպես և կանխատեսված էր, սկսել են արշավանքը Ասկերան-Վարարակն-Շուշի գծով՝ նպատակ ունենալով համալրել ու ըստ ամենայնի աջակցել Շուշիի հայությանը հնազանդեցնող (իրականում՝ բնաջնջող) ոճրագործներին:

Որ հենց Ադրբեջանի դեմոկրատական հանրապետությունն էր բացահայտ պատերազմ սկսել արցախահայության դեմ, վկայում է նաև այն փաստը, որ Գանձակի, Շամքորի և այլ ուղղություններով ադրբե-

ջանական գորքերը՝ ուժեղացված զինավառ ավազակներով, լայնածավալ հարձակման էին անցել հայերի բռնի տեղահանության ու էթնիկական գտումների նպատակով: Հարություն Թումյանի վկայությամբ՝ Նուխու և Արեշի 36 հայկական գյուղերի 49 200 շունչ հայ բնակիչները, որ փրկվել էին 1916 թվին տեղի ունեցած կոտորածից, գրեթե գլխովին ջարդվեցին: Հյուսիսային Արցախի և պատմական Ուտիքի տարածքների հայության բռնատեղահանման հետևողական քաղաքականությունը Ադրբեջանը փաստորեն ավարտին հասցրեց խորհրդային իշխանության օրոք՝ 1988-1991 թվականներին:

Արցախահայությանն ահաբեկելու, սարսափազդու կոտորածներով ընկճելու՝ Ադրբեջանի դեմոկրատական հորջորջված հանրապետության պետական քաղաքականության իրականացումը Սուլթանովի կողմից Շուշիից սկսելը պատահական չէր, քանի որ Արցախի մայրաքաղաքի բնակչությունն առնվազը 1919 թվականից, Լեռնի պատկերավոր արտահայտությամբ՝ պատանդի կարգավիճակի էր մատնվել և, ինչպես վավերագրերն են հաստատում, հակառակորդի կողմից դիտվում էր Արցախը նվաճելու կարևոր գործոն:

Համաձայն պաշտպանության մտահղացման, Արցախի ինքնապաշտպանության ուժերը 1920 թ. մարտի 23-ին դուրս շարտեցին ադրբեջանցի զավթիչներին և ազատագրեցին Ասկերանը, որի ռազմաստրատեգիական նշանակությունը հատկապես այդ օրերին մեծացել էր ինչպես Ադդամից ադրբեջանական զորքերի հետագա առաջխաղացումը կասեցնելու, այնպես էլ կենաց մահու պայքարում Շուշիի ու Վարարակնի պաշտպանների թիկունքն ապահովելու առումներով: Նմանապես, Վարարակնում հաստատված ադրբեջանական զորքերի շրջապատումն էլ իր հերթին Ասկերանի և Շուշիի թիկունքն ապահովելու խնդիրն էր հետապնդում: Հենց ինքնապաշտպանությունից բխող այս քայլերն են ադրբեջանցիները նենգափոխել «ապստամբություն» հասկացությամբ, մի կողմից իրենց ռճրագործությունները «արդարացնելու», իսկ մյուս կողմից՝ ցեղասպանությունն ուրանալու, ապա և՛ ժխտելու նպատակով:

Այսպիսով, նորաթուխ Ադրբեջանը էթնիկական գտումների և պետական ահաբեկությամբ էր փորձում իր բռնատիրությունը հաստատել Արցախում: Ադրբեջանի հանցագործ վարչակարգերի ռճրագործություններն առայսօր քաղաքական գնահատական չեն ստացել միջազգային հանրության կողմից: Մինչդեռ հանցանքն անպատիժ թողնելն

արտոնում է նորը: Դրա վկայությունն էին Ադրբեջանի Հանրապետության ազրեսիան ու պատերազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի դեմ 1988-1994 թվականների ընթացքում: Այս անգամ ողբերգությունը կանխվեց հայ ժողովրդի միահամուռ ջանքերով ու հայտնի հայրենական պատերազմի շնորհիվ: 1992 թ. մայիսի 9-ին հայ ազատամարտիկները սրբագրեցին իրենց պապերի սխալները և ազատագրեցին Շուշին՝ մեկընդմիջտ այն պահ տալով հայկազունների գալիք սերունդներին:

*«Մարտիկ», հուն 10, 14-20 մարտ - հուն 11, 20-27 մարտ, 2010 թ.*

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԱՐՑԱԽՈՒՄ

2010 թվականի մարտի 21-24-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (ԼՂՀ) տեղի է ունեցել «Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ» թեմայով միջազգային գիտագործնական կոնֆերանս՝ նվիրված Շուշի քաղաքի 1920 թ. մարտի 23-ի ողբերգության 90-րդ և Բաքվի ջարդերի 20-րդ տարելիցներին: Նպատակը անցյալի վերալմաստավորումն էր, թույլ տրված սխալների պատճառների վերհանումն ու գիտականորեն հիմնավորումը, ահաբեկչության և էթնիկական զտումների քաղաքականության առհասարակ կանխման ու նման երևույթների բացառման ուղիների առաջադրումը:

Կոնֆերանսը կազմակերպել են ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը, ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը, Արցախի պետական համալսարանը, Շուշիի «Կաճառ» գիտական կենտրոնը, Շուշիի պատմաերկրագիտական թանգարանը:

Մարտի 22-ին ԼՂՀ Ազգային ժողովի ճեմասրահում կոնֆերանսի մասնակիցները և հրավիրվածները դիտել են «Արտոնված ցեղասպանություն» խորագրով լուսանկարների ցուցադրությունը, որում ներկայացված էին 1915 թ. Արևմտյան Հայաստանում և, ընդհանրապես, Օսմանյան Թուրքիայի ողջ տարածքում, 1920 թ. Շուշիում և 1988-1991 թթ. Խորհրդային Ադրբեջանի տարածքում՝ Սումգայիթում, Բաքվում ու այլ բնակավայրերում կազմակերպված հայ ազգաբնակչության ցեղասպանությունը պատկերող լուսանկարային վավերագրեր:

Միջազգային գիտագործնական կոնֆերանսի բացումը և լիազույմար նիստը տեղի է ունեցել ԼՂՀ ԱԺ դահլիճում: Բացման խոսքում «Կաճառ» գիտական կենտրոնի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Միեր Հարությունյանը ներկայացրել է կոնֆերանսի անցկացման նպատակը և կազմակերպիչների ակնկալիքները: Այնուհետև, ներկաները մեկ րոպե լռությամբ, հոտնկայս հարգել են ցեղասպանության և էթնիկական զտումների քաղաքականությանը զոհ գնացած հայրենակիցների ու ազգային ազատագրական պայքարում նահատակվածների անմար հիշատակը:

Դրվատելի համարելով Արցախում հայրենի իշխանությունների

աջակցությամբ միջազգային գիտագործնական կոնֆերանսի կազմակերպումն ու անցկացումը, կազմակերպիչների անունից Մ. Հարությունյանը երախտագիտություն է հայտնել հրավերն ընդունած բոլոր մասնակիցներին, ինչպես նաև նրանց, ովքեր անձամբ ժամանելու հնարավորություն չունենալով՝ ուղարկել են իրենց աշխատանքները:

Կոնֆերանսի մասնակիցներին ողջույնի խոսք է ասել ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը: Նա կարևորել է այդ միջոցառումը որպես հայ ժողովրդի հավաքական հիշողության հերթական դրսևորում:

Այնուհետև լսվել են զեկուցումներ XX դարի առաջին քառորդին Բաքվում, Գանձակում և Լեռնային Ղարաբաղում հայերի էթնիկ զտումների պատճառների ու հետևանքների, Շուշիի 1918-1920 թթ. տեղի ունեցած դեպքերի, էթնիկական զտումների հետևանքով ժողովրդագրական իրավիճակի փոփոխման, Շուշիի մարտյան ողբերգության պատմագրության հիմնահարցերի և այլնի մասին:

Ընդմիջումից հետո կարդացված զեկուցումները հիմնականում վերաբերել են Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղում իրականացրած մշակութային ցեղասպանության դրսևորումներին և կիրառման մեխանիզմներին:

Չորրորդ նիստում Ադրբեջանի հակահայկական քաղաքականության հոգեբանական տեսանկյունները և այլ զեկույցները ունկնդրելուց հետո, տեղի է ունեցել Միեր Հարությունյանի «Ահաբեկչություն» փաստավավերագրական ֆիլմի շնորհանդեսը, որտեղ ներկայացված են Ադրբեջանի պետական ահաբեկչության և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ և հատկապես՝ Շուշիի 1920 թ. մարտյան ողբերգության հանգամանքները:

Մարտի 23-ին կոնֆերանսի մասնակիցները մեկնել են Շուշի, որտեղ Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցում տեղի է ունեցել հոգեհանգստյան արարողություն՝ նվիրված Ադրբեջանի պետական ահաբեկչության և էթնիկական զտումների քաղաքականությանը զոհ գնացած անմեղ զոհերի հիշատակին:

Այնուհետև, կոնֆերանսն իր աշխատանքները շարունակել է Շուշիում: Շուշիի վարչակազմի ղեկավար Գեորգի Հայրիյանը, ողջունելով մասակիցներին, հակիրճ ներկայացրել է Շուշիում տարվող վերականգնողական-շինարարական աշխատանքները և առաջիկա ծրագրերը:

Չեկուցումները հիմնական վերաբերել են Ադրբեջանի պետական ահաբեկչության ու էթնիկական զտումների քաղաքականության համար այդ պետության պատասխանատվության և միջազգային իրավունքի տեսանկյունից իրավական ու քաղաքական գնահատական տալու անհրաժեշտությանը:

Ներկաները հետաքրքրությամբ են լսել Բեռլինի պետական ազատ համալսարանի հնդեվրոպական և համեմատական լեզվաբանության հայկական բաժնի դոցենտ Ժիրայր Քոչարյանին, ով պատիվ է ունեցել ներկայացնելու սոցիոլոգ, իրավապաշտպան Թեսսա Հոֆմանի «Մումգայիթից մինչև Բարու: Մարդու իրավունքների դիտանկյունից արված բնութագրում» զեկույցը:

Ընդհանուր առմամբ լսվել են 24 զեկուցումներ, որոնց հաջորդում էին աշխույժ քննարկումները և բազմաբովանդակ հարցադրումները:

Գիտագործնական կոնֆերանսին մասնակցել են Գերմանիայի Դաշնության, Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հեղինակավոր գիտական հիմնարկներ ներկայացնող երկու տասնյակից ավելի մասնագետներ և երիտասարդ ուսումնասիրողներ:

Գիտագործնական կոնֆերանսի արդյունքներն ամփոփելուց և Շուշիում կարճատև էքսկուրսիայից հետո, մասնակիցները վերադարձել են Ստեփանակերտ, ուր նրանց մի մասին ընդունել է ԼԳՀ նախագահ Բակո Սահակյանը: Նա կարևորել է Արցախում նման կոնֆերանսի անցկացումը՝ նշելով, որ Շուշիի և Բաքվի ջարդերը մեր ժողովրդի պատմության ամենաողբերգական էջերից են և հանդիսանում են միևնույն պատմաքաղաքական շղթայի օղակները: Երկրի ղեկավարն ընդգծել է, որ նման զարգացումները ապագայում բացառելու համար անհրաժեշտ է առաջին հերթին բազմակողմանիորեն ուսումնասիրել դրանք՝ դիտարկելով պատմական, քաղաքական, մշակութային, ազգագրական, տնտեսական և այլ տեսանկյուններից:

*«Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ», 2010 թ. մարտի 21-24-ը Ստեփանակերտում և Շուշիում կայացած միջազգային գիտագործնական կոնֆերանսի զեկուցումներ: Խմբ.՝ Մ. Ա. Հարությունյանի: «Կամառ» տարեգիրք, գիրք 4, Շուշի, «Կամառ» գիտական կենտրոնի հրատ., 2010, էջ 3-5*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ՇՈՒՇԻԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԵՐԻ 91-ՐԳ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՎ «ԿԱՃԱՌ» ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ «ԿԼՈՐ ՍԵՂԱՆԻ» ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ

Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության կողմից ծրագրված ու կազմակերպված Շուշի քաղաքի հայ բնակչության 1920թ. մարտի 23-ի ջարդերը և երբեմնի ծաղկուն քաղաքի հրկիզումը Լեռնային Ղարաբաղում իր արյունոտ տիրապետությունը հաստատելու նպատակ ունեին: Էթնիկական զտման ադրբեջանական քաղաքականության այդ հերթական դրսևորումը ոչ միայն արմենոցիդի թուրքական քաղաքականության շարունակությունն էր, այլ նաև ուղղված էր ամբողջ մարդկության ու ժողովրդավարության դեմ: Շուշի քաղաքի մարտյան ողբերգության 91-րդ տարելիցին նվիրված «Կլոր սեղանի» մասնակիցները դատապարտում են Ադրբեջանի ոճրագործությունը և վստահ են, որ միջազգային հանրության կողմից այդ երկրի պետական ահաբեկչության ու էթնիկական զտումների շարունակվող քաղաքականության դատապարտումը կամ դրան համարժեք քաղաքական, իրավական գնահատական տալը նման դրսևորումների կանխարգելման արդյունավետ միջոցը կլինեն:

Ներկայիս Ադրբեջանը, լինելով Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության իրավահաջորդը, և օգտվելով անպատժելիությունից, որդեգրել է իր նախորդի ոճրագործ քաղաքականությունը: Դրա վկայությունն են հանդիսանում 1987-91 թվականների ադրբեջանահայության ջարդերը և բռնատեղահանությունները, ագրեսիայի նախաձեռնումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ, իսկ ներկայում սահմաններ փակելով, հրադադարի ռեժիմը պարբերաբար խախտելով, խաղաղարար գործընթացին խոչընդոտելով պատերազմի մշտական օջախ հանդիսանալը:

Մենք դատապարտում և անընդունելի ենք համարում քաղաքական հիմնախնդիրները բիրտ ուժի միջոցով լուծելու՝ Ադրբեջանի քաղաքական գիծը: Պատմությունը սովորեցնում է, որ միայն քաղաքակիրթ ճանապարհով կարելի է լուծել պետությունների միջև վիճահարույց հիմնախնդիրները, և կոչ ենք անում միջազգային հանրությանը դատա-

պարտել Ադրբեջանի՝ տասնամյակներ շարունակվող հակահայկական գործողությունները ու բոլոր հնարավոր միջոցներով այդ երկրի ավտոռիտար իշխանություններին հետ պահել Հարավային Կովկասի անվտանգությանը մշտապես սպառնալու անմիտ մարտավարությունից:

23 մարտի 2011թ.  
ք. Շուշի

Հարությունյան Միեր Ալեքսանդրի, «Կաճառ» գիտական կենտրոն» ՀԿ նախագահ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Աբրահամյան Արել Ներսեսի, Շուշի քաղաքի բնակիչ, թոշակառու Հայրապետյան Չավեն Վահանի, Շուշի քաղաքի բնակիչ, Շուշիի հեռուստակայանի ինժեներ

Հովսեփյան Լաուրա Ռաֆիկի, Շուշի քաղաքի բնակչուհի, «Քեզ համար հայրենիք» կրթամշակութային ՀԿ նախագահ

Մուսայելյան Մելլադա Մարտիկի, Շուշի քաղաքի բնակչուհի Սարյան Սարասար Արտաշեսի, «ԼՂՀ փախստականներ» ՀԿ նախագահ

Ռակեղյան Արմեն Մարկի, «Աղավնի» ՀԿ նախագահ

Ռակեղյան Քրիստինա Դանի, «Աղավնի» ՀԿ

Հարությունյան Աշոտ Ալեքսանդրի, Շուշիի պատմաերկրագիտական թանգարան ՊՈԱԿ-ի տնօրեն, պատմաբան

Բաղդասարյան Տիգրան Կամոյի, Շուշիի պատմաերկրագիտական թանգարան ՊՈԱԿ-ի ավագ գիտաշխատող

Աթայան Իրինա Շուրայի, Շուշի քաղաքի բնակչուհի, Շուշիի պատմաերկրագիտական թանգարան ՊՈԱԿ-ի էքսկուրսավար

Սարգսյան Սիրուն Շափաղաթի, Շուշիի պատմաերկրագիտական թանգարան ՊՈԱԿ-ի կրտսեր գիտաշխատող

Հարությունյան Վլադիմիր Ալեքսանդրի, Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոցի տնօրեն

Մկրտչյան Լիդա Մուրենի, Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոցի ուսմավար

Սարգսյան Մերուժան Աշոտի, Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոցի ուսուցիչ

Չալումյան Լուսին Գրիգորի, «Նարեկացի» արվեստի միություն, նկարիչ-վերականգնող

Խաչատրյան Ալբերտ Արսենի, Շուշիի պետական հումանիտար քոլեջի դասախոս, Շուշիի շրջարհմիության նախագահ

Ալահվերդյան Ալիսա Վիլենի, Շուշի քաղաքի բնակչուհի, ԱԺԿ անդամ

Սարգսյան Էլլադա Սարգսի, խմբի ղեկավար, թոշակառու ուսուցչուհի Հարությունյան Յուլիա Յուրիի, «Կաճառ» գիտական կենտրոն» ՀԿ

**1. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ**

- 1.1. «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ, ֆ. 10 (Շուշի քաղաքը 1917-1920 թվականներին), գործ հմ.հմ. 1, 5-6:
- 1.2. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 114, ց. 2, գ. 3, ֆ. 200, ց. 1, գ. 417, ք. 24, ֆ. 314, ց. 1, գ. 34, ք. 212-299, ֆ. 4033, ց. 5, գ. 461, ք. 145-146:

**2. ՏՊԱԳԻՐ ՍԿՉԲՆԱԳՔՅՈՒՐՆԵՐ**

*ա) հայերեն*

- 2.1. Բաղդասարյան Մ., Առանց սնկնաբանության.- «Արցախ» (գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական հանդես), Ստեփանակերտ, 1989, հմ. 1, էջ 84-89
- 2.2. Գաղտնի փաստաթղթերը: Աղբրեջանական դավադրական գործունեությունից մի էջ, Երևան, 1920
- 2.3. Հայաստանի հանրապետությունը 1918-1920 թթ. (փաստաթղթերի ժողովածու), Երևան, 1999
- 2.4. Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում. 1918-1920 թթ.: Պատաս. խմբ.՝ Վիրաբյան Ա., կազմ.՝ Միրզոյան Մ., Ղազիյան Ա., Երևան, ՀՀ պատմութ. արխիվ, 2003
- 2.5. Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում. 1918-1920 թթ., փաստաթղթերի ժողովածու, գիրք II / Պատաս. խմբ.՝ Վիրաբյան Ա., կազմ.՝ Միրզոյան Մ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012
- 2.6. Ղազիյան Ալվարդ, 1920 թ. Շուշվա մարտյան ողբերգության ականատեսի «Հուշագրությունից», «ՊԲՀ», 2005, հմ. 1, էջ 275-283
- 2.7. Վառերագրեր հայ եկեղեցու պատմութեան. գիրք Թ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933), Կազմ. և առաջաբանը գրեց՝ Մանդրո Բեհրուդեանը, Երևան, 2001

\* Տրված են Շուշիի մարտյան ողբերգության վերաբերյալ գրականությունն ու հրատարակումները

- 2.8. Карабахский вопрос: история и сущность в документах и фактах, Степанакерт, 1989
- 2.9. Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов. Отв. ред. В. А. Микаелян, сост. Акопян В. А., Баликян О. С., Вирабян А. С., Микаелян В. А., Эвоян В. С. Ереван, Изд. АН Армении, 1992
- 2.910. Правда о Нагорном Карабахе. Материалы и документы, Ереван, 1989
- 2.11. Правда о Нагорном Карабахе. Сост. В. А. Товмасын, Ю. Б. Нерсисян. Степанакерт, 1989
- 2.12. Эвоян В. С., Баликян О. С., Из истории Нагорного Карабаха/1918-1921 гг./.- «ВАА», 1989, Но: 1, с. 86-130
- 2.13. Баликян О. С., К политике Азербайджанской республики в феврале 1920 г.- «ВАА», 1990, Но: 2, с. 256-258

**3. ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

*ա) հայերեն*

- 3.1. Արրահամյան Հ., Ղարաբաղի հայության համագումարների պատմությունից (1918 թ. հուլիս-1920 թ. մայիս).- «Բանբեր Հայաստանի արխիվների», 1986, հմ. 1, էջ 17-36
- 3.2. Արրահամյան Հ., Թուրք նվաճողների դեմ Ղարաբաղի աշխատավորության մղած պայքարի պատմությունից (1918թ. օգոստոս-հոկտեմբեր).- «Բանբեր Հայաստանի արխիվների», 1989, հմ. 2, էջ 162-177
- 3.3. Արրահամյան Հ., Արցախյան աշխարհի իրադարձություններից.- «Մանկավարժ», 1990, հմ. 11, էջ 51-58
- 3.4. Արրահամյան Հ., Արցախը դեմոկրատական կարգեր հաստատելու ճանապարհին (1917-1918 թթ.)- «Քաղաքական գրուցակից», 1991, ք. 2
- 3.5. Արրահամյան Հ., Արցախյան գոյամարտ, Երևան, 1991
- 3.6. Արրահամյան Հ., Արցախի հերոսամարտը (1918 թ.), Երևան, 1998
- 3.7. Արրահամյան Հ., Թևան, Երևան, 1998
- 3.8. Արրահամյան Հ., Արցախյան հիմնահարցը Ղարաբաղի հայության համագումարների որոշումներում.- «Դրօշակ», 1998, հմ. 14, էջ

- 3.9. Արրահամյան Հ., Արցախահայության ազատագրական պայքարը 1917-1923 թթ., Երևան, 2003
- 3.10. Արրահամյան Հ. Բ., 1920 թ. մարտի 23-ին Շուշիում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների շուրջ.- «Աղբրեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական գտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ», 2010 թ. մարտի 21-24-ը Ստեփանակերտում և Շուշիում կայացած միջազգային գիտագործնական կոնֆերանսի զեկուցումներ: Խմբ.՝ Մ. Ա. Հարությունյանի: «Կաճառ» տարեգիրք, գիրք 4, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2010, էջ 91-99
- 3.11. Արրահամյան Հ., Մարտնչող Արցախը 1917-2000. գիրք Ա. 1917-1923, Երևան, 2003
- 3.12. Ավետիսյան Հ. Ա., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997
- 3.13. Ավետիսյան Հ. Ա., Հայոց ազգային միասնության հաղթանակը, Երևան, 1998
- 3.14. Արամայիս ( Միսաք Տեր-Գանիելյան), Ղարաբաղի տագնապը (պատմության համար). օրագրություն (26 ապրիլի-26 հուլիսի 1919 թ.), Երևան, 1993
- 3.15. Արնոտ գիրք, Գորիս, 1921
- 3.16. Գալոյան Գ., Պատմության քառուղիներում, Երևան, 1982
- 3.17. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-2000 թթ., Երևան, 1999
- 3.18. Գեղամեանց Շղիշե Ա. քահ., Տաճիկները Կովկասում եւ Բաքվի անկումը, Բաքու, 1919
- 3.19. Գևորգյան Հ., Դրո, Երևան, 1999
- 3.20. Գրիգորյան Ռ., Թուրք մուսավաթական զորքերի ոճրագործությունները Անդրկովկասի հայաբնակ շրջաններում 1918-1920 թթ.- «ԲՀԱ», 1996, թ. 1, էջ 88-111
- 3.21. Չոհրաբյան Է., Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտեմբեր-1920թ. ապրիլ), Երևան, 2002
- 3.22. Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում. 1917-1920 թթ., պատմական ակնարկ, Երևան, 2008
- 3.23. Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում. 1917-1920 թթ., Երևան, 1966 (ձեռագրի իրավունքով): Նույնը տես՝ «Խորհրդային Ղարաբաղ», հմ.հմ. 252-253, 255- 257, 1989 թ.
- 3.24. Իշխանյան Ե., Դեպքերը Ղարաբաղում.- «Հայրենիք», 1933,

- 3.25. Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղ. 1917-1920, Երևան, 1999
- 3.26. Իսահակյան Ավետիք, Շուշվա կոտորածը (1920 թ. 22 մարտի).- «Քաղաքական գրուցակից», 1991, հմ. 3
- 3.27. Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925
- 3.28. Լեո, Երկերի ժողովածու, 8-րդ հատոր, Երևան, 1985
- 3.29. Լեո, Սահմանավեճեր (Հատուած). Ղարաբաղ, Բ հատոր, Աթենք, 1990
- 3.30. Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968
- 3.31. Խոջաբեկյան Վլադիմիր, Ցեղասպանությունը և հայաթափությունը Աղբրեջանում (1918-1990-ական թվականներ), «ՊԲՀ», 2005, հմ. 1, էջ 21-41
- 3.32. Կարապետյան Բ., Հարյուր տարվա երկխոսություն, Երևան, 1990
- 3.33. Կարապետյան Բ., Շուշի բերդաքաղաքը, Երևան, 2000
- 3.34. Կիսիբեկյան Ա. Հ., Հուշեր, հատ. 1/Պատ. խմբ.՝ Ղազիյան Ա., Երևան, 2011
- 3.35. Կիսիբեկյան Ա. Հ., Հուշեր, հատ. 2/Պատ. խմբ.՝ Ղազիյան Ա., Երևան, 2011
- 3.36. Հակոբյան Ա., Արցախյան խնդիրը Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանում 1918-1920 թթ.- «Լրաբեր ՀԳ», 1999, թ. 1, էջ 93-97
3. 37. Հայոց պատմություն. հիմնահարցեր, խմբ.՝ Հր. Սիմոնյանի, Երևան, 2000
- 3.38. Հարությունյան Ա., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984
- 3.39. Հարությունյան Ա. Ա., Պայքար Արցախի համար 1920 թ. սկզբներին.- «Աղբրեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական գտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ», 2010 թ. մարտի 21-24-ը Ստեփանակերտում և Շուշիում կայացած միջազգային գիտագործնական կոնֆերանսի զեկուցումներ: Խմբ.՝ Մ. Ա. Հարությունյանի: «Կաճառ» տարեգիրք, գիրք 4, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2010, էջ 75-90
- 3.40. Հարությունյան Ա. Մ., Հրկիզված Շուշի(1920) քաղաքի թեման Օսիպ Մանդելշտամի պոեզիայում.- «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան». Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված

գիտաժողովի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, էջ 182-294

3.41. Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Երևան, 1996

3.42. Հարությունյան Հ., ՀՅ Դաշնակցությունն Արցախի համար մղվող պայքարում 1917-1920 թթ.- «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան»։ Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, էջ 133-149

3.43. Հարությունյան Մ. Ա., Արմենոցիոյի քաղաքականության ուրացումը և ապստամբության առաապելը, «Լրատու» (Գիտական հոդվածների ժողովածու), Ստեփանակերտ, 2008, հմ. 1, էջ 71-78

3.44. Հարությունյան Մ. Ա., Շուշիի մարտյան ուրերգության պատմագրության հիմնահարցերը.- «Աղբրեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ», 2010 թ. մարտի 21-24-ը Ստեփանակերտում և Շուշիում կայացած միջազգային գիտագործնական կոնֆերանսի զեկուցումներ: Խմբ.՝ Մ. Ա. Հարությունյանի: «Կաճառ» տարեգիրք, գիրք 4, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2010, էջ 45-60

3.45. Հովհաննիսյան Ա. Գ., Հուշեր անցյալից.- «ԼՀԳ», 1966, հմ. 3, էջ 66-75

3.46. Հովհաննիսյան Գ., Մամնայի ճակատամարտը (1918թ.).- «Բանբեր Երևանի համալս. հաս. գիտ.», 1968, հմ. 3, էջ 150-153

3.47. Հովհաննիսյան Գ. Ա., Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1971

3.48. Հովհաննիսյան Գ. Ա., Պատասխան գրախոսին.- «ԲԵՀ», հմ. 3, 1973, էջ 272-275

3.49. Ղարիբյան Ալիկ, Շուշիի 1920 թ. կոտորածը.- «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան»։ Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, էջ 175-180

3.50. Ղուլյան Յուրիկ, Հայաստան-Աղբրեջան հարաբերությունների պատմությունից. 1918-1920 թթ., Երևան, 2009

3.51. Սելիք-Շահնազարյան Ջարեհ, Թուրքական ագրեսիան Ղարաբաղում Բաքվի կոմունայի անկումից հետո.- «Արցախ» հանդես, Ստեփանակերտ, 1990, հմ.հմ. 5-6, էջ 25-29

3.52. Միրզոյան Ս., Սարգսյան Կ., Անցյալ չկորուսյալ (Արցախ՝ փրկության ելքը. 1918-1920).- «Գարուն», 1991, հմ. 2

3.53. Միքայելյան Արսեն, Ղարաբաղի վերջին դեպքերը.- «Հայրենիք», Բոստոն, 1923, հմ. 7, էջ 156-167, հմ. 8, էջ 110-122, հմ. 9, էջ 115-121, հմ. 11, էջ 110-119, հմ. 12, էջ 118-127

3.54. Միքայելյան Վ., Հայաստանի Հանրապետությունը և Արցախյան հարցը 1918-1920 թթ.- «Լրաբեր ՀԳ», 1998, հմ. 1, էջ 3-8

3.55. Մկրտչյան Շ., Դավթյան Շ., Շուշի. Ողբերգական ճակատագրի քաղաքը, Երևան, 2008 (հայերեն, անգլերեն)

3.56. Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները. հատ. Բ, հատ. Է, Թեհրան, 1982

3.57. Պողոսյան Հ. Մ., Անդրանիկ զորավարի մի նամակը գեներալ Բագրատունուն.- «Մանկավարժ», 1990, հմ. 8, էջ 58-62

3.58. Պողոսյան Վ. Վ., Ողբերգական Շուշին (Շուշիի 1920 թ. մարտյան եղեռնի 90-ամյակի առթիվ).- «Աղբրեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ», 2010 թ. մարտի 21-24-ը Ստեփանակերտում և Շուշիում կայացած միջազգային գիտագործնական կոնֆերանսի զեկուցումներ: Խմբ.՝ Մ. Ա. Հարությունյանի: «Կաճառ» տարեգիրք, գիրք 4, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2010, էջ 188-194

3.59. Սարգսյան Ա., Լեռնային Ղարաբաղի պատմությունից (1918-1921 թթ.).- «Բանբեր Հայաստանի արխիվների», 1989, հմ. 3, էջ 63-104

3.60. Սարգսյան Արսեն, Հեղափոխական կրակների միջով, Երևան, 1967

3.61. Սարգսյան Ե. Ղ., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918 թթ., Երևան, 1964

3.62. Սարուր (Բիրս Սարոտ), Ղարաբաղի կցումը Աղբրեջանին.- «Հայրենիք», Բոստոն, 1929, Յունիս, հմ. 8, արտատպված է՝ «Դրօշակ», 1990, Մարտ, էջ 78-96

3.63. Սարուր (Բիրս Սարոտ), Ղարաբաղի կռիվների շուրջ.- «Հայրենիք», Բոստոն, 1934, հմ. 5

3.64. Սողոմոնյան Մ., Գ. Ա. Հովհաննիսյան, Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1971, 296 էջ.- «ԲԵՀ», հմ. 3, 1973, էջ 267-272

3.65. Սևյան Վ., Շուշի, Երևան, 1991

3.66. Սիմոնյան Ա. Հ., Ջանգեզուրի գոյամարտը 1919-1921 թթ., Երևան, 2000

3.67. Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատ-

մությունից, Երևան, 1991

3.68. Միմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Երևան, 1996

3.69. Սողոմոնյան Մ. Ս., Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում.- «ԲՀԱ», 1968, հմ. 1, էջ 113-128

3.70. Սողոմոնյան Մ. Ս., Լեռնային Ղարաբաղում թուրքական ինտերվենցիայի հարցի շուրջը (1918թ.).- «ԲՀԱ», 1972, հմ. 1, էջ 185-196

3.71. Ստեփանեան Յովակ, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմությունը.- «Հայրենիք», Բոստոն, 1935 (հմ.հմ. 3-7), հմ. 7, էջ 122-131

3.72. Վիրաբյան Ա., Բալիկյան Օ., Լեռնային Ղարաբաղի քաղաքական կարգավիճակի որոշման պատմությունից.- «Բանբեր Հայաստանի արխիվների», 1989, հմ. 2, էջ 68-78

3.73. Վիրաբյան Վ., Հայաստանը անդրկովկասյան հանրապետությունների 1920 թ. ապրիլի վեհաժողովում և ազգամիջյան փոխհարաբերությունները, Երևան, 1998

3.74. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993

3.75. Տեր-Գասպարյան Ռ. Հ., Շուշի քաղաքը, Երևան, 1993

3.76. Ուլուբաբյան Բ. Ա., Արցախյան գոյապայքարը, Երևան, 1994

3.77. Ուլուբաբյան Բ. Ա., Արցախի պատմությունը (սկզբից մինչև մեր օրերը), Երևան, 1994

3.78. Զաջազունի Հովհաննես, ՀՀ դաշնակցությունն անելիք չունի այլևս, Թիֆլիս, 1924

#### **բ) ռուսերեն**

3.79. Абрамян Г. Б., Из истории Карабахских событий (август 1919-июнь 1920 гг.).- «ВОН» Но: 8, 1990, с. 3-15

3.80. Арутюнян Ю. Ю., Некоторые сюжетные и тематические общности темы блокадного Ленинграда и разрушенного Шуши в русской поэзии.- «Ադրբեջանի պետական տպագրության հարցերի և էթնիկական գտնումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ», 2010 թ. մարտի 21-24-ը Ստեփանակերտում և Շուշիում կայացած միջազգային գիտագործնական կոնֆերանսի զեկուցումներ: Խմբ.՝ Մ. Ա. Հարությունյանի: «Կաճառ» տարեգիրք, գիրք 4, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2010, էջ 195-204

3.81. Барсегян Хикар, Истина дороже... К проблеме Нагорного Карабаха-Арцаха, Ереван, Изд-во АН АрмССР, 1989

3.82. Микаелян В. А., Хурцудян Л., Некоторые вопросы истории

Нагорного Карабаха.- «ВОН», Но: 4, 1988, с. 43-56

3.83. Мирзоян С., Чумный председатель никогда больше не будет господствовать в Карабахе.- «Армянский Вестник», Но: 1-2, 2001, с. 99-100

3.84. Мкртчян Ш., Давтян Ш., Шуши. город трагической судьбы. Ереван, 1997

3.85. Нагорный Карабах/ Историческая справка/. Ереван, Изд. АН АрмССР, 1988

3.86. Хзмалян Т. Э., «Фаэтонщик» - стихотворение О. Мандельштама о Нагорном Карабахе.- «ВЕУ», Но: 1, 1991, с. 89-92

3.87. Хурцудян Л., Истина — единственный критерий исторической науки. Ереван, 1989

#### **բ) անգլերեն**

3.88. Melik - Shahnazarow Zareh, Sketches of Karabakh soldier. Moskov, 1996

3.89. Hovannisian Richard, The Republik of Armenia. v. 1. The first year, 1918 - 1919. University of California press, Berkeley.Los Angeles.London, 1972

3.90. Hovannisian Richard, The Republik of Armenia. v. 3. From London to Sevres, February-August, 1920. University of California press, Berkeley.Los Angeles.London, 1996

### **4. ՊԱՐԲԵՐԱՎԱՆ ՍՄԱՌԸ**

#### **ա) հայերեն**

4.1. Արրահամյան Հրանտ, Հայոց Շուշին հրե բոցերի մեջ.- «ԼՂ Հանրապետություն», 1995 թ., հմ. 4 (35), հմ. 7(39)

4.2. Արրահամյան Հրանտ, Ինչու՞ Շուշին հանձնվեց թուրք զավթիչներին.- «ԼՂ Հանրապետություն», 3 դեկտեմբերի 1996 թ., հմ. 159

4.3. Արրահամյան Հրանտ, Թե ինչու Չորավար Անդրանիկը չմտավ Ղարաբաղ.- «ԼՂ Հանրապետություն», 10 սեպտեմբերի 1996 թ.

4.4. Արրահամյան Հրանտ, Իրադարձություններն Արցախում (1917-1923). Պատմության էջերից.- «ԼՂ Հանրապետություն», 3 հոկտեմբերի 1996 թ.

4.5. Արրահամյան Հրանտ, Մուսավաթական Ադրբեջանի հայաջինջ

քաղաքականությունը 1918-1920 թթ.-«ԼՂ Հանրապետություն», 17 դեկտեմբերի 1996 թ.

4.6. Աբրահամյան Հրանտ, Շուշին հրե բոցերի մեջ.- «ԼՂ Հանրապետություն», 1997 թ., հմ. 11

4.7. Աբրահամյան Հրանտ, Արցախի միացումը Հայաստանին (1920 թ. ապրիլի 25 - Ղարաբաղի հայության 9-րդ համագումար).- «ԼՂ Հանրապետություն», 3 հուլիսի 1997 թ.

4.8. Աբրահամյան Հրանտ, Պատմաբանի անփութությունը դատապարտելի երևույթ է.- «Ազատ Արցախ», 1998 թ., հմ. 102

4.9. Ահյան Մհեր, «Կոյր սեղան»՝ նվիրված Շուշիի մարտյան ողբերգության 91-րդ տարեդարձին, «Մարտիկ», 26 մարտ-2 ապրիլ, 2011թ.,12(926)

4.10. Ավագյան Սմբատ, Ղարաբաղ. փաստերի տրամաբանությունը (պարբերական մամուլի նյութերով).- «Երեկոյան Երևան», 4.12.1989 թ.

4.11. Ավագյան Սմբատ, Լեռնային Ղարաբաղի առաջին կառավարությունը (1918 թ.) [Պատմության էջերից].- «Երկիր», 28.05.1994 թ.

4.12. Բաղդասարյան Մուշեղ, Գազանաբար խոշտանգված թագուհին (Շուշիի 1920 թ. մարտյան եղեռնի 75-ամյակի առթիվ).- «ԼՂ Հանրապետություն», 1 ապրիլի 1995 թ.

4.13. Բալայան Վահրամ, Հայերի ցեղասպանությունը Ադրբեջանում 1905-1920 թթ.- «ԼՂ Հանրապետություն», 24 ապրիլի 1995 թ.

4.14. Ջատիկյան Հովհաննես, ՀՅԴ արցախյան գործունեությունը 1917-1920 թթ.- «Երկիր», 24 հունիսի 2000 թ.

4.15. Էվոյան Վլադիմիր, Արցախի ինքնապաշտպանությունը (1918-1920 թթ.).- «Կարմիր դրոշ», 26 մարտի 1989 թ.

4.16. Խաչատրյան Սվետլանա, Դասեր քաղել անցյալից.-«Ազատ Արցախ», 25 մարտի 2014 թ., հմ. 33

4.17. Խուրշուդյան Լենդրոշ, Ճշմարտությունը պատմագիտության միակ չափանիշն է.- «Խորհրդային Ղարաբաղ», 1989 թ., հմ.հմ. 212-214

4.18. Կարապետյան Համբարձում, Արցախ, 1918-1921 թթ. Դժվարին տարիներ.- «Երեկոյան Երևան», 27-28. 06, 1988 թ.

4.19. Հարությունյան Մհեր, Խորհրդածություն Շուշիի մեծ ողբերգության շուրջ.- «Ազատ Արցախ», 23.03.1999 թ., հմ. 33

4.20. Հարությունյան Մհեր, ... Թե ով է հանիրավի մեղադրանքի հեղինակ.- «Ազատ Արցախ», 24.08. 1999 թ., հմ. 99

4.21. Հարությունյան Մհեր, Շուշիի ողբերգության մի քանի պատ-

մաների մասին.- «Մարտիկ», 2000 թ., հմ. 12

4.22. Հարությունյան Մհեր, Արմենոցիդի քաղաքականության ուրացումը և ապստամբության առաապելը (Շուշիի մարտյան ողբերգության 85-րդ տարելիցի առթիվ).- «Ազատ Արցախ», 24 մարտի 2005, հմ. 34(1703), նույնը՝ «Մարտիկ», 19 – 26 մարտ 2005, հմ. 11(618)

4.23. Հարությունյան Մհեր, Արյունոտ պատմության վկաները և Ադրբեջանի իրավաքաղաքական պատասխանատվության անխուսափելիությունը[Շուշիի մարտյան ողբերգության 94-րդ տարելիցը].- «Ազատ Արցախ», 29 մարտի 2014 թ., հմ. 35

4.24. Հարությունյան Մհեր, Պետականորեն կազմակերպված ահաբեկչության հերթական գոհը (Շուշիի մարտյան ողբերգության 90-րդ տարելիցը).- «Մարտիկ», հմ. 10, 14-20 մարտ– հմ.11, 20-27 մարտ, 2010 թ.

4.25. Հովհաննիսյան Բագրատ, Շուշվա կոտորածը ակնաստեսի աչքերով.- «Ավանգարդ», 1990, հմ. 45

4.26. Ղազարյան Վալերի, Սի հանիրավի մեղադրանքի առթիվ.- «Ազատ Արցախ», 8.06. 1999 թ., հմ. 66

4.27. Ղազարյան Վալերի, Անցյալը պահանջում է հարգալիր և անաչառ մոտեցում.- «Ազատ Արցախ», հմ. 129, 2. 11. 1999 թ.

4.28. Ղարիբջանյան Գևորգ, Չորավար Անդրանիկը և Արցախը.- «Հայաստանի Հանրապետություն», 31 հոկտեմբերի 1997 թ.

4.29. Մուրացկանների քաղաքը և Ղարաբաղի համագումարը (անստորագիր).- «Նոր կեանք» (Սոց.-դեմ. խմբակի հաս. և քաղաք. օրգան), Շուշի, 27.02. 1919 թ., հմ. 5

4.30. Պատմում են արխիվային փաստաթղթերը.- «Խորհրդային Ղարաբաղ», 20 դեկտեմբերի 1989 թ.

4.31. Սարգսյան Գագիկ, Մուրադյան Պարույր, Հերթական արշավանք ի Հայս կամ թե ինչպես են նենգափոխում պատմությունը.- «Գրական թերթ», 1. 07. 1988 թ.

4.32. Տեր-Սարգսյան Միրզա (Միտասար), Լեռնային Ղարաբաղ.- «Ավանգարդ», 1991 թ., հմ.հմ. 34, 35

### **բ) ռուսերեն**

4.33. Абрамян Грант, Шуши, 23 марта 1920 г. .- «Голос Армении», 23 марта, 2010 г., но. 29

4.34. Арутюнян Мгер, Отступление от политики арменцида и миф о восстании /К годовщине мартовской трагедии в Шуши/.-

«Азат Арцах», 26 марта 2005, но. 20/489/

4.35. Газиян Алвард, ...Но в Карабахе воин не станет меньше – свидетелствуют письма убийц и мородеров после Шушинской резни 1920 г. (Письма публикуются впервые).- «Голос Армении», 30 марта 2004 г.

**Պարբերականներ**

**ա) հայերեն**

- «Անալիտիկոն», մարտ 2009, հմ. 3
- «Արցախ» հանդես, 1990, հմ.հմ. 5-6
- «Բանբեր Երևանի համալս. հաս. գիտ.», 1968, հմ. 3, 1973 հմ. 3, 1991 հմ. 1
- «Բանբեր Հայաստանի արխիվների», 1968, հմ. 1, 1972, հմ. 1,1986, հմ. 1, 1989, հմ. 2, 1989, հմ. 3
- «Գարուն», 1991, հմ. 2
- «Դրօշակ», 1990, Մարտ,1998, հմ. 14
- «Լրաբեր հասարակական գիտությունների», 1966, հմ. 3, 1988, հմ. 4, 1990, հմ. 8, 1998, հմ. 1, 1999, հմ. 1
- «Լրատու» (Գիտական հոդվածների ժողովածու), 2008, հմ. 1
- «Կաճառ» տարեգիրք, գիրք 4, 2010
- «Հայրենիք», 1923, հմ.հմ. 7-12, 1929, հմ. 8, 1934, հմ. 5,1935, հմ. 7
- «Մանկավարժ», 1990, հմ. 8, հմ. 11
- «Պատմաբանասիրական հանդես», 2005, հմ. 1
- «Քաղաքական գրուցակից», 1991, հմ. 2, հմ. 3

**բ) ռուսերեն**

«Армянский Вестник», 2001, но: 1-2

**ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ**

Աղբրեջանի պետական ահաբեկչության և էթնիկական զոտումների քաղաքականությունը ենթակա է դատապարտման.....5

1905-1906 թթ. բուրք-հայկական ընդհարումների պատճառների մասին.....10

Արմենոցիդի հետեվանքների վերացման հրամայականը. պատմաքաղաքական դասերը, արցախյան պատերազմի հաջողված փորձը..... 18

Շուշիի մարտյան ողբերգության պատմագրության հիմնահարցերը.....25

Շուշիի 1920 թ. մարտյան ողբերգության մի քանի պատճառների մասին.....37

Արմենոցիդի քաղաքականության ուրացումը եվ ապստամբության առասպելը.....46

Պատմագիտությունը դիվետանտություն չի հանդուրժում.....52

**ՀԱՎԵԼՎԱԾ**




Շուշիի մարտյան ողբերգության 90-րդ տարելիցը Պետականորեն կազմակերպված ահաբեկչության հերթական զոհը..60



Միջազգային գիտագործնական կոնֆերանս արցախում.....68



**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**



Շուշիի հայ բնակչության ջարդերի 91-րդ տարելիցի առթիվ «Կաճառ» գիտական կենտրոնում կազմակերպված «Կլոր սեղանի» մասնակիցների.....71




Օգտագործված գրականության ցանկ.....74











**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ. Ա.**

**ԱՆՑՅԱԼԸ ՄԵՉ ՀԵՏ Է.  
ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ,  
ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Խմբագիր՝  
Սրբագրիչ՝  
Համակարգչային շարվածքը՝  
Էջադրումը՝  
Կազմի ձևավորումը՝

*Վալերի Ավանեսյան  
Հրանուշ Ղուլյան  
Յուլիա Հարությունյանի  
Մարինա Ավանեսյանի  
Մերի Դրավյանի*

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84<sup>1/16</sup>,  
ծավալը՝ 6 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 250

Տպագրվել է «Գիզակ պլյուս» հրատարակչության տպարանում  
Ստեփանակերտ, Հ. Հակոբյան, 25

**ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ**

Էջ	տող	տպված է	պետք է լինի
8	ն. 4	մարմինների ուշադրությանը	մարմիններին
23	ն. 9	դատապարտյալ	դատապարտված
24	վ. 15	գորո-	գոր-
25	ն. 6	ամնատարբեր	ամենատարբեր
25	ծ. ն. 4	кратерий	критерий
28	ծ. վ. 10	անակումից	անկումից
33	վ. 2	ադրեջանական	ադրեջանական
33	վ. 8	կարող ենք հենվել ենք	կարող ենք հենվել
33	վ. 18	«Ապստամբության»	«ապստամբության»
34	վ. 15	վաղորոք	վաղորոք
34	վ. 18	ուշադրություն ենք	ուշադրությունն ենք
37	ն. 9	ադրեջանցիները	ադրեջանցիները
40	վ. 2	Շուշիում	Շուշիում
42	վ. 13	վերջանական	վերջական
47	վ. 5-6	մեղադրվել են հայերին ու Հա- յաստանի կառավարությանը	մեղադրվել հայերն ու Հա- յաստանի կառավարությունը
47	վ. 7-8	«ապստամբների»: Միաժամանակ ադրեջանական կողմը սպառնալիքներ էր կարդում	«ապստամբների», միաժամանակ սպառնալիքներ կարդալով
47	ծ. ն. 1	սույնգրքույկը, էջ 30	սույն գրքույկը, էջ 29-30
47	ծ. ն. 3	սույնգրքույկը	սույն գրքույկը
49	ն. 13	«Ապստամբության»	«ապստամբության»
50	վ. 3	արյուրոտ	արյունոտ
55	ն. 1, 3	«Շուշի...լուծում»	Շուշի...լուծում
59	ն. 1	գովալու	գովելու
60	ն. 11	անգոթորեն	անգոթորեն
61	վ. 14	պասիվ	պասսիվ
65	վ. 6	թուրք-ադրե-	թուրք-ադրե-
70	վ. 1	հիմնական	հիմնականում
70	ն. 13-14	նախագ- ահ	նախա- գահ
82	ն. 10	Խուրշուղյան Լենդրոշ	Խուրշուղյան Լենդրոշ
85	վ. 7	հետեվանքների	հետևանքների
85	վ. 8	արցախյան	Արցախյան
85	ն. 11	եվ	և
85	ն. 6	արցախում	Արցախում

*Հարությունյան Մ. Ա., Անցյալը մեզ հետ է. վերագնահատումներ, խորհրդածություններ,  
Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2015, 96 էջ*



